



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1559

22

7-30

1905

y-5

w 82

220

600-3

220

602-3

)

n

||

222.

5



ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

22
7-30

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ԳՐՈՑ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Ի ՊԵՏՍ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒ ՀԵԱՑ

Книжная выставка



1004
2561

Յ. Ա. Բ. Օ.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԱՆԵԼԵԱԼ ԵՒ ԸՆԴՈՐՁԱԿԵԱԼ

Թ Ի Ֆ Լ Ի Ձ

Ի ՏՊԱՐԱՆԻ Հ. ԷՆՏԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ :

1865

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ

31 Июня 1865 года. Тифлисъ.

2001

ԲԱՐԵԽՆԴԻՐ

ՏՓԽԻՍԱՅ ՏՈՀԾԱԿԱՆ ՊԱՏՈՒԱԻՈՐ

ՔԱՂԱՔԱՅԻՈՅ

ՅԱՐԳՈՅ ԲԱՂԴՍՍԱՐԱՅ ԱՐԵՏԻՔԻԱՆ

ԽՈՍՐՈՅԵԱՆՑ

Սրտեւանիկն Յարգանիօր



Յ. Ա. Բ. Օ.

11390

1917

RECEIVED

1917

RECEIVED

1917

RECEIVED

1917

RECEIVED
1917
U. S. DEPARTMENT OF AGRICULTURE
WASHINGTON, D. C.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն :

Ա Ս Տ Ո Խ Ա Ծ Ե Ի Ն Բ Ա Կ Ա Տ Ա Ր Ե Լ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ Ը :

1. Աշխարհքիս ստեղծագործութիւնը . . .
2. Աղամայ մեղքը
3. Մարդկանց վարքի ապականումը և ջրհեղեղը .
4. Բնական օրէնքը
5. Աշտարակաշինութիւնը
6. Աբրահամ նահապետը
7. Իսահակը և միւս նահապետները
8. Յովսէփը և նրա եղբարքը
9. Յովսէփը Եգիպտոսումը, նրա բանտ ընկնելը
և բանտից ազատելը
10. Յովսէփի մահը . Եգիպտոսի դերութիւնը :
11. Մովսէսի ծնունդը
12. Մովսէսի հրաշքները, զատիկը—պասքա
13. Իսրայէլացւոց կամիր ծովից անցկենալը և
անապատի ճամբորդութիւնը
14. Տասն պատուիրանքը
15. Աստուծոյ խոստմունքը Իսրայէլացւոց հետ :
16. Իսրայէլացւոց անհաւատարմութիւնը անա-
պատումը

17. Մովսեսի վերջին խօսքերը և մահը
18. Իսրայէլացւոց Քանանու երկիրը մանելը . . .
19. Դատաւորներ
20. Սամսոնի ծնունդը, նրա քաջութիւնները և մահը
21. Հեղի քահանայապետը, Սամուէլի ծնունդը .
22. Սամուէլը, Տապանակի դերութիւնը և Հեղի՝ քահանայապետի մահը
23. Սամուէլի զոհադործութիւնը . Փղշտացւոն յաղթելը և տապանակի հրաշքով ապաուիլը .
24. Սաւուղ Իսրայէլի առաջին թագաւորը . . .
25. Գողիադը և Դաւիթը
26. Դաւթի թագաւորութիւնը
27. Սբիսողոմի ապստամբութիւնը
28. Սողոմոնը Դաւթի որդին
29. Իսրայէլի տասը ցեղի բաժանումը . . .
30. Իսրայէլի թագաւորութեան կործանումը . .
31. Յուդայի թագաւորները
32. Եղիա և Եղիսէ մարգարէքը
33. Աքաաբի և Հեզաբէլի սպառիժը
34. Մարգարէքը և նրանց զուշակութիւնները .
35. Յովնան մարգարէն
36. Յուդիթը
37. Բաբելոնի դերութիւնը
38. Երեք մանկուկը


39. Դանիէլ մարգարէն
40. Դանիէլը առիւծների բերնումը
41. Եսթերը
42. Մուրթքէն և Համանը
43. Մուրթքէի հաւատարմութիւնը
44. Համանի մահը
45. Դանիէլի մարգարէութիւնը Մեսիայի դա-
լու համար
46. Հրէից գերութեան օգուտը
47. Հրէից ազգի գերութեան վախճանը
48. Եկեղեցական և քաղաքական կարգադրու-
թիւնները
49. Յուդայի քահանայապետութիւնը
50. Մաղաքիա Մարգարէն
51. Յուդայի ժողովուրդը Նզիպտոսի թագաւոր-
ների իշխանութեան տակը
52. Հրէայք Ասորւոց թագաւորների իշխանու-
թեան տակը :
53. Անտիոքոս Եպիփանոս և Մակաբայեցիք :
54. Յուդայի մարտիրոսները :
55. Եօթն եղբարք և նրանց մայր Ծամունէն :
56. Մատաթիա՝ նրա քաջութիւնը և նրա որդիքը :
57. Յուդայ Մակաբէն և Հրէից ազգի ազա-
տութիւնը :
58. Յովնաթան Յուդայի որդին :

59. Իսրայէլացիք Հռովմայեցւոց իշխանութեան
տակը :

60. Մսիայի գալու յոյսը :

61. Մարիամ կուսի ճնունդը :

62. Մարիամ կուսի ընծայումը տաճարին :



Արարչագործութիւն

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՆՐԱ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Էս տուներ, որի մէջ մենք բնակուեմք, կարելի է ասել թէ շինած է՛նք. նմանապէս մեր ընդհանուր բնակարանը — երկիրը, որի վրայ կանք և ապրուեմք, կարելի է ասել թէ շինած — ստեղծած է՛նք: Այո՛, մարդկութեան էս ընդհանուր տուներ կամ բնակարանը շինած — ստեղծած է: Բայց ո՞վ է ստեղծել. — յայտնի է որ սրա ստեղծողը սրանից առաջ կար. նա սկիզբը է՛ունի, նմանապէս և վերջ. ուրեմն նա անսկիզբն և անվախճան է: Էս անսկիզբ և անվախճան ստեղծողը մարմին է՛ունի. նա Հոգի է. նա ամէն տեղ է, ամէն բանը տեսնում է և ամէն բանը գիտէ: Բայց մենք նրան է՛նք տեսնում, պատճառ որ՝ նա աներևոյթ և պարզ Հոգի է:

Թեև մենք Աստուծոն չենք տեսնում, բայց ճանաչուեմք նրան իրա գործքերից. նա անվախճան և անսկիզբն, ամենուրեք, ամենատես, և ա-

Մենազէտ է : Նրա գործքերը էնպէս մեծ են և
անչափ զարմանալի, որ մարդուս միտքը կարող
չէ հասնել, պատճառոր՝ Աստուած միայն կարող
է անել էն, ինչ որ մարդս կարող չէ անել :

Օրինակ . մէկ մարդ եթէ մէկին լաւութիւն
է անում, նրան ասումենք բարի . իսկ անչափ
լաւութիւն անողին ասումենք ամենաբարի : Ես
ամենաբարի Աստուածը հաղորդել է իրա ամէն
բարութիւնը մարդուս, որն որ ուրիշը կարող չ'է :
Նա ամենաբարի լինելով ատումէ չարը և սի-
բումէ բարին : Նա ով որ միշտ ատումէ չարը,
սուրբ է, ուրեմն Աստուած ամենասուրբ է :

Ահա՛ նա, որին ասումենք Աստուած՝ է պարզ
Հոգի և յաւիտենական, անսկիւզն և անվախ-
ճան, աներևոյթ և ամենակարող, ամենխմաստ,
ամենաբարի և ամենասուրբ :


Ապա ուրեմն թէև մենք չ'ենք իմանում Աստու-
ինչութիւնը, բայց տեսնելով նրա գործքերը՝ ճա-
նաչումենք նրա գերազանց և ամենակատար յառ-
կութիւնները : Բայց մարդս ի՞նչպէս կարող է ճա-
նաչել Աստուծուն նրա գործքերից : Մարդս շատ
անգամ կը սխալուի իր ուղիղ ճանաչման մէջ,
նա կը մոլորուի ինչպէս կռապաշաները : Մար-
դուս գիտութիւնը բաւական չ'էր իսկապէս Աստ-
ծուն ճանաչելու, եթէ նրան առաջնորդ չը լի-

նէր Աստուծու յայտնութիւնը: Եւ էսպէս Աստուած ինքը յայտնեց մեզ ամէնը, նրա յայտնութիւնից ճանաչումենք և հաւատում մէկ Աստուած երեք անձնաւորութեան մէջ կամ ամենասուրբ Երրորդութիւն — Հայր, Արդի և Հոգի:

Յայտնի բան է, որ էս խորհուրդը մարդս խելքով և մտքով կարող չէ՛ քննել և իմանալ, բայց միայն Աստուածային յայտնութիւնով: Միայն կարելի է էս քանը օրինակ բերել մարդուս հոգին, որ ինքը մէկ անմարմին գոյութիւն է, բայց իր մէջ յատկութիւններ ունի՝ միտք և կամք: Միտքը միշտ ծնւում, հոգուց և կամքը բղխում: Բայց երկուսն էլ հոգւոյ մէջ են և հոգուց անբաժան:

Մանապէս արեգակը, որ միշտ լուսաւորում է և տաքացնում, լոյսը և տաքութիւնը անդադար դուսեն գալիս արեգակից: Երբոր արեգակը երևում է, իսկոյն լուս է և տաք. երբ ծածկւում է արեգակը կամ մէր է մտնում՝ խաւար է և ցուրտ: Էսպէս արեգակը միշտ մէկ է, բայց նրանից ծնւում է լոյսը և բղխում է տաքութիւնը, որն որ արեգակի մէջն են և անկարելի է նրանից բաժանել, էնպէս էլ մէկ Հօր Աստուծանից անդադար ծնւում է Արդին անբաժանաբար և միշտ բղխում է Հոգին Սուրբ:

Ս, հա էս երեքանձնեայ Աստուածը, որին մենք
հաւատում ենք, պատճառ որ՝ նա ինքը յայտ-
նեց մեզ, Նա ինքը մշտնջենական, ամենուրեք,
ամենակարող, ամենաբարի և ամենասուրբ Հոգին
ստեղծեց աշխարհքը—երկինքը և երկիրը և նը-
րանց միջի բոլոր՝ թէ երևելի և թէ աներևոյթ
արարածները :



Մասն ա.

1. Ա Շ Ի Ա Ր Հ Գ Ի Ս Ս Տ Ե Ղ Ծ Ա Գ Ո Ր Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

ԾՆՆ. Ա. Բ.

Աստուած ստեղծեց երկինքը և երկիրը և նը-
րանց միջի ամէն երևելի ու աներևոյթ արարած-
ները. մէկ խօսքով բոլոր աշխարհքս: Եւ այն
ոչնչից իրա ամենակարող բանիւն, իր անչափ բա-
րութիւնը հաղորդելու բոլոր արարածներին և ի-
րա ամենակարողութիւնը և փառքը ցոյց տալու
համար: Եւ ոչ յանկարծ, այլ կարգով, վեց օրուամբ:

Առաջին օրը՝ ստեղծեց լոյսը. երկրորդ օրը՝
երկնքի կամարը, որ հաստատութիւն կոչուեցաւ:
Երրորդ օրը՝ ջուրը ցամաքից բաժանեց և դետ-
նից ամենատեսակ խոտեր, ծառեր և տունկեր
բուսցրուց: Չորրորդ օրը՝ արեգակը, լուսինը
և աստղերը. Հինգերորդ օրը՝ ծովի ձկները և
օդի թռչունները. Աւերորդ օրը՝ անբան կենդա-
նիքը և յետոյ առանձին մարդու ստեղծեց,
որ բոլոր ստեղծւածներին աէր և հրամայող լինի,
Եօթներորդ օրը՝ հանգստացաւ, այսինքն դադա-
րեցաւ նոր նոր բաներ ստեղծելուց:

Աստուած մարդու ստեղծելուց ինքն իրան


խորհուրդ արաւ և ասաց «Մարդուս մեր պատ-
կերի նման ստեղծենք» : Էն ժամանակը վեր առաւ
գետնից հողը և նրանից շինեց նրա մարմինը և
փչեց նրան իր շունչը և էս փչելով ստեղծեց ան-
մահ հոգին և էն մարմնոյ հետ միացրեց և մար-
դըս էրաւ հոգի կենդանի : Էս բանական հոգին
Աստու պատկերն է ու նմանութիւնը և Աստ-
ծու պէս ճանաչողութիւն և կամք ունի , որով
կարող է ճանաչել Աստուան և սիրել . պատճառ
որ Աստուած ամենապարզ Հոգի է և անչափ բարի :

Աստուած մարդուս ստեղծելուց յետոյ նմա-
նապէս ստեղծեց կնոջը , որ ընկեր լինի մարդուն .
մէկ թմբութիւն գձեց մարդու վրայ և նրա կող-
քից ստեղծեց կնոջը , որ մարդ ու կին մէկ մէ-
կու կատարելապէս սիրեն և մի սսին ապրին և
լինին ինչպէս մէկ մարմին : Էն ժամանակը
հաստատեց Աստուած ամուսնութիւնը . երբ օրհ-
նեց մարդուն և կնոջը և ասաց . « Աճեցէք և բազ-
մացարուք և լցրէք երկիրը » Տէր ըլէք և հրա-
մայեցէք գաղաններին , ձկներին և թռչուններին » :
Եւ նրանց ամէն տեսակ պտուղներ տւաւ ուտե-
լու : Էս առաջին մարդու անունը դրաւ Ադամ
և առաջին կնոջը Եւայ :

Աստուած նրանց դրաւ դրախտի մէջ , որ գե-
ղեցիկ պարտէզ էր ամենայն տեսակ ծառերով ,

արտուղներով և ծաղիկներով զարդարած. էս Գլխա-
 թախտի մէջից չորս գետ էր բղխում. անունները
 Երասխ, Տիգրիս, Գեհոմն և Փիսոմն: որոնք ջը-
 րումէին և կանանչ էին պահում Գրախտը: Աղամ
 և Եւայ մերկ էին և չէին ամաչում, պատճառ
 որ ոչինչ էնպէս վատ բան չէին զգում իրանց
 մէջ և անմեղ էին: Ամենեւին ոչինչ բանի կարօ-
 տութիւն չ'ունէին. հիւանդութիւն չէին զգում
 և պիտի չը մեռնէին: Աստուած հրամայեց նը-
 րանց ամէն ծառի պտղիցը ուտել, բայց չարի և
 բարւոյ գիտութեան ծառից չ'ուտել: Նրանք Աստ-
 ծու հետ հաղորդակցութիւն ունէին և երջա-
 նիկ կեանք էին վարում:

Աստուած երկրի ամէն արարածներից առաջ
 ստեղծեց անմարմին հրեշտակներին, որ պարզ
 հոգիք են: Նրանց բնութիւնը գերազանց է մարդ-
 կային բնութիւնից:



2. Ա Դ Ս Մ Ա Յ Մ Ե Դ Բ Ը

Ծնն. Գ.

Աստուած իր ճշմարտութեան և շնորհքի մէջ
 էր ստեղծել Հրեշտակներին, բայց նրանցից մէկ
 դասը չը մնաց նոյն շնորհքի մէջ, և Աստու-
 կամաց հակառակ մեծամտեցաւ և կամեցաւ նրա


հետ հաւասարել : Աստուած էլ չը ներեց նրանց մեծամտութեանը և դձեց նրանց անդունդը և էնտեղ Աստուծու երեսից յաւիտեան զրկւած տանջումեն յաւիտենական կրակով : Դե, որ ասումենք, էն դատապարտւած հրեշտակներն են, և որովհետեւ միշտ փորձանքի մէջ են դձու՛մ մարդուն, էն պատճառաւ սատանայ էլ կոչւեցան :

Սատանէքը չար են և նախանձոտ . նրանք նախանձելով Ադամի և Եւայի երջանկութեանը դրախտի մէջ, մէկը նրանցից օձի կերպարանքով մօտեցաւ. Եւային և ասաց . «ինչի՞ համար Աստուած չը թողաւ ձեզ, որ էս Գրախտի մէջ ամենայն ծառի պտուղները ուտէք» : Եւան ասաց . ո՛չ—Աստուած հրամայեց մեզ ամէն ծառի պտուղից ուտել, որ էս Գրախտումն է, բայց չարի և բարւոյ դիտութեան ծառի պտուղից չ'ուտել և չը մօտենալ նրան, եթէ ո՛չ՝ կը մեռնիք : (Չ'էք մեռնի ասաց օձը. այլ դիտէր Աստուած թէ երբոր ուտէք, իսկոյն աչքներդ կը բացւին և Աստուծոնման կը լինիք և կը հասկանաք բարին ու չարը) : Եւէն շուտով հաւանեց օձի խօսքը և տեսնելով ծառի պտուղի գեղեցկութիւնը, վեր առաւ, կերաւ և Ադամին էլ տաւ և կերան միասին : Յանկարծ բացւեցան նրանց աչքերը, սատանի անօթ զգացին, պատճառ որ տկոր (մերկ) էին և անսա-

չեցան : Նուառով թուղե տերևներով ծածկեցին ի-
րանց մերկութիւնը : — Այնուհետեւ շփոթ ընկաւ
նրանց հողու և մարմնու մէջ և մարմինը սկսաւ
էլ չը հնազանդուել հողուն :

Յետոյ Աստուծու ձայնը լսեցին, սաստիկ վախե-
ցան և թաք կացան : Ին ժամանակը ասաց Աս-
տուած. « Աղամ, ո՞ւր ես : Մերկ էի և թաք կա-
ցայ, պատասխան տուաւ Աղամը : « Ձը լինի՞ թէ
կերար արդէլած ծառի պտղեց » : Աստուած ասաց
Աղամին : Նա էլ թէ. « Էս կինս տուաւ ինձ և
կերայ » և կինը թէ օձն խաբեց և կերայ : Ին
ժամանակը Աստուած անիծեց օձին և ասաց, « հող
ուտես քու կեանքումդ . փորի վրայ մանդաս և
յաւիտենական թշնամութիւն կը դնեմ քու և
կնոջ մէջ և էն կնկանից կը ծնի մէկը . որ քու
զլուխը ջարդի » — այսինքն թէ մէկ օր աշխարհի
Փրկիչ պիտի դայ և սատանայի իշխանութիւնը
քանդի » — Անոջը ասաց. « ցաւով ծնիս որդի . քու-
մարդը տիրի քեզ » : Աղամին ասաց. « երեսիդ քրք-
տինքով ուտես քու հացը և աշխատանքով անց-
կացնես քու կեանքդ . հող էիր, և էլի հող դառ-
նաս » : Յետոյ Արախտից դուս արաւ նրանց և Քե-
րորէի դասից մէկին դրաւ հրեղէն սրով Արախտի
ճանապարհը պահել, որ Աղամ և Եւէն ներա-
ջը մանեն :

Աղամ և Եւա կորցրին իրանց սրբութիւնը ի սկզբնական անմեղութիւնը, որի մէջ ստեղծած էին ընկան Ստոծու բարկութեան տակ, և դերի էլան սատանային, զըկեցան հողեոր և մարմնաւոր պարզւներից, աղքատութիւնը, հիւանդութիւնը և մահը իշխեց նրանց վրայ: Տղիտութիւնը, ցանկութիւնը, այսինքն բնութեան ուզած հեշտութիւնները տիրեցին նրանց և Ստոծու պատկերն ու նմանութիւնը կորցնել տւին. և բողոքովին հեռացան Ստոծանից:



3. ՄԱՐԴԿԱՆՅ ՎԱՐՔԻ ԱՊԱԿԱՆՈՒՄԸ, ԵՒ ԶՐՀԵՂԵՂԸ:

ԾՆՆ. Դ. Զ. Է. Ը.

Աղամ և Եւայ մեղանշնուց յետոյ իրանց որդիքը ծնան նոյն ապականութիւնումը և մեղքի մէջ, և նրանցից էլ անցկացաւ բոլոր մարդկային սերունդի վրայ: Էս բարոյական հիւանդութիւնը—մեղքը՝ կոչեցաւ սկզբնական կամ Աղամայ մեղք:

Աղամ և Եւայ աւելին երկու որդի՝ Աային և Աբէլ: Աայէնը չար և նախանձուս էր, իսկ Աբէլը բարի և արդար: սրանցից առաջինը պարսպում էր հողագործութիւնով, իսկ երկրորդը խաշնարած էր: Մէկ անգամ սրանք երկուսը պատա-

րազ բերին Աստուծոն, Կայէնը երկրի պտղից իսկ
 Աբէլը իրա ոչխարներից ընտիրը: Աստուած, որ
 քննումէ և գիտէ ամենայն մարդու սիրտը՝ Աբէ-
 լի պատարագը ընդունեց, իսկ Կայենինը ոչ: Կա-
 յէն նախանձեղով սպանեց իր եղբորը: Ասաց Աս-
 տուած Կայենին, եղբորդ արիւնը իմ առաջևս
 արդար դատաստան է պահանջում: Կայէնն էլ
 ինքն իրան մահապարտ համարեց, Բայց Աստուած
 արդեւեց ինքն իրան սպանելը, որ չը շատանան մար-
 դասպանները երկրիս վրայ: Աբէլից յետոյ Ադամ
 ունէր ուրիշ մէկ որդի, անունը Սէթ: Սրանից
 առաջ եկած զաւակները (սերունդները) բարե-
 պաշտ էին և Աստուածավախ: Բայց երբ որ սը-
 րանց սերունդները խառնուեցան Կայենի սերուն-
 դի հետ, նրանք էլ ապականուեցան, վատացան և
 սկսան ճշմարիտ ճանապարհից դուս գալ և խաղ-
 ճի և խելքի դէմ անչափ մեծ չարութիւններ
 գործել, մինչև որ Աստուած վճռեց ընդհանուր
 ջրհեղեղով ամէնին կործանել: Բայց կային Սե-
 թայ ցեղից արդար մարդիկ, ինչպէս էր Նոյվքը,
 որ իր արդարութիւնով երկինքը վերացաւ, նախ-
 նապէս Նոյ նահապետը, Սեթայ ցեղից արդար
 դանուեցաւ Աստուծու առջևը:

Աստուած հրամայեց Նոյին մէկ տասան չի-
 նել—լայն և քառակուսի նաւ ծածկած սուն-

դու կի նման: և դրսից ու ներսից ճիւթով ծեփած, որի մէջ մանեն ամէն տեսակ կենդանիքից և թռչուններից մէկ մէկ ջուխտ անսուբբից և եօթը եօթը ջուխտ սուբբ կենդանիքից:

Նոյի տապան շինելը հարիւր տարի միջոց քաշեց, և էդ քան տարւայ միջոցումը քարոզում էր մարդկերանց, որ ապաշխարեն և թէ Աստուած ջըհեղեղով պիտի պատժի, բայց նրանք չէին հաւատում: Երբոր եկաւ հասաւ ժամանակը, Աստուած հրամայեց Նոյին, որ ինքը, իր կինը, իր երեք որդիքը իրանց կնիտերանցով և ամէն կենդանիքից և թռչուններից, սուբբերից եօթը եօթը, անսուբբերից երկու երկու ջուխտ արու և էդ մանեն տապանը: Եւ երբ որ մասն ամենքը, սկսաւ երկնքից մէկ սարսափելի անձրև պառասունն օր և քառասուն զիշեր, ծովերը և վտակները բոլոր երկիրը ծածկեցին և ջուրը բարձրացաւ լեռներից մինչև տասնուհինգ կանգուն բարձր: Բոլոր մարդիկ և կենդանիքը խեղդւեցան, միայն կենդանի մնացին Նոյ և նրա ընտանիքը ընդ ամէնը ութը հոգի:

Տապանը օրինակ էր սուբբ եկեղեցուն, ուր միայն իրա մէջ սակաւ լնատուածները կարող են փրկուել, և միւս բոլոր մարդիկը, որոնք եկեղեցուց դուրս են կը կորչին իրանց չարութեան համար:

Հեղեղեց յետոյ, երբ ջուրը սկսաւ քիչ քիչ
 ցածրանալ և լեռներն դիտին հասնել, տապանը
 նստեց Արարատ լեռան վրայ: Եւ երբ ջուրը բո-
 լորովին ցամաքեցաւ, Նոյ դուրս եկաւ տապանից
 և խնայն էն սուրբ կենդանիքից սրտարագ բե-
 րաւ Ասածուն և Աստուած էլ խոստացաւ, որ
 էնպէս ջրհեղեղ չը լինի միւսանգամ:

Եւ հրամայեց որ տարւայ կղանակները իրանց
 կարգը պահեն, — Գարունը, Ամառը, Աշունը և
 Ձմեռը: Եւ օրհնեց Աստուած Նոյին և նրա որդ-
 ւոցը՝ որ շատանան. նմանապէս թոյլ տուաւ կեն-
 դանիքը մորթել ուտել, բայց արգելեց մարդաս-
 պանու թիւնը, ով որ մարդու արիւն թափի, իր
 արիւնն էլ թափւի, որովհետեւ ես մարդուն իմ
 սրտկերի նման եմ ստեղծել ասաց Աստուած:

Նոյի որդիքը սրանք են — Սեմ, Գամ և Յա-
 բելթ: Սրանցից նորմէկանց աշխարհքս սկսաւ
 բազմանալ. բայց մարդկային բնութիւնը ջրհե-
 ղեղեց յետոյ շատ տկարացաւ, առաջ, որ շատ
 երկար էին ապրուէ՛ք. քիչ քիչ կեանքները պակ-
 սեցաւ. և իրանք էլ առաջւանից աւելի վատ
 սկսան չարանալ: Եւ երբ որ անչափ շատացան
 մարդիկ՝ էլ միասին չէին կարողանում բնակել,
 սկսան դէս ու դէն բաժնուել և տեղերն էլ բաժ-
 նել իրանց մէջ, որ ամէնքն էլ իրանց սեփհա-

կան տեղ ունենան : Էստուրից առաջ եկաւ ա-
զահու թիւնը , գողութիւնը , պատերազմը և դե-
րութիւնը : Ամէնքն էլ ուզումէին իրանց կամքը
կատարել , ուտել , խմել և իրանց զգայական հեշ-
տութիւններով փափկանալ , արհամարհել իրանց
ճնողաց և ծերերին : Աստու տեղ արարածներ
էին պաշտում — Արեգակ , Առսին և ուրիշ ե-
րևելի արարածներ . և Էստուրից սկսաւ կռայաշ-
տութիւնը :

✠ ԹԵՆ ԹԵՆ ✠

4 ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ :

Էն ամէն անկարգութիւնները , որ անում էին
նրանք , ընդդէմ էր խղճմանքին , խելքին և
էն բնական լուսին , որ ներսից ցոյց էր տալիս և
խնայ էր անում նրանց բարին և չարը և որով
իրանց սրաներումը զգում էին և խրատում թէ
պէտք է միայն իրանց ստեղծողին ճանաչեն և պաշ-
տեն և ոչ թէ արարածներին կամ իրանց հա-
ւատարին կամ փոքրին , որին իրանց սիրտը հա-
ւանում է : Եւ թէ պէտք է պատեն իրանց հօրը
և մօրը , ամուսնական օրէնքը մաքուր պահեն ,
մէկ մէկու մնաս չը տան , ոչ անձին , ոչ ապ-
րանքին և ոչ պատւոյն . միշտ ճշմարիտ խօսին ,
զայն իրանց ցանկութիւնները : Էս բնական լոյսը
կամ էզ մօքի ճանաչողական զօրութիւնը — խղճ-

մտանքը, որ Աստուած ամէն մարդու սրտումը տարաւորել էր հենց ստեղծած ժամանակից, սուրացնում է մարդուն էս ճշմարտութիւնները և սրանց նման պարտաւորութիւնները և ահա էս է, որ կոչում է բնական օրէնք :

Ամէն ժամանակ գտնւում էին սուրբ մարդիկ, որ իրանք իրանց պահպանում էին էս օրէնքները • ինչպէս Յորը, որ աշխարհքումս մեծ օրինակ է համբերութեան, և Մելքիսեդեկ՝ օրինակ Քրիստոսի • և և ուրիշները :

+•••••+

Ա. Շ Տ Ա. Բ Ա. Կ Ա. Շ Ի Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը •

ՅՆՆ. ԺԱ.

Նոյի սերունդը իբրև մէկ ազգ մէկ լեզու էին խօսում : Եւ երբ անչափ շատացան՝ դէս ու դէն բնական տեղերի համար, և երբ որ Սենաարայ բնագարծակ դաշտը տեսան՝ կամեցան իրանց կարողութիւնը ցոյց տալ և յաւիտեան յիշատակ թողնել՝ աշխարհքումս իրանց որդւոց և սերնդոց համար : Խօսք կապեցին էնտեղ՝ որ քաղաքի պէս մեծ աշտարակ շինեն, որի բարձրութիւնը հասնէր մինչև երկինքը : Աստուած իմացաւ նրանց չար խորհուրդը և յանկարծ խառնակեց

նրանց լեզուն և էլ մէկ մէկու չը հասկանալով
 մէջները շփով ընկաւ և սկսան դէս ու դէն ցրելի:
 Էն տեղը առաջ կոչուամ էր Սենաար, յետոյ եբ-
 րայեցւոց լեզուով Բաբելոն ասեցաւ, որ նշանա-
 կուամ է Հայերէն խառնակութիւն:

+օօօօօ+

Յ. ԱԲՐԱՀԱՄ Ե ԱՀԱՊԵՏԸ.

ԾՆՆ. ԺԲ. ԺԷ. ԻԱ. ԻԲ. ԺԴ.


Աշխարհքս քանի դնայ վատացաւ և շատ
 քիչ օքսին մնաց Աստուած ճանաչող և բնական
 օրէնքին հետևող. և էն էլ Սեմայ ցեղից մի քա-
 նիար, մինչև որ Աստուած էն ցեղից ընտրեց Աբ-
 րահամին և նրա հետ ուխտ դրաւ, որ միշտ էս
 աշխարհքիս վրայ ճշմարտութիւն ճանաչող դան-
 լի և բարեգործութիւն գործելի: Էս պատճառաւ
 Աստուած հրամայեց Աբրահամին որ թողնի իր
 հօրը և մօրը և իր հայրենիքը և դնայ ֆանա-
 նու երկիրը: Խոստացաւ նրան՝ թէ նրանից էն-
 պէս մէկ ժողովուրդ դուս կը դայ, որ երկնքի
 աստղերի պէս և ծովի աւազի պէս թիւ չ'ունե-
 նայ: Եւ թէ նրա ցեղովը կ'օրհնելին աշխարհքիս
 բոլոր ազգերը: Որ նշանակուամ էր՝ թէ նրա ցե-
 ղից պիտի ծնէր աշխարհքիս Փրկիչը: Աբրահամ

խտակ սրտով հաւատաց Աստուծու եւ Աստուած էլ օրհնեց նրան, շատ փորձանքներից ազատեց, շատ հարստացրեց և շատ անգամ նրա հետնոր նոր իր խոստմունքը հաստատեց, որ նրանից մեծ ազգ կը լինի և կը ժառանգի քանանու երկիրը: Եւ իբր դիպա Աստուած դառնալու նշան՝ հրամայեց, որ ինքը և իրա ցեղը թլփատւին:

Աբրահամ միշտ հաստատուն պահելով իր հաւատքը՝ հարիւր տարեկան էր, որ Աստուած մէկ որդի տւաւ նրան Սարրայ կնկանից, որ ամուլ էր և ծեր, Իսահակ անունով • ցոյց տալով նրան, որ իր խոստմունքը Իսահակի վրայ պէտք է կատարուի և ոչ թէ Իսմայէլի վրայ, որ իր աղախնից էր ծնած: Երբ որ Իսահակը չափահաս էլաւ, Աստուած Աբրահամի հաւատքը փորձելու համար, հրամայեց, որ էն իրա միակ որդին մատաղ բերի իրան: Իսկոյն հնազանդւեցաւ Աբրահամը, բայց մորթելու ժամանակը՝ Աստուած հրեշտակի ձեռքով արգելեց, ցոյց տալով թէ միայն նրա հնազանդութիւնը ուզեց փորձել և էստուրով նոր մէկանց հաստատեց իրա խոստմունքները:

Աբրահամու ժամանակն էր Մելքիսեդեկ Սաղմայ թագաւորը, որի հայրը ու մայրը յայտնի չ'են, միայն գիտենք, որ Աստուած քահանայ էր: Մէկ անգամ Աբրահամ չորս թագաւորներին

յաղթելով, երբ պատերազմից եղ էր դառնում,
 Մեղքիսեղեկը դէմ եկաւ նրան, օրհնեց և նրա
 համար հաց ու գինի ընծայ բերաւ Աստուծոյ :
 Էս Մեղքիսեղեկը աշխարհքիս Փրկչի օրինակն էր,
 էնդուր համար օրհնեց Աբրահամին, որպէս թէ
 Փրկչից օրհնեց նրան, թէպէտև ինքը աշխարհ-
 քիս Փրկչից Աբրահամի ցեղից պիտի ծնւէր :



7. ԻՍԱՀԱԿ ԵՒ ՄԻԻՍ—ՆԱՀԱՊԵՏՆԵՐԸ:

Ծնն. ԻԵ. ԻԷ. ԻԸ. ԻԹ.

Իսահակը շատ խաղաղ: բարի և ազնիւ կեանք
 էր վարում: Նա ունէր երկու որդի երկւորեակ
 (Չխտակ) եղբարք, Եսաւ և Յակոբ անուն: Աս-
 տուած սիրեց Յակոբին և ընտրեց իր համար,
 բայց Եսաւը, որ չարասիրտ էր՝ մնաց անէծքի տակ
 ինչպէս միւս աղամորդիքը: Յակոբը, որ հաւա-
 տարիմ, հեզ, բարի և համբերող էր՝ ժառան-
 գեց իր հօր Իսահակի օրհնութիւնը, որի վրայ
 հիմնւած էր Աստու խոստմունքը: Իսահակը
 ուղում էր Եսաւին տալ իր օրհնութիւնը, բայց
 Յակոբը մէկ ուրիշ հնաշքով ինքն առաւ: Եւ
 թէպէտ առաջին անգամ խաբւեցաւ նա, բայց
 յետոյ հաստատեց Յակոբին տւած օրհնութիւնը,
 պատճառ որ հասկացաւ, թէ Աստու կա՛նքը էն-



պէս է: Յակոբը ամուսնացաւ և ունէր տասներկու որդի, որոնք կոչոււմ էին Նահապետ, Ռուբէն, Շամառն, Ղևիթ Յուդա, Իսաքար, Զաբուլոն, Գան, Նեփթալիմ, Գադ, Ասեր, Յովսէփ և Բենիամին: Նամնապէս նահապետ են կոչոււմ բնական օրէնքի ժամանակ էլած ամէն երևելի և սուրբ մարդիկը, ինչպէս Ադամ, Սբէլ, Սեթ, Ենովք, Նոյ, Աբրահամ և այլն: Ատուած Յակոբին էլ խոստացաւ իր նախածնողներին հետ արած խոստմունքը, և անունը Իսրայէլ դրաւ:



Յ. ՅՈՂ. ՍԵՓ ԵՒ ԻՐ ԵՂ. ԲԱՐՔԸ.

ՅՆՆ. 1. Է.


Յովսէփը, որ շատ գեղեցիկ, հեղ, և բարի տղայ էր, շատ սիրական էր հօրը: Եղբարքը նախանձեցան և սկսան ատել նրան: Աւելի էն ժամանակը անից, երբ նրանց պատմեց իր տեսած երկու երազը: «Մէկ անգամ ասաց նա, իբր թէ մեր դաշտումը հնձում էինք մեր արտը և խուրձ էինք կապում: Իմ խուրձս կանգնեցաւ ուղիղ, իսկ ձեր խուրձերը ամէնքը եկան և դուխ տւին իմ խուրձիս»: Ելի մէկ անգամ ասաց նա, իբր թէ արեգակը, լուսինը և տասնու մէկ աստղ ինձ երկրպագութիւն էին տալիս»: Յակոբը, էս որ լուսեց, բարկացաւ նրա վրայ և ասաց. մի՞թէ

եա , իմ կինս և քու եղբարքդ կը գանք մէկ ժամանակ և երկրպագութիւն կը տանք քեզ : Բայց հայրը ինքն իրան ասում էր՝ երևի թէ Աստուած պատրաստումէ Յովսէփին մէկ երևելի գործի համար :

Մէկ օր Յակոբը ուղարկեց Յովսէփին դաշտը իր եղբարց մօտ , որ տեղ արածացնում էին իրանց ոչխարները նրանցից մէկ լուր բերելու՝ թէ ողջ են նրանք : Եղբարքը հեռուից որ տեսան , ահա , ասացին , գալիս է երազատեսը . արի՛ք սպանենք սրան և մեր հօրն ասենք թէ չար գազանը կերաւ : Ռուբէն մեծ եղբայրը որ լսեց , սարսափեց և սկաւ ասել . « մի՛ սպանէք դրան . մի՛ թափէք դրա անմեղ արիւնը , մի՛ շողաղէք դրա արեան մէջ ձեր ձեռքը » : Հանեցին Յովսէփի ծաղկեայ շորը և գձեցին նրան հորը և իրանք նստեցան ճաշի , բայց Ռուբէնը չը կարաց նստել նրանց հետ , այլ դնաց մտածումէր մէկ հնարք գտնել Յովսէփին ազատելու : Երբ սրանք հաց էին ուտում , տեսան Խամայելացի վաճառականներին , որ դնում էին Եգիպտոս : Խորհուրդ արին և վըճուեցին ծախել էն վաճառականներին քսան արծաթով : Ռուբէն երբ եկաւ , տեսաւ որ հորումը չ'է , շատ նեղացաւ : Յետոյ եղբարքը վեր առան նրա շորը ուլի արիւնումը թաթխեցին և ուղար-



կեցին հօրը : «Էս շորը դասակարգված է թէ ոչ» : Հայրը, որ տեսնելու շորերը և երկար սուգ արաւ :



Գ. ՅՈՎԱԿԻՄՅԱՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄԸ, ՆՐԱ ԲԱՆՏԸՆԿԵԼԸ
 ԵՒ ԲԱՆՏԻՑ ԱԶԱՏԻԵԼԸ.
 ԵՆՆ. ԼԹ. Խ. ԽԱ. ԽԲ. ԽԸ.

Էն վաճառականները Յովսէփին աւրան Եղիպատոս և ծախեցին Պետափրէին, Փարաւօնի դահլիճապետին : Սա տեսնելով Յովսէփի հաւատարմութիւնը և բարի վարքը՝ կարգեց նրան իր տան վերակացու և բոլորը յանձնեց նրան. և Աստուած յաջողում էր Յովսէփին ամէն բանումը : Պետափրէի կիները զըպարտելով չարախօսեց իր մարդու մօտ և բանտը դձել աւաւ Յովսէփին, բայց Աստուած յաջողում էր Յովսէփին ամէն բանումը և Աստուած միշտ պաշտպան է անմեղութեան : Բանդապետը շատ սիրեց Յովսէփին և բանտումը կարգեց իրան օգնական : Էն օրերումը բանտն էին դձած Փարաւօնի մատակարարը և տակառապետը : Նրանք երազ էին տեսել. Յովսէփը մեկնեց նրանց երազը : Երեք օրից յետոյ տակառապետը կարգեցաւ իր պաշտօնումը, իսկ մատակարարը կախուեցաւ փայտից, ինչպէս որ Յովսէփը մեկնել

էր, բայց տակառապետը մոռացաւ Յովսէփին :

Անց կացաւ երկու տարի, յետոյ Փարաւօնը երազ տեսաւ և ոչ ոք նրա երազը չը կարաց մեկնել: Տակառապետը միտը բերաւ Յովսէփին, բանտից հանեցին նրան և նա մեկնեց Փարաւօնի երազը—եօթն տարւայ առատութիւնը և եօթն տարւայ սովը: Յովսէփը կարգւեցաւ Նզխատոսի թագաւորի երկրորդ և բոլոր թագաւորութեան կառավարիչ: Երբ սովի տարիքը սկսան, ամենայն կողմից դալիս էին Նզխատոս ցորէն առնելու: Եկան և Յովսէփի եղբարքը, բայց սկիզբը անձանօթ ցոյց տւաւ իրան և խիտտ վարւեցաւ, փորձելով խօսացրեց նրանց և ամէն բանը խնայաւ, յետոյ հրամայեց ցորէն տալ նրանց և ճանապարհ դնել. իսկ Շմաւօնին պահեց և ապսպրեց, եթէ դուք ճշմարիտ մարդիկ էք, միւսանդամ դալուց ձեր փոքր եղբօրն էլ ձեր հետ բերէք:

Սովը շարունակուամ էր Քանանու երկրումը. Յովսէփի եղբարքը ստիպւած կրկին գնացին Նզխատոս փոքր եղբայր Բենիամինը իրանց հետ: Յովսէփը կրկին փորձելով էլ չը կարաց իրան պահել, յանկարծ սկսաւ ձէն տալ, ես եմ ձեր եղբայր Յովսէփը, որ ծախեցիք ինձ: Մի վախենաք, Աստուած Նզխատոսի տէր կարգեց ինձ: Ներեց նրանց և համբուրեց և ապսպրեց հօրը և

բողոքին անով տեղով մինչև եօթանասուն հոգի
բերել տաւ Եզիպտոս : Յակորբ տասնեօթը տա-
րի ապրեցաւ Եզիպտոսումը և հարիւր քառաս-
ուն եօթը տարեկան էր , որ մեռաւ : Մեռնե-
լու ժամանակը Յովսէփի որդւոց Եփրեմին և Բե-
նիամինին և իր որդւոց ամենին օրհնեց , և մար-
գարէանալով ասաց՝ ինչ երևելի բան որ պիտի լի-
նէր վերջի ժամանակը նրանցից ծնած որդիերանց
մէջ . եւ Յուդային ասաց՝ թէ նրա ցեղը երկար
ժամանակ պիտի տիրի եղբարց , մինչև որ գայ
աշխարհիս Փրկիչը . էս ասելով հասկացրեց՝ թէ
նա , որ պիտի գայ աշխարհք՝ Աբրահամի Իսա-
հակի և Յակորբի որդւոց Յուդայի անից պիտի լինի :

+ 3363 +

10. ՅՈՎՍԷՓԻ ՄԱՀԸ, ԵԳԻՊՏՈՍԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ:

Ծնն. ԽԹ. ԵԼԻԳ, Ա.

Յակորբի մահից յետոյ Յովսէփի եղբարքը վա-
խենում էին նրանից : Նա սիրտ տաւ նրանց և
ասաց . մի վախենաք , Աստուած ձեր շարու թիւնը
բարու թիւն փոխարկեց . ես ձեզ միշտ պաշտպան
կը լինիմ , Յովսէփը մեռնելուց առաջ , կանչե-
կը եղբարցը և ասաց . ահա ես մեռնումեմ , բայց
Աստուած ձեզ եզ կը դարձնի իր խոստացած եր-
կիրը : Դուք կտակ արէք ձեր որդւոց և թողնե-
լին , որ իմ ոսկորներս իրանց հետ տանեն : Յով-

սէփը հարիւր տասը տարեկան էր, որ մեռաւ:

Իսրայէլացիք համարեա թէ վաթսուն տարի հանգիստ էին ապրում և օր քան զօր անչափ զօրանում էին և բազմանում:

Եզրիպտոսի թագաւորը, որ չէր ճանաչում Յովսէփին, վախեցաւ նրանցից և սկսաւ սատարիկ տանջել Իսրայէլացւոց և նրանց արու զաւակները նեղոս գետը գծել:

† ❦ ❦ ❦ †

11. ՄՈՒԼՍԷՍԻ ԾՆՈՒՆԴԸ. — ԵԳԻՊՏՈՍԻՑ ՓԱԽՉԵԼԸ ԵՒ ՍՍՏԾՈՒ ԵՐԵՒԻԼԸ ՆՐԱՆ ԳՈՐԵԲ ՍԱՐՈՒՄԸ:


Ելից Բ.

Ղ և իի ցեղեց Ամրամի կինը ծնաւ արու զաւակ, շատ սիրուն և զուարթ. մայրը երեք ամիս թաքցրեց, վերջը անձարացած, կարածիւթով սրած կողովի մէջ դրաւ և գծեց գետը: Փարաւօնի դուստրը իր նաժիշտներով ման էր գալիս գետի ափը՝ տեսաւ մէկ բան ջրի երեսին խաղալիս, իսկոյն հանել տաւ և երեսին ծծմօրը յանձնելով մեծացրեց և իրան որդեգիր վեր առաւ անունը դնելով Մովսէս — ջրից հանած: Մովսէսը Եզրիպտացւոց արւեստները սովրեց և երբ քառասուն տարեկան դարաւ տեսնելով իր ազգի չարչարանքը, հայրենի սիրով վառւած մէկ Եզրիպտացի սպանեց որ չարչարու մը մէկ շրէի:

Միւս օրը երկու իսրայելացւոց մէկմէկու հետ կը
 ռիւք տեսնելով՝ կամենում էր հաշտեցնել նը-
 րանց. նա, որ զըկում էր իր ընկերոջը, բարկա-
 ցած Մովսէսի վրայ՝ ասաց. «ով կարգեց քեզ մեզ
 վրայ դատաւոր. ինձ է՞լ ես ուզում սպանել
 երեկւայ Եզիպտացու պէս »: Էս լսելով՝ Մովսէսը
 փախաւ Փարաւօնի ձեռքից Մադիամու երկիրը և
 էնտեղ ամուսնացաւ նրանց քուրմի Յոթորի աղ-
 ջկայ հետ :

Երբ Մովսէս Քորեբ սարի մօտ ոչխարներ էր
 արածացնում, յանկարծ տեսաւ մէկ մօրենի վառ-
 ւած, բայց չէր էրևում: Մովսէսը առաջ գնաց
 և ուզումէր տեսնել, թէ ի՞նչ է, բայց մօրե-
 նիից ձէն եկաւ՝ թէ « մի՛ մօտենա, էդ տեղը,
 որ դու կանգնած ես՝ սուրբ է »: Էս եմ Աս-
 տուած որ էն: Տեսայ իսրայելի չարչարանքը եզիպ-
 տոսումը. եկայ ազատել նրանց գերութիւնից.
 Գնա՛ Փարաւօնի մօտ, դ՛ուս բեր իմ ժողովուր-
 դիս Եզիպտոսից »: Մովսէսը յանձն չէր առնում,
 բայց վերջը հնազանդեցաւ Աստծու հրամանին,
 Աստուած էլ ուժ և կարողութիւն տւաւ նրան
 մեծ մեծ հրաշքներ գործելու: Էս գերութիւնը
 օրինակ էր մեր մեղքի գերութեանը, ևրբոր մարդ-
 կային բնութիւնը գերի դարձած ազաղակում էր,
 Աստուած էլ իրա գութը շարժելով մարդկու-

Թեան վրայ, պէտք է ուղարկէր աշխարհքիս
Փրկիչը:



13. Մ Ո Վ Ս Է Ս Ի Հ Ր Ա Շ Ք Ն Ե Ր Ը, Զ Ս Տ Ի Կ Ը — Պ Ս Ս Ի Ք Ա:

Ե Լ Ե Ը Թ Ժ Ժ Բ

Մովսէս իր եղբոր Ահարոնի հետ դնաց փա-
րաւօն թագաւորի մօտ առաջ և ասաց. Աստ-
ուած հրամայեց, որ արձակես իմ ժողովրդին,
Փարաւօնը պատասխան տուաւ. Ես չեմ ձանա-
չում ձեր Աստուծուն և ոչ էլ կ'արձակեմ ժողո-
վուրդին: Մովսէսն էլ Փարաւօնի սիրտը մեղմա-
ցնելու համար սկսաւ. մեծ մեծ հրաշքներ անել.
Նա գձեց իրա գաւազանը նրա առաջը և խկոյն
օձ դարաւ և կուլ տուեց նրանց օձերին. նա իր
ձեռը ցոյց տուեց խոցոտած և էլի խկոյն ողջացած.
Երբ Փարաւօն դետի ափը ման էր գալիս, Մով-
սէս խփեց գաւազանը և դետի ջուրը արիւն
փոխեց: Անթիւ գորտերով լքցրեց բոլոր Եգիպ-
տոսի երկիրը և մինչև թագաւորի պալատն էլ.
Աստուած բոլոր Եգիպտոսը լքեց մունով,
մթեղներով և շանաձանձերով և շատ մար-
դիկ և անասուններ կտորուեցան: Փարաւօնը
նեղացած խոտապաւ արձակել ժողովուրդին, բայց
յետոյ խօսքից ետ կացաւ: Հրաշքով կտորուե-

ցան Եզիպտաւոց անասունները, մարդիկ լքցւեցան խոյով և ուռցքներով: Արահախառն կարկուտ եկաւ երկնքից և սաստիկ քամին լքցրեց Եզիպտոսը մոխրով: Փարաւօնը մեղայ եկաւ Մովսէսին և խոստացաւ արձակել ժողովուրդին, բայց էլի չըմնաց իր խօսքին: Մովսէսը ձեռք բարձրացրեց դիպա երկինքը և երեք օր թանձր խաւարով մթնացրեց բոլոր Եզիպտոսը:

Էս հրաշքներից յետոյ, որ օրը որ Իսրայելացիք պէտք է դուս գային Եզիպտոսից՝ Աստուած հրամայեց Մովսէսին, որ առաջին օրը ամէն Հրեայ տան գլուխ մէկ մէկ գառը առնեն և իրիկնապահը մատաղ անեն, սաղ սաղ խոռվեն և էն գիշերը ձեռաց ոտի վրայ ուտեն: Բայց առաջ մորթելու ժամանակո նրանց արիւնից ամէն տան դռների ճակատի վրայ քսեն: Էս մատաղ ուտելը Չատիկ—Պասքա կոչւեցաւ. այսինքն՝ ելք, ճամբորդութիւն կամ անցք. և հրամայեց, որ Իսրայելացիք ամենայն տարի կատարեն էն ծէսը իրանց ազատութիւնը յիշելու համար: Էն գիշերը՝ երբ Իսրայելացիք կատարեցին էն Չատիկը, մէկ հրեշտակ եկաւ և կոտորեց Եզիպտացւոց բոլոր առջնիկները Փարաւօնի որդուց սկսած մինչև յետինը: Բայց հրեշտակը չըմտաւ էն աները, որոնց դռների վրայ էն գառնի արիւնով

նշան էր դրած : Կս առջնիկների մահը հնապէս
 վախացրեց Փարաւօնին և Եգիպտացւոցը, որ
 որ չը լուսացած ինքը Փարաւօնը և ամէնքը ստի-
 պու մէին Խորայեւացւոց դուս գնալ շուտով հե-
 աանալ Եգիպտոսից իրանց բոլոր հարստութիւ-
 նով : Խորայեւացիք կիսաթխած հացը ձեռներին
 շտապով դուս եկան Եգիպտոսից, բայց չըմոռա-
 ցան իրանց հետ տանել և Յովսէփի ոսկերքը :
 Յակոր եօթանասուն և հինգ հողով մտաւ Ե-
 գիպտոս, բայց նրա սերունդը երկու հարիւր ու
 ասան և հինգ տարումը վեց հարիւր հազար
 հողի էլան ամէնը, բացի երեխերանց և կնկտե-
 րանց, երբոր Մովսէս դուս բերաւ նրանց Եգիպ-
 տոսից :

Էս անցքերը խորհրդաւոր էին գառն օրի-
 նակ էր Փրկչին, որ մեկ օր պիտի դար և պա-
 տարապ բերեր իրան և մասապ լինէր մարդկու-
 թեան փրկութեան համար, իրա արիւնը թա-
 փելով փրկէր նրանց և իրա մարմինն էլ կերա-
 կուր պիտի լինէր հաւատացելոց :

ՅԵ ԻՍՐԱՅԷԼՍՅԻՈՅ ԿԱՐՄԻՐ ԾՈՎԻՑ ԱՆՑԿԵՆԱԼԸ ԵՒ ԱՆՊԱՏԻ ՃԱՄԲՈՐԳՈՒԹԻՒՆԸ :

ԵԼ. . ԺԳ. ԺԶ. ԺԷ.

Երբ Խորայէլացիք հասան կամիր ծովի մօտ, Փարաւօնի միտքը փոխւեցաւ և մեծ զօրքով դուս զնաց նրանց ետևից : Երբ Եզիպտացիք մօտեցան Խորայէլացւոց բանակին, ամպէ սիւնը կայեց նրանց առաջը և սաստիկ մթնացաւ էն գիշերը : Մովսէս խփեց զաւազանը ծովին և ծովը երկու բաժնւեցաւ, երկու կողմից էլ պատի պէս կանգնացրեց և էն գիշերը Խորայէլացիք անցկացան միջից : Միւս առաւօտը Փարաւօնը տեսաւ Խորայէլացւոց կարմիր ծովից անցկացած ցամաքի վրայ ինքն էլ մտաւ կառքերով ծովի մէջ : Մովսէս կրկին զաւազանը խփեց և ծովը միանալով ծածկեց բոլոր Եզիպտացւոց և ամէնքը խեղդւեցան : Աստուած իրա ժողովուրդին էսպիսի մեծ հրաշքով Եզիպտոսից դուս բերելով կամեցաւ ցոյց տալ թէ ինքն է ամէն արարածների ամենակարող Տէրը և թէ անպատիժ չ'են մնում իրա կամքին հակառակողները : Կս ճամբորդութեան մէջ Աստուած ցոյց տւեց նրանց իրա նախախնամութիւնը և բարութիւնը, անցկացրեց նրանց մեծ անապատի միջից, որ փորձի նրանց հաւատարմութիւնը և համբերութիւն սովրացնի և խմա-

ցրնի՝ թէ առանց Աստուծու օգնութեան չեն կարող ապրել: Նրանց առաջնորդ տաւ մի սիւնածեւ ամս, որ ցերեկը շուաք էր անուամբ արեգակի տաքութեան դէմ և գիշերը կրակի պէս երևումէր և լոյս էր տալիս: Էս ճամբորդութեան մէջ Աստուած կերակրումէր նրանց մանանայով, որ երկրնքից էր վեր դալիս ցողի պէս, պնդանումէր և նրանից հաց էին շինում, երբ միս էին ուտում, լօրամարդի էր տալիս նրանց: Երբ ջուրը պակասումէր, Մովսէս դառը ջուրը քաղցրացնումէր և ապառաժ քարից գաւազանը խփելով ջուր էր հանում նրանց համար: Մէկ խօսքով. Աստուած իր անչափ գութը և սէլը էս ճամբորդութիւնումը անդադար հաղորդումէր նրանց, բայց նրանք ապերախտ գտնւեցան և շատ անգամ սկսան տրտնջալ Աստուծո հակառակ, ցաւումէին Եգիպտոսից դուս գնալու համար. Եգիպտոսի սոխն ու սխտորը միտը բերելով էրնէկ էին տալիս, և սոխի ու սխտորի համար նորմէկանց կարօտում էին Եգիպտոսի գերութեանը, և շատ անգամ Մովսէսի վրայ քաշումէին որ սպանեն:

Իսրայէլացւոց էս ճամբորդութիւնը օրինակ է մեր անցկացրած կեանքի էս աշխարհքումս, որ տեղ որ Աստուած կրթումէ մեզ փորձութիւններով և սքանչելի երկայնամտութիւնով համբեր-

ու մէջ մեր ապերախտութեան և անհնազանդութեանը, և չէ՛ք թողնում, որ մեր կամքը կատարուի :

14. ՏԱՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ :

Ե Լ . Ժ Թ . Ի .

Երբ Իսրայէլացիք Սինայ լեռը հասան, Աստուած հրամայեց հաւաքել էնանց, որ նրանց պատւիրանքներ տայ : Յովսէս ասաց ժողուրդին, որ լուայէին, իստակէին և սարին մօտ չը դնան : Եղիպտոսից դուս եկած գիշերւան նրանց արած Չատկի յիաներորդ օրը՝ տեսան Սինայ սարը, որ վառւումէր, սև ամպերով ծածկած, փայլակներ և սաստիկ որոտմունքների, զուռցի և փողի ձէն էր լուում, բայց բան չէր երևում : Ին ժամանակը ամպի միջից մէկ սարսափելի ձէն էլ դուս եկաւ, որ ասումէր .

Ա . Ես եմ քու աէր Աստուածը, որ Եղիպտոսից հանեցի քեզ, չը լինի թէ ուրիշ աստուածներ ունենաս բացի ինձանից :

Բ . Կուռք չը շինես, ո՛չ երկնքի և ո՛չ երկրի արարածների նման և նրանց երկրպագութիւն չը տաս և չը պաշտես :

Գ . Քու Տէր Աստուած անուէր ունայն բաների վրայ չը յիշես, կա՛ր բերան չ՛ըբերես :

Դ . Սուրբ պահիր շաբաթ օրը . վեց օր կա-

տարի՛ր քու մարմնաւոր գործքերդ, իսկ եօթնե-
րորդ օրը Աստուծուն ընծայիր, պատճառ որ Աստ-
ուած վեցօրումը ստեղծեց երկինքը և երկիրը, եօթ-
ներորդ օրը դադարեցաւ, օրհնեց և սրբեց էնօրը:

Ե . Պատուիր հօրդ և մօրդ, որ դուն էլ եր-
կար կեանք ունենաս էս աշխարհքումս և բարի
լինի քեզ:

Զ . Մարդ չքապանենս:

Է . Շնութիւն չ'անենս .

Ը . Գողութիւն չ'անես .

Թ . Սուտ չը վկայես և սուտ չը խօսիս ըն-
կերոջդ վրայ:

Ժ . Չը ցանկանաս քու ընկերոջդ կնոջը, նրա
տանը, և էն ամէն բանին, ինչ որ քու ընկերոջը
լինի: —

Աստուած էս պատուիրանքները երկու տախ-
տակի պէս տաշած քարի վրայ դրած տւաւ
Մովսէսին:

Թէպէտ էս օրէնքները նոր չ'էին, այլ ամե-
նայն մարդու սրտի մէջ հէնց ծնած ժամանակը
տպաւորած էր Աստծանից, բայց որովհետև մարդ-
կային տգիտութիւնը և չարութիւնը համարեալ
թէ բոլորովին մոռացնել էին տալիս մարդուն,
էնտուր համար Աստուած կամեցաւ նորոգել և
հաստատել էս բնական օրէնքները դրով էլ:

15 ԱՍՏԾՈՒ ԻՈՍՏՄՈՒՆՔԸ ԻՍՐԱՅԷԼԱՅԻՈՑ ՀԵՏ:

ԵԿ • ԻԱ • ԻԴ • ԻԵ • ԻԶ • ԻԷ • ԻԸ:

Աստուած էլի շատ օրէնքներ տուաւ Մովսէսին Իսրայէլացւոց գործքերը և մէծերը քննելու և դատելու նրանց յանցանքները և պատիժները կարգի ու կանոնի տակ դձելու համար: Նմանապէս նրանց վարքը ուղղելու կանոններ դրաւ: Աստուած պաշտութեան համար էլ զանազան արարողութիւններ հաստատեց: Բայց շարաթ օրը երեք մեծ տօներ կարգեց Իսրայէլացւոց պատուիրելով, որ էն երեք օրը ներկայ գանւին Աստծու առաջը:

Ա. Զատիկը՝ էն օրը հրամայեց մէկ զառը մատաղ անել և բաղարջ հացով ուտել և էնպէս Եգիպտոսից դուս գալու յիշատակը կատարել:

Բ. Պենտէկոստէն՝ զատկից յետոյ յիսներորդ օրը, որ օրը որ տուաւ նրանց պատուիրանքները: Պենտէկոստէի օրը Աստծուն ընծայ էին բերում երկրի պտուղներից:

Գ. Տաղաւարաց տօնը՝ անապատի ճամբորդութիւնը յիշելու համար:

Մովսէս Աստծու հրամանով բոլոր պատուիրանքները պրումէր և միշտ կարդումէր ժողովը դեան առաջ՝ կրկնելով նրանց Աստծու խոստմունքը, Բանանու երկիրը տալու և նրանց հա-

բըստացնելու համար, եթէ կը պահեն նրա պա-
տուիրանքները: Ժողովուրդն էլ խոստացաւ պա-
հել: Մովսէս զոհի արիւնը վեր առաւ և սրսկեց
ժողովրդեան վրայ, ասելով էս է ձեր հետ արած
Աստու ուխտի արիւնը: Եւ էսպէս հաստատե-
ցաւ և նորոգեցաւ էն խոստմունքը, որ Աբրա-
համու հետ էր արել: Էս նշան էր էն ամենա-
կատար ուխտին՝ որ վերջի ժամանակը պիտի ա-
նէր, և շող տուած արիւնը ցոյց էր տալիս
Փրկչի արիւնը:

Արանից յետոյ Մովսէս նորմէկանց զնաց սարը
և էնտեղ քառասուն օր ուշացաւ և Աստու
հետ խօսելով հրաման առաւ ուխտի տապանակը
շիւել և վկայութեան խորանը: Տապանակը մէկ
աղնիւ փայտից շինած արկղ էր՝ դրսից ուներսից
ոսկէջրած, վրէն երկու քերոբէք քաշած, որ ի-
րանց թւերով ծածկած ունէին տապանակը և
էն Աստու տուած օրէնքների երկու քարեղէն
աախտակը նրանումն էին պահում: Ակայութեան
խորանն էլ մէկ փառաւոր վրան էր, որի մէջ
զնումէին ուխտի տապանակը և մէկ ոսկէ աշ-
տանակ՝ եօթը ճրագակալներով շինած. մէկ սե-
ղան առաջաւորաց հացի, այսինքն՝ էն սեղանը,
որի վրայ հաց պիտի գնէր միշտ Աստու ա-
ռաջ և խունկ մատուցանելու մէկ փոքրիկ սե-
ղան. սրանք ամենն էլ ոսկէջրած էին:

Վ կայութեան խորանի դռանը առաջին զոհ
անելու սեղանն էր դնում: Ահարոն և իր որ-
դիքը նշանակեաճէին էն զոհերը կատարելու:
Նմանապէս Աստուած հրամայեց Մովսէսին՝ որ
իրանց համար առանձին շորեր կարեն պատուա-
կան զարդարանքներով, և թէ միայն Ահարոնի
ցեղից լինեն քահանայք և նրանք միայն կատա-
րեն էն արարողութիւնները: — Միւս մնացած
ղեկայ ցեղն էլ բոլորը նուիրեաճ լինեն Աստուծոն
և օգնեն քահանայից նրանց զոհագործութեան
ժամանակը:

Վ կայութեան խորանը որպէս թէ շարժական
առձար՝ մէկ աղօթատուն էր և Աստուածային
խոստման նշան, եւ որպէս թէ իսրայէլացւոց
ճամբորդութիւնումը Աստուած ինքը նոյն ժո-
ղովրդեան մէջ է:

Տապանակը մէկ հատ էր, նմանապէս քա-
հանայապետը մէկ էր: Էստուրով հասկացնելու
համար թէ՛ մէկ է Աստուածը, մէկ է եկեղեցին,
մէկ հաւատք և մէկ օրէնք:

16 ԻՄՐԱՅԷԼՍԵՒՈՅ ԱՆՀԱՒԱ ՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ ԱՆԱՊԱՏՈՒՄԸ:

Ել • 1.6 • Թոց • ԺԳ • ԺԴ • ԺԷ • Ի • ԻԱ •

Երբ որ Մովսէս ասրումը Աստուծո հետ խո-
սում էր, իսրայէլացիք յուսահատուած կարծու-

մէին թէ էլ պէտք է չը տեսնեն նրան, ոսկէ հորթ շինեցին և սկսան նրա առաջ մատաղ անել և պաշտել նրան, և շուտով մոռացան իրանց խոստմունքը: Աստուած կամենումէր ջնջել նրանց, բայց Մովսէսը երեսի վրայ ընկած աղաչումէր Աստուծուն. ըսեց Աստուած նրա աղաչանքը և ներեց նրանց: Մովսէսը չէր իմանում թէ ի՞նչ է պատահել ցածումը ժողովուրդին, երբ սարից ցած եկաւ տեսաւ կուռքը, էն երկու քարէ տախտակները՝ որ Աստուած օրէնքները վրէն գրած տւելէր նրան, սաստիկ բարկացած գետնին խփեց և փշրեց, նմանապէս էն կուռքը ջարդեց և նրան պաշտողներին էլ մինչև երեք հազար հոգի կոտորել տւաւ: Յետոյ նորմէկանց գնաց սարը և քառասուն օր ծում պահեց: Եւ երբ սարից ցած եկաւ կրկին շինած օրէնքի երկու քարէ տախտակը ձեռքին, երեսը էնպէս պայծառացել էր, որ էլ չէր կարելի նրա երեսին մտիկ տալ և էս պատճառաւ նրանից յետոյ քող էր դնում երեսին ժողովուրդի հետ խօսելու ժամանակը:

Աստուած կամեցաւ էս թուլասիրտ և կամակոր ժողովուրդի սիրտը մեղմացնելու համար ծանր և դժուար պատուիրանքներ դնել նրանց վրայ. զոր օրինակ միայն մի քանի տեսակ անասուններից մատաղ անել, արգելեց նրանց տեսակ

տեսակ կերակուրներ ուտել, սաստիկ արդելեց
խնամութիւն անել հեթանոսների հետ, մա-
նաւանդ Քանանու ցեղի հետ, կամ ուրիշ տե-
սակ կապակցութիւն անել: Էս ամէնը շատ շա-
հաւէտ էին նրանց վարքը ուղղելու, կեանքը ա-
ռողջ պահելու և ուրիշ բարեկարգութիւններ
հաստատելու համար:

Երբ Աւետեաց երկիրը հասնելու ժամանակը
մտապել էր, ժողովուրդը վատ համբաւ լսելով
Մովսէսի ուղարկած լրատաներից, որոնք ուղարկած
էին անտղելու, թէ երկիրը և թէ բնակիչները,
էնպէս վախեցան զնալ մտնել էն երկիրը, որ մինչև
անգամ Մովսէսին ուզումէին քարկոծել և Նդիպո-
տոս եղ զառնալ էին մտածում: Աստուած ուզու-
մէր ոչնչացնել նրանց, թէպէտ Մովսէսը աղաչեց
և Աստուած էլ ներեց նրանց, բայց պատժեց
էնդուրով, որ անապատումը քառասուն տարի
դէս ու դէն ընկնելով պանդխտութիւնումը մեռ-
նեն Նդիպոտոսից դուս եկողները բոլորը և իրանն
որդիքը միայն մտնեն և ժառանգեն Աւետեաց
երկիրը: Բայց հրամայեց, որ Յետուն և Բաղէքը
կենդանի մնան և մտնեն Աւետեաց երկիրը, պատ-
ճառ որ նրանք հաւատարիմ էլան Աստծուն:
Մէկ անգամ էլ անապատումը երեք իշխաններ՝
Կորխը՝ Ղևիի ցեղից, Դադան և Սբիրոն՝ Ռուբենի

ցեղից մեծ շիտթ գձեցին Մովսէսի և Ահարոնի
 դէմ և սրանցից երկուքն գետինը պատուեցաւ
 ցած տարաւ տնով տեղով, իսկ Կորխը կրակով էր-
 ւեցաւ, երբ բուրվաւը ձեռին Ահարոնի հետ
 վիճումէր քահանայութեան համար և ուղու-
 մէր Աստուծոն խունկ մտտուցանել: Էս ապտամ-
 բութեան պատճառաւ մինչև տասնուհինգ հա-
 ջար հոգի ջնջուցան:

Քահանայութեան իրաւունքի վէճը դադրե-
 ցնելու համար, Աստու հրամանով տասներկու
 ցեղի ծերերի գաւաղանք Մովսէս վեր առաւ,
 ամէն ցեղի անունը վրէն գրել առաւ և դրաւ
 վկայութեան խորանումը ևասաց՝ որի գաւաղա-
 նը որ ծաղկի նա է Աստու ընտրածը: միւս
 օրը տեսան Ահարոնի գաւաղանք ծաղկած: Մով-
 սէսը պահեց էս գաւաղանք տապանակի մէջ և
 կարգադրեց, որ Ահարոն և նրա որդիքը ծառա-
 յեն խորանումը, միւս Ղևտացիք խորանից դուս-
 կատարեն իրանց պաշտօնը, իսկ մնացածները
 դրսից Ղևտացւոց ծառայեն:

Միւս անգամ էլ սկսան սատիկ տրտնջալ
 ջրի պակասութեան համար. Աստու հրամանով
 Ահարոնը քարից ջուր հանեց և խմեցին ամէնքը:
 Նրանց նոր անշնորհակալութեան համար՝ Աստ-
 ւած պատժեց նրանց թունաւոր օձերով, միայն

բժշկու մէջին նրանք, որոնք կարանու մէջին մտիկ տալ
 պղնձից շինած օձին, որ Մովսէս ձողի վրայ բար-
 ձրը կախ էր արեւ Աստու հրամանով: Էն օձը,
 փայտի վրայ կախ տւած, նշան էր Քրիստոսին,
 և ով որ կը հաւատայ մեզ համար խաչուած
 Յիսուսի Քրիստոսին, կ'ազատուի մեղքից և սա-
 տանայի իշխանութենից:

Իսրայէլացիք էլի կատակցութիւն արին Մա-
 դիանացւոց կանանց հետ, և նրանց կուռքերը
 պաշտեցին, Աստուած էլ պատժեց նրանց և քա-
 ռասուն ու չորս հազար հոգի ոչնչացրեց: Է՛ք
 ժողովուրդը էս տեսակ ապերախտութիւններ
 արաւ Աստու զէմ, որոնց միշտ մեղքը դալով,
 խնամք էր տանում և հաստատ էր պահում իր
 տւած խոստմունքը:

Արանից յետոյ շուտով մեռաւ Ահարօնը:

17. ՄՈՎՍԷՍԻ ՎԵՐՁԻՆ ԽՕՍՔԵՐԸ ԵՒ ՄԱՀԸ:

ԵՐԿ • ՕՐ • Ե • ԻԳ • ԻԹ • ԼԳ:

Մովսէս առաջնորդելով իսրայէլացւոց՝ տարաւ
 մինչև խոստացած երկիրը, բայց ինքը չը կարաց
 մտնել, միայն հեռուից տեսաւ: Մտնելուց ա-
 ռաջ երկար խրատ տւաւ ժողովուրդին, կրկնել
 տւաւ իրանց խոստմունքը, որ Եզիպտոսից դուս
 դալուց առաջ խոստացել էին հաւատարիմ մնալ:
 Միտը զձեց նրանց՝ թի, Աստուած ամէն ազգի

միջից նրանց է ընտրել և իրան յատուկ սիրելի
 ժողովուրդ է արել. և թէ նրանք էլ պէտք է
 ճանաչեն ճշմարիտ Աստուծոն իրանց յատուկ ըս-
 տեղծողին և հասկանան՝ թէ Աստուած, որ իրանց
 ընտրել է, ոչ թէ իրանց արժանաւորութեան
 համար է, այլ իրա բարութեան և նրանց նա-
 խահարց տւած խոստմունքի համար, որ խոստա-
 ցել էր նրանց Քանանու երկիրը տալ, ուր մեղք
 և կաթն էր բղխում — որ պտղաբեր և առատ եր-
 կիր էր, և թէ նրանց էնտեղ պէտք է շատացնի
 պահպանի և օգնական լինի նրանց բոլոր թրշ-
 նամեաց դէմ: Եւ էս ամէն բարերարութեան
 փոխարէնը պահանջումէր նրանցից միայն էն, որ
 իստակ սրտով սիրեն նրան. Սիրի՛ր, ասաց, քու
 Տէր Աստուածդ բոլորով սրտիւ և պահի՛ր նրա
 տւած պատուիրանքները և նրա տւած օրէնքների
 արարողութիւնները: Էս խրատներից յետոյ սաս-
 տիկ սպառնալիքներ տւաւ ժողովուրդին, եթէ
 անհաւատարիմ լինեն Աստուծոն՝ Նա կը պատժի
 ձեզ, ասաց, անզաւակութիւնով, սովով, սաստիկ
 հիւանդութիւնով, պատերապմներով, կողոպտե-
 լով, գերութիւնով, վերջն էլ կ'հալածուիք Աւե-
 տեաց երկրից և ցիր ու ցան կը լինիք աշխարհքի
 երեսին:

Արանից յետոյ Մովսէս մէկ մարգարէութիւն

էլ արաւ նրանց՝ թէ վերջին ժամանակը Աստուած մէկ մարդարէ պէտք է տայ իրանց ազգից իրա պէս, — աշխարհքի փրկիչ, օրէնքներ և պատուիրանքներ դնող, որ հին օրէնքից կատարեալ նոր ուխտ և նոր օրէնք պէտք է տայ մարդկանց : Եւ էն մարդարէն պէտք է ծնի Իսրայէլացւոց մէջ, ինչպէս Աստուած յայտնել է Աբրահամ և Յակոբ Նահապետներին, և Աստուծու պատուիրանքները պէտք է տայ ոչ թէ լեռան ծայրից ահարկու կերպով, կրակի և որոտմունքի մէջ խօսելով, այլ ընտանու պէս հետները վարելով, հեզութիւնով և խոնարհութիւնով, որով յայտնի կ'իմացւի էս երկու օրէնքի զանազանութիւնը :

Մովսէս գնաց Նաբաւ լեռը, էն անգաց մտիկ սուա Աւետեաց երկրին, ուր երբեմն բրնակու մէին նախահայրները՝ Աբրահամ, Իսահակ, և Յակոբը. տեսու միայն հեռուից նրա բոլոր պտղաբեր երկիրը, դաշտերը և լեռները և էն լեռան վրայ վախճանուեցաւ Աւետեաց երկիրը չք մտած, և նրա զերեզմանը մնաց անյայտ մինչև ցայսօր :

Իսրայէլացիք յիսուն որ սուգ արին Մովսէսի համար :

18. ԻՍՐԱՅԷԼԱՅԻՈՅ ՔԱՆԱՆՈՒ ԵՐԿԻՐԸ ՄՏՆԵԼԸ :

Յեսու որդի Նաւեայ, Ա. Գ. Զ. Ժ. ԻԴ. ԵԼ. ԼԴ.

Մովսէսը մեռաւ . բայց ամենազօր Աստուածը կենդանի է միշտ : Նա Լքցրեց իր հողով Նաւեայ որդի Յեսուին և հրամայեց առաջնորդ լինել ժողովուրդին և մեծամեծ հրաշքներով Խորայէլացւոց տարաւ Քանանու երկիրը : Յորդանան գետը երկու բաժանւեցաւ , ինչպէս առաջ կարմիր ծովը , և միջից ցամաքով անցկացրուց ժողովուրդին և հասցրուց Աւետեայ երկիրը : Երբ Քանանացիք պատերազմ բաց արին Խորայէլացւոց հետ , Աստու հրամանով Եերիքով քաղաքի պարիսպները ինքն իրան փուլ եկան փողերի ձէնից : Թշնամեաց վրայ քարէ և կրակախառն կարկուտ եկաւ . Յեսուի աղօթքով արեգակը և լուսինը դադարեցան իրանց ընթացքից , որ Խորայէլացիք ժամանակ ունենան Թշնամեաց յաղթելու : Քանանու հին բնակիչներից շատ թաղաւորներ և զօրաւոր ազգեր Աստուած մատնեց Խորայէլացւոց ձեռքը , որ Աստու Վրէժը հանուն նրանցից , պատճառ որ նրանք կռապաշտ էին և չարաչար մեղքերով լիքը : Խորայէլացիք կոտորեցին ամէնքին և տիրեցին նրանց քաղաքներին և հողերին , հարստացան նրանց սպրանքներով և

էն երկիրը բաժանեցին տասներկու մասը, Յակոբ
 նահապետի տասն երկու որդւոյ տասներկու ցեղի
 վրայ: Թէպէտ Յակոբը իրա մեռնելու ժամանակը
 ազնւոյ որ Յովսէփի երկու որդիքը, Եփրեմը և Մա-
 նասէն իրան որդի համարւին. և նրանցով Խորայէ-
 լացիք տասն երեք ցեղ էլան, բայց Ղևեայ ցեղը էն
 երկրներից ամենևին բաժին չ'ուներ, պատճառ
 որ նրանք նուիրւածէին Աստուծոն և տաճարին
 էին ծառայում, էս պատճառաւ միւս ցեղերը
 իրանց երկրի պտուղներից մասը, ապով պահու-
 մէին նրանց: Յուդայի ցեղի մասը աւելի լաւն էր
 և միւս ցեղերի մասից մեծ, և էնպէս ծաղկե-
 ցաւ էն ցեղը, որ երևումէր թէ հրամայող պի-
 տի լինի միւս ցեղերին:

Խորայէլացիք հաւատարիմ էլան Աստուծոն.
 Աստուած հրամայել էր նրանց Քանանու հին
 բնակչացը ամենին սուրի քաշել և նրանց կուռ-
 քերը ջնջել, բայց նրանք չը կատարեցին էն հը-
 րամանը, այլ ընդհակառակը նրանց հետ ազ-
 գականութիւն գծեցին, նրանց սուտ աստուած-
 ները պաշտեցին և նրանց զարշնչի մեղքերն էլ
 գործեցին: Էն ժամանակը սկսաւ հասնել նրանց
 վրայ Աստուծու բարկութիւնը. եւ ամէն անգամ,
 երբ թողնումէին Աստուծոն, Աստուած էլ նրանց
 գժումէր թշնամեաց ձեռքը, գերի էին ընկնում:

և տանջուամէին : Եւ երբ եդ էին դառնում
դիպա Աստուած, Աստուած էլ տալիս էր նրանց
աղատողներ, քաջ զօրագլուխներ, և առաջնորդ-
ներ, որ դատաւորներ կոչուեցան, որոնք դա-
տումէին ժողովուրդին և նրանց միջի պատա-
հած վէճերը և անբաւականութիւնները խաղա-
ղացնումէին :

19. Դ Ա Տ Ա Ի Ո Ր Ն Ե Ր .

Դ ա տ . Դ . Դ . Զ . Ժ .

Յետև Նաւեայից յետոյ Իսրայէլի առաջին
դատաւոր կարգուեցաւ Քաղէբը՝ Յուդայի ցեղից,
որ այլազգիներու հետ կռիւ տւաւ և յաղթեց :
Նրանից յետոյ Աւովդը Բենիամինի ցեղից, որ
սպանեց Մովաբու Եղգում թագաւորին և ազա-
տեց Իսրայէլացւոց նրա տասն և ութ տարւայ
ճառայութիւնից : Նրանից յետոյ՝ Դեբուրայ Մար-
գարէուհին, որի ժամանակը Իսրայէլացիք յաղ-
թեցին Քանանացւոց Յաբին թագաւորին և ա-
զատուեցան նրա քսան տարւայ լուծից : Դեբու-
րայից յետոյ Իսրայէլացիք կրկին անդամ մատն-
ւեցան Մադիամացւոց ձեռքը, և երբ դարձան
իրանց շար ճանապարհից, Աստուած էլ ուղար-
կեց Գեդէոնին ազատել նրանց, որ երեք հարիւր
հողով գիշերը թշնամու զօրքը ցիր ու ցան արաւ,

կենդանի բռնեց Մաղխամու թագաւորին և վերջը սպանել տւաւ, քանդեց բահայու կուռքի սեղանը, ազատեց Իսրայէլի ազգը և քառասուն տարի խաղաղ կառավարելով իր ազգը՝ մեռաւ: Չեղէնից յետոյ դատաւորներից երևելի էր Յեփթային, որ պատերազմելով Ամոնացւոց թագաւորի հետ՝ յաղթեց և ազատեց Իսրայէլի ժողովըղին:

20. ՍԱՄՍՈՆԻ ԾՆՈՒՆԴԸ, ՆՐԱ ՔԱԶՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ

ՄԱՀԸ:

Դատ • ԺԳ • ԺԷ,

Արանից յետոյ Իսրայէլացիք կրկին մատնւեցան Փղշտացւոց ձեռքը և տանջումէին նրանցից իրանց չարութեան համար Աստու դէմ:

Երբ մեծացաւ Սամսոնը՝ կին առաւ իրան այլազգի աղջկերանցից, որ հանի նրանցից իր վրէժը: Սա երեքհարիւր աղուէս բռնեց՝ կապեց նրանց պոչը պոչից և ջահեր դրաւ կապած պոչերի մէջ և բաց թողաւ Փղշտացւոց արտերումը և նրանց հունձը, թէ քաղածը և թէ անքաղը և մինչև այգիքը և ձիթենիքը էրեց բոլորովին: Եւ երբ այլազգիքը ուզումէին նրան բռնել և կապել, Սամսոնը գտաւ մէկ իշի ծնոտ և նրանով հաղար այլազգի սպանեց: Մէկ անգամ Սամսոնը

գնաց Գաղայ և մտաւ մէկ կնոջ տուն : Գաղա-
 յացիք իմացան Սամսոնի էնտեղ գալը , ողջ գի-
 շերը թաք կացան քաղքի դրանը և կամենու-
 մէին բռնել և սպանել : Սամսոնը կէս գիշերին
 վերկացաւ քաղքի դռները շէմքով դուս գջլեց և
 իր ուսերի վրայ դրած , տարաւ մէկ սարի ծերին
 և ածեց էնտեղ :

Սամսոնը մէկ կին ունէր , անունը Դալիլա ,
 օրին սիրումէր շատ : Այլազգի նախարարները
 գրաւեցին Դալիլայի սիրտը արծաթով . նա իմացաւ
 թէ ինչից է նրա ուժը : Քնացրուց նա իր ծն-
 կան վրայ Սամսոնին և վարսավերին վեր անել
 տաւ նրա գլխի եօթը հուսած հիւսերը և նա
 իսկոյն ընկաւ ուժից : Այլազգիք բռնեցին , կա-
 պեցին նրան երկաթի կապերով , աչքերը փորե-
 ցին և գձեցին բանտը : Ժամանակից յետոյ Սամ-
 սոնի գլխի մազերը քիչ քիչ սկսան դուս գալ
 և օրէ ցօր աւելանումէր նրա ուժը և սպասումէր
 ժամանակին , որ իր վրէժը առնի նրանցից : Մէկ
 օր այլազգի իշխանները մեծ հանդէս էին կատա-
 րում իրանց Գազոնայ ջաստուածի համար , և
 ուրախանումէին , որ նրանց թշնամին իրանց
 ճանկն է ընկել , երբ գուարթացան նրանց սրտերը
 գինով էն հանդէսումը , բերել աւին Սամսոնին
 և երկու սիւների մէջ կանգնացրած՝ ծաղը էին

անում և ծիծաղումէին նրա վրայ : Ին ժամանակը Սամսոն բռնեց երկու սիւների միջեց , որի վրայ հաստատուած էր տունը . դէմ գձեց մէջքը սիւներին ասելով՝ մեռնի իմ անձս էս այլապէս գեաց հետ՝ ժաժ տեց սիւները և յանկարծ փուլ եկաւ տունը բոլորի վրայ , մեռան ամէնքը և ինքն էլ մեռաւ նրանց հետ :

21 . ՀԵՂԻ ԲՍՀԱՆԱՅԱՊԵՏԸ , ՍԱՄՈՒԷԼԻ ԾՆՈՒՆԴԸ :

Ս . Թայ . Ա .

Սամսոնից յետոյ Իսրայէլի դատաւոր կարգւեցաւ Հեղի քահանայապետը : Սա բնակւում էր Սելով քաղաքումը , ուր վկայութեան խորանն էր , Իսրայէլացիք էնտեղ էին տանում իրանց ոչխարներից զոհերը և ապրանքից տասանորդը և էնտեղ կատարումէին իրանց Աստուածապաշտութիւնը Ուխտի Տապանակի մօտ : Հեղին ունէր երկու որդի՝ Ափնի և Փենեհես անունով : Սրանք շատ չարագործ , արծաթասէր , անարդարադատ էին և Աստուածանից աներկիւղած . արհամարհումէին խորանի սրբութիւնը և Աստուածապաշտութիւնը : Հեղին ինքը շատ ծերացել էր , տեսնումէր իր որդւոց չար արարմունքը , շատ անդամ խրատումէր նրանց , բայց նրանք չէին լսում և չէին ուղղւում :

Էն ժամանակը մէկ բարեպաշտ մարդ կար ա-
նունը եղկանայ, որի անորդի կինը Աննան տօնի
օրը մօտ զնաց խորանին և աղաչու մէր Աստուծոն որ-
դի պարզեւել նրան և խօստանումէր ընծայել խո-
րանի ծառայութեանը: Աստուած լսեց նրա ա-
ղաչանքը: Ժամանակին Անէն ծնաւ որդի, ա-
նունը դրաւ Սամուէլ: Երբ ծծից կտրեց, երե-
խին տարաւ Սելով քահանայապետի մօտ, ըն-
ծայեց Աստուծոն և յանձնելով քահանայապետին,
թողաւ վկայութեան խորանումը, ինքը զնաց:

24 • ՍԱՄՈՒԷԼ ԵՒ ՏԱՊԱՆԱԿԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ • ՈՓՆՈՒ ԵՒ

ՓԵՆԵՀԵՍԻ ԵՒ ՀԵՂԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ՄԱՀԸ:

Ա • Թ • Պ • Գ • Դ •

Սամուէլը աճումէր և զօրանումէր հոգւով.
քանի որ մանուկ էր քնումէր խորանումը քա-
հանայապետի մօտ: Մէկ անգամ երևաց զիշերը
Աստուած և յայտնեց նրան ասելով, «Ահա ես
լիմ վրէժս պիտի առնեմ նրա որդւոց անօրէնու-
թեան համար, նորա որդիքը հայհոյումեն և ա-
նարդումեն ինձ և Հեղին չ'է խրատում նրանց»:
Առաւօտը որ լուսացաւ, Սամուէլը վախեցաւ պատ-
մել Հեղինին: Հեղին կանչեց Սամուէլին և ա-
սաց, ի՞նչ էր էն բանը, որ Աստուած խօսեցաւ
քեզ հետ. մի՛ վախենար, մի՛ թաղցնիր ինձանից

ինչ որ լսեցիր : Սամուէլը պատմեց ամէնը , Հեղին
 փառք ապրով Աստուծոն՝ ասաց, ինչ որ բարին է,
 էն կատարի Տէրը : Էն օրերումը Փղշտացիք հա-
 ւաքւեցան Իսրայէլացւոց դէմ պատերազմ տա-
 լու նրանց հետ : Իսրայէլացիք տեսան , որ յաղ-
 թւումեն , բերել տւին Տասպանակը և Հեղիի եր-
 կու որդւոցը : Սարքւեցան մէկ մէկու դէմ և սկսան
 կռիւ տալ , բայց այլազգիք յաղթեցին , Տասպա-
 նակը գերի տարան , Ռփնին և Փենեհէսը մե-
 ռան , և Իսրայէլացիք ցիրուցան էլան : Երբ լսեց
 Հեղին էս բօթի ձէնը եղ ընկաւ աթոռից , կո-
 տրւեցաւ ողը (մէջքի մէկ ոսկորը) և ինքն էյ
 մեռաւ :

23 . ՍԱՄՈՒԷԼԻ ԶՈՀԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ , ՓՂՇՏԱՅԻՈՅ ՅԱՂ-
 ԹԻՒԼԸ ԵՒ ՏԱՊԱՆԱԿԻ ՀՐԱՇԻՈՎ , ԳԵՐՈՒԹԻՒՆԻՅ ԱԶԱՏԻԵԼԸ

Ա . Թագ . Ե . Զ . Է .

Արանից յետոյ Իսրայէլացիք սաստիկ պաշար-
 ւած էին ահով ու դողով . տեսնումէին Տա-
 սպանակը , որ իրանց սրբութիւնն է , թշնամեաց
 ձեռին գերի է ընկած : Պէտք էր նրանց լաւ հաս-
 կանալ , թէ էս ամէն փորձանքները իրանց չա-
 րութիւնից են առաջ եկել : Եւ երբ Սամուէլը
 սկսաւ նրանց սպաշխարութիւն քարոզել , նրանք
 իսկոյն զղջացան և սաղ օրը պահով և աղօթքով

անցկացրին, մեղայ գոչելով Աստուծուն: Սամուէլն
 էլ գառը մատաղ բերաւ Աստուծուն և մինչդեռ որ
 մատաղի ծուխը վեր էր ընում՝ դէպի երկինքը,
 այլազգիք հաւաքեցան Իսրայէլացւոց դէմ և
 սկսան կռիւ տալ: Յանկարծ մէկ սաստիկ աղա-
 ղակի ձէն վեր էլաւ ամպի գոռալու պէս, ահ ու
 դողը ընկաւ Փղշտացւոց մէջ և սկսան փախչել
 և հեռանալ Իսրայէլի սահմանից: Վերջը Աստ-
 ուած նրանց էնպէս պատիժների և փորձանք-
 ների մէջ գձեց, մինչև որ յուսահատուած իրանց
 կամքով եղ գարձրին Տապանակը,

24. ՍԱՒՈՒՂ, ԻՍՐԱՅԷԼԻ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՒՈՐԸ:

Ա. Թագ. Ը. Թ. ԺԴ. . ԺԵ, . ԺԶ.

Իսրայէլի ազգը, որ մէկ ժամանակ դատաւո-
 րաց ձեռքով էր կառավարւում՝ ուղեց թագաւոր
 ունենալ:

Երբ Սամուէլը ծերացաւ, իր երկու որդւոց
 Յովէլին և Սբիին յանձնեց Իսրայէլի կառավա-
 րութիւնը: Նրանք իրանց հօր պէս արդարա-
 դատ և անարժաթասէր չ'էին, այլ Աստուծո
 ընդն ու ճշարտութիւնը փողով էին ծախում,
 արդարներին դատապարտելով՝ մեղաւորներին էին
 արդարացնում, և էնքան շահասէր էին, որ մինչև
 անգամ իրանց օգուտը բարձր էին համարում

Աստժանից : Էս պապճառաւ հաւաքուեցան Խորայ-
 էլայցիք և ասացին Սամուէլին, դու ծերացել ես,
 քու որդիքը չ'են պահում քու արդարութիւնը
 ու օրէնքը. թագաւոր կարգիւր մեր վրայ, որ դա-
 տի և կառավարի մեզ : Սամուէլը սկիզբը չ'էր
 հաւանում էս բանը, աշխատումէր նրանց միտքը
 փոխել, իսկ նրանք հաստատուած էին իրանց
 մտքին և խորհուրդին, բայց յետոյ հրաման առ-
 նելով Աստժուց՝ կատարեց նրանց խնդիրը :

Աստուած ընտրեց Բենիամինի ցեղից Յեսեայ
 որդի Սաւուղին և Սամուէլի ձեռքով օժեց նրան
 Խորայէլի թագաւոր : Եւ էսպէս առաջին թա-
 գաւորն էր Սաւուղ : Սա իրա որդի Յովնաթանի
 հետ շատ երևելի յաղթութիւններ արաւ Ամո-
 նացւոց և Ամադէկացւոց դէմ և միշտ ազատում
 էր Խորայէլացւոց իրանց թշնամեաց ձեռքից,
 բայց որքան մեծացաւ սրա փառքը ու մեծու-
 թիւնը, այնքան աւելի հպարտացաւ և սխաւ
 իր օգտի ետևից ընկնելով՝ մոռանալ Աստժուն :
 Սամուէլը յայտնեց նրան, թէ Աստուած էլ չ'է
 ուզում քեզ, և քու թագաւորութիւնը տալիս է
 ուրիշին :

Սրանից յետոյ Աստժու հողին վերացաւ Սա-
 վուղից և չար դէր տանջումէր նրան : Այնու-
 հետև Սաւուղը էլ չը տեսաւ Սամուէլի երեսը :

Մամուէլը գնաց Բեթղեհէմ, հրաւիրեց Յեսսէին
 և նրանց որդւոց, Աստուան ընծայ բերած սեզա-
 նի վրայ. Աստուած Յեսսէի որդիքերանցից Դաւ-
 թին, որ դէմքով գեղեցիկ և քնար ամող պա-
 տանի էր, ցոյց տւաւ Մամուէլին իրա ընտրածը.
 Մամուէլ ամանով վեր առաւ իւղը, օծեց Դաւ-
 թին իր եղբարց առաջւը և Աստու հոգին վեր
 եկաւ նրա վրայ:

Մէկ անգամ երբ չար դէը էլի տանջումէր
 Սաւուղին, ծառաներից մէկը ասաց նրան, հը-
 բաման տուր, քեզ համար մէկ լաւ քնար ամող
 բերենք, դուցէ քնարի ձէնը խաղաղացնի սիրտդ:
 Սաւուղը կամք տւաւ և իսկոյն Բեթղեհէմից բե-
 ըին Դաւթին: Սաւուղը իր կապարճակիր (նեա-
 ու անեղ բռնող) կարգեց Դաւթին և իր մօտ
 պահեց: Եւ քանի որ նրա վրայ սրտի նեղու-
 թիւն էր գալիս, Դաւթիթը ամուսնէր քնարը և
 մխիթարւումէր Սաւուղի սիրտը:

25. ԳՈՂ, ԻԱԴԸ, ԵԻԴԱԻԻԹԸ:

Ա. Թագ. Ժէ. ԺԸ. ԼԱ.

Նոր մէկանց փղշտացիք պատերազմի դուս
 եկան Իսրայէլի դէմ. Սաւուղն էլ դուս եկաւ
 զօրքով և մէկ դաշտաձորի վրայ կարգւցան մէկ
 մէկու դէմ: Նրանց զօրքից դուրս եկաւ մէկ

չափիցը դուս բարձրահասակ մարդ անունը Գո-
 ղիադ, երկաթէ սաղաւարտ գլխին դրած պղնձէ
 զրահը հագին, և գեղարդը ձեռին: Չէն տւեց
 Խարայէլացւոց զօրքին. «Կռիւ չը տանք մէկ մէկու
 հետ, այլ ձեզանից մէկը դուս գայ, եթէ նա
 ինձ սպանի՝ մենք ձեր ծառայ լինինք, եթէ ես
 նրան սպանեմ՝ դուք մեր ծառայ լինիք»: Խա-
 րայէլացիք էս որ լսեցին, շատ վախեցան. Գո-
 ղիադը պարծենումէր իր ուժի վրայ, ծիծաղու-
 մէր նրանց վրայ և ուշուեց էր տալիս: Դաւի-
 թը, որին հայրը ուղարկել էր նրան իր եղբարց լուրը
 բերելու էն պատերազմից, առաջ եկաւ և ա-
 սաց: Ո՞վ է էն անամօթը, որ արհամարհումէ
 Սասճու ժողովուրդին: Ի՞նչ կը տայ թագաւորը
 նրան, ով էն դուռով փղշտացուն սպանի և վերց-
 նի Խարայէլի ազգից էս ամօթն ու նախատինքը:
 Ես ցանկանու լիմ, ասաց նա, կռիւ տալ էն հս-
 կայի հետ: Սաւուղը լսեց էս և Դաւիթին իրա-
 մօտ սպասրեց: Հրաման տուր ինձ, ասաց Դա-
 ւիթը՝ Սաւուղին, դուս գնա՛մ էն այլազգու
 դէմ: – Ի՞նչպէս կարող ես, ասաց Սաւուղը,
 յաղթել էն հսկային. դու դեռ պատանեակ ես,
 իսկ նա էնպէս զօրաւոր և յաղթանդամ: Երբ
 արածայնումէի ես իմ հօր ոչխարները, ասաց
 Դաւիթը, պատահումէր առիւծ և երբեմն արջ,

որ փախցնումէին խաշնից ոչխար, վազումէինը-
րանց ետեւից և վեր էի գծել տալիս ոչխարը, և
եթէ ընդդիմանումէին, բռնում էի բողազից և
սպանումէի : Աստուած, որ ազատեց ինձ առ-
ծի և արջի բերանից, կ'ազատի և էս փղշտա-
ցու ձեռքից : Սաւուղը հրամայեց պղնձէ սաղա-
ւարտը գլխին դնել, զրահ հագցնել և մէջքին
իր սուրը կապել : Բայց Դաւիթը չը կարաց զրա-
հաւորւած ման գալ, հանեց էն ամէնը և վեր
առաւ իր գաւազանը և մաղախը հինգ քարով և
պարսաձիգը և դուս եկաւ Գողիադի դէմ :

Միթէ ես շուն եմ, ասաց Գողիադը, որ
քարերով ես գալիս իմ վրէս : Դու սրով, գե-
ղարդով և վահանով ես դուս գալիս իմ դէմը,
բայց ես Տէրի անունով, որին դու արհամար-
հումես : Էս օր աշխարհքը վկայ կը լինի, թէ
Աստուած օգնութիւնը աւելի զօրաւոր է սուրից
և գեղարդից : Էս խօսքից յետոյ Դաւիթը քա-
շեց պարսաքարը ուղղակի Գողիադին, և ծակեց
նրա ճակատը . Գողիադը ընկաւ գետնին : Դաւի-
թը շուտով կտրեց նրա գլուխը նրա սրով, փղ-
շտացիք ահապատառ եղ փախան և Խորայէլա-
ցիք ընկան նրանց ետեւից, կոտորեցին, ցրեցին
և ոտնակոխ արին նրանց բոլոր զօրքը :

Երբ Սաւուղ պատերազմից եղ էր դառնում

տուն Դաւթի հետ, ամէն քաղաքից դուս
էին գալիս առաջ պարսաւոր աղջկունք թմբուկ
ներով և ծնծղաներով պար բռնած Սաւուղի ա-
ռաջ երգումէին և ասում, Սաւուղը հազարին
յաղթեց, իսկ Դաւիթը հարիւր հազարներին :
Սրա վրայ նախաձեռեցաւ Սաւուղը Դաւթի հետ
և էն օրից սկսաւ չար աչքով մտիկ տալ Դաւ-
թին և մինչև իր մահը հալածել նրան : իսկ
Սաւուղի որդի Յովնաթանը հոգով կապեցաւ
Դաւթի հետ և խօսք տւաւ սիրել նրան ինչպէս
իրա անձը և իսկ բարեկամութեան նշան, հանեց իր
վերարկուն և ընծայեց նրան, նմանապէս իր սուրբ
և նետ ու անեղը . միշտ մխիթարումէր և հե-
տևումը ազատել նրան իր հօր հալածանքից :

Մէկ անգամ Սաւուղը, երբ իր մարդիկներով
գնացել էր Դաւթին պտռտելու և ապանելու
նրան, մարդ եկաւ և ասաց . շտապով եղ արի՛,
այլազգիք մտել են մեր երկիրը : Երբ նա եղ էր
դառնում, իմացաւ, որ Դաւիթը էն անապա-
տումն է, շատ զօրք վեր առաւ հետը և եկաւ
մէկ ոչխարների բազը և էնտեղ ուզեց հանգստանալ :
էն ժամանակը ասացին Դաւթին, ահա էս օր քու
թշնամին քու ձեռքին է, արա՛ ինչ որ կամենաս :
Դաւիթը թարթուն դնաց, կտրեց նրա վե-
րարկուի փեշի ծէրը և չը թողաւ իր մարդկե-

րանց սպանել նրան : Սաւուղը զնաց պատերազմ
այլազգեաց դէմ , սաստկացաւ կռիւը և վերաւոր-
ւեցաւ Սաւուղը : Հանիր ասաց Սաւուղը իր
զինակիրին քո սուրբ և խոցիր ինձ . չը լինի թէ
թշնամիքը խոցոտեն ինձ և ծիծաղին վրէս : Կա-
պարճակիրը , երբ տեսաւ որ Սաւուղը մեռաւ ,
ինքն էլ ընկաւ իր սուրի վրայ և մեռաւ :

26 . ԴԱԻԹԻԹԱԳԱԻՈՐՈՒԹԻԻՆԸ ԵՒ ՆՐԱ ԳՈՒՇԱԿՈՒԹԻԻՆԸ

ՄԵՍԻԱՅԻ ՎՐԱՅ :

Բ . Թ ա գ . Ե . 2 . Է .

Սաւուղից յետոյ Իսրայէլի երկրորդ թագաւոր
նստեցաւ Դաւիթը Յուդայի ցեղից , և Սամուէլի
ձեռքով օժեցաւ իւղով : Դաւիթը շատ մեծա-
մեծ պատերազմներ արաւ անհաւատների դէմ :
Աստուած օգնումէր նրան և միշտ յաղթող էր
հանդիսանում բոլոր թշնամեաց վրայ : Նա շատ
հաւատարիմ էլաւ Աստծուն և մեծացաւ փառ-
քով : Նրա սրտի փափագը և մտածմունքը Աստ-
ծու օրէնքներն էին , միշտ աշխատումէր պահել և
ժողովուրդին էլ պահել տալ էն օրէնքները , նա
երևելի բանաստեղծ էր և երաժիշտ և Աստծուն
փառաբանելու և մարդուս վարքն ու բարքն ուղ-
ղելու համար շատ երգեր շարադրեց . էս եր-
գերը կոչուան Սաղմոս , որ մինչև էսօր էլ մե՛ջ

Ժառերգութեան մէջ կարգումենք և երգում:

Երուսաղէմը, որ Մելքիսեդեկի քաղաքն էր, Գաւթի քաղաք կոչուեցաւ. և էնտեղ Սիոն սարի վրայ պալատ շինեց և ուխտի Տապանակը նրա մէջ տեղաւորեց: Նա ուզումէր մէկ հոյակապ տաճար շինել Տապանակի համար, որ մատաղները էն տեղ անել տար, պատճառ որ Աստուծոն ծառայելու համար դեռ ժողովուրդը մէկ հաստատ տեղ չ'ունէր, աւետեաց երկիրը մտնելուց սկսած մինչև էն ժամանակը: Բայց Գաւթի թը իմացաւ, թէ Աստուած ինքը կամենումէ որ էն փառքը իր որդուն Սողոմոնին թողնի և նա շինի Տաճարը, և խոստացաւ Աստուած, որ նրա սերունդը որդւոց որդի յաւիտեան պէտք է թաղաւորի հաւատացեալ ժողովրդի վրայ, և էս խոստմունքով իր առաջին ուխտը կամ խոստմունքը նորոգեց, ինչ որ արել էր Նահապետների և Խորայէլի ազգի հետ:

Աստուած մէկ յաւիտենական խաղաղութիւն խոստացաւ ժողովուրդին, և թէ Երուսաղէմ քաղաքը իրա բնակւելու և իրա անունը փառաւորելու տեղ պէտք է լինի, և իրա ներկայութիւնը ժողովուրդի մէջ մասնաւորապէս էնտեղ պէտք է երևայ: Եւ էսպէս էն սուրբ քաղաքը տշխարհքիս վրայ օրինակ էլաւ Սուրբ Եկեղեցւոյն՝ որ բոլոր հաւա-

տացելոց մէկ մարմին էլած միաբանութիւնն է ,
որոյ աներևոյթ գլուխը ինքը Քրիստոսն է :

Աստուած Գաւթին ուրիշ բարձրագոյն խոր-
հուրդներ յայտնեց : Առաջինը՝ թէ աշխարհ-
քի փրկիչը իր ցեղեց պիտի գայ աշխարհք
և թագաւորի, ոչ թէ միայն Խորայէլացւոց, այլ
և ամէն ազգերի վրայ : Երկրորդ՝ Քահանայապետ էլ
պէտք է լինի, ոչ թէ Ահարոնի կարգից, այլ Մելքի-
սեդեկի, որ գրաւոր օրէնքից շատ առաջ էր :
Եւ թէ փրկիչը Աստուծոյ որդի է և Աստուած :
Քաց ի սրանից, փրկիչը իրա փառքին հասնելուց
առաջ, պէտք է դառն շարչարանքներ քաշի : Խո-
րայէլացիք էն ժամանակէնից սկսեցին Յիսուսին
փրկիչ կոչել, Մեօխայ և Քրիստոս էլ կոչեցին, որ
նշանակումէ օծեալ, ինչպէս սովորութիւնն էր,
թագաւորներին և քահանայապետներին սուրբ
իւղով օծել : — Խորայէլացիք Փրկչին՝ որդի Գաւթի
էլ ասացին :

27. ԱՔԻՍՈՂՈՄԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՄԱՀԸ :

Բ . Թագ . ԺԵ . ԺԸ . Գ . Թագ . Ա . Բ .

Գաւթի որդին Աբիսողոմը, երբ դնաց Քե-
բրոն իր ուխտը կատարելու, պատուիրակներ
ուղարկեց բոլոր Խորայէլի ազգին՝ թէ երբ փողի ձէնը
լսէք, ասացէք թէ Աբիսողոմը թագաւորեց Քեբ-

բունումը : Երբ Գաւիթը լսեց, շուտով դուս գը-
 նաց իր բոլոր անովը Չիթենեաց սարի մօտ : Եւ
 մինչդեռ Աբխաղումը Երուսաղէմումն էր իր զօրքով,
 Գաւիթը զօրք ուղարկեց Աբխաղումի դէմ, բայց
 հրամայեց խնայել նրա կեանքը : Էն օրը մեծ
 կոտորուածք էլաւ Իսրայէլի ժողովուրդից : Աբխ-
 աղումը ջորու վրայ նստած մտաւ մէկ միծ և
 թանձր կաղնու տակ, որին փաթաթւեցան նրա
 դիւի մազերը, ինքը կախ ընկաւ ծառից մազերով
 և ջորին անց կացաւ տակից էն կողմը : Յովաբի
 զինակիրները պատեցին և սպանեցին նրան :

Մինչդեռ Գաւիթը նստած երկու դրան մէջ
 սպասումէր իր որդու լուրին, յանկարծ գուժ-
 կանը յայտնեց Աբխաղումի մահը : Էս որ լսեց
 Գաւիթը՝ շատ շփոթւեցաւ և սկսաւ բարձր ծէ-
 նով սգալ. «Աբխաղում Աբխաղում, որդեակ իմ
 Աբխաղում, ո՞վ կը տար ինձ մահ քու տեղ, ես
 քու տեղ մեռնէի, Աբխաղում որդեակ իմ, որ-
 դեակ իմ Աբխաղում» :

Երբ Գաւթի մահը մօտկացելէր, կանչեց նա
 քահանէք և մարդարէք և առաց, տարէք Սո-
 դոմոնին Գեհոն Իսրայէլի թագաւոր օձել նրան, և
 փողը հնչելով՝ ասացէք, կեցցէ՛ Սոդոմոն թագա-
 ւորը, դուս եկէ՛ք նրա ետևից, թող նստի նա իմ
 աթոռի վրայ և թագաւորի իմ տեղ : Եւ երբ

վերջացրեց իր խրատ տալը Սողոմոնին՝ արձակեց
 իր հողին և մեռաւ :

28 . ՍՈՂՈՄՈՆ ԳԱԻԹԻ ՈՐԴԻՆ, ՆՐԱ ԻՄԱՍՏՈՒԹԻԿՆԸ ԵՒ

ՍՈՒԱԶԻՆ ԳԱՏԸ :—

Գ . Թ . ս . 7 . Գ . Գ . Ե . Ժ . Ա . ս . ս . Ը . Ը . Գ . Թ . ս . 7 .

Ժ . Ա . Ժ . ս . 7 . ս . Ը . Ը . Գ .

Սողոմոնը տասներկու տարեկան էր , երբ թա-
 փաւոր օժեկցաւ և նստաւ իր հօր աթոռը նրա
 մահից յետոյ : Սա Ասածանից խնաստութիւն
 և խելք խնդրեց և Աստուած էլ փառա-
 ւորեց նրան հանձարով և խնաստութիւնով , և
 էն պատճառաւ էլ իրա թափաւորութիւնը հան-
 դիստ և խաղաղ վարեց փառքի , մեծութեան և
 հարստութեան մէջ :

Երկու կին եկան նրա մօտ՝ մէկն նրանցից ասաց ,
 Տէր , ես և էս կինը մէկ տանն էինք , ես որդի
 ծնայ էն տանը և վրայ երկրորդ օրն էլ սա ծը-
 նաւ որդի : Սրա որդին մեռաւ գիշերով , պատ-
 ճառ որ վրէն քննել էր , կէս գիշերին մանուկը
 վեր աւաւ իմ գրկից իր ծոցը , երբ ես քնած
 էի , և իր մեռած որդին քնեցրուց իմ ծոցումս :
 Միւս կինը ասաց , ոչ Տէր , մեռածը սրա որ-
 դին է , իսկ կենդանին իմն :— Դժուար որոշելու
 էր էս բանը , բայց ճշմարտութիւնը երեւան ա-

Տեղու համար՝ սուր բերէք ասաց, և կենդանի մանուկը երկու բաժին արէք, կէսը մէկին՝ և կէսը միւսին տւէք: Աինը, որի որդին կենդանի էր, ասաց, մի՛ սպանէք երեխին, ողջ մանուկը կենդանի տւէք նրան: Իսկ միւս կինը ասումէր, ոչ ինձ լինի և ոչ դրան, կտրեցէք միջից: Էստորով Սոլոմոնը որոշեց ստուգիւնն ու ճշմարտութիւնը և հրամայեց տալ մանուկը նրան, որ ասումէր թէ՛ մի՛ սպանէք, նա է՛ դրա մայրը:

Սողոմոնը շինեց Տաճարը, որի ձևը և հարկաւոր նիւթերը պատրաստել էր հայրը: Էն Տաճարը հոյակապ և երևելի շինուածք էր, ներսից ու դրսից ոսկուց և ոսկէջրած. երկու մասն էր բաժանած, մէկը ծածկած էր՝ որ Սրբութիւն սրբոց էր կոչուում, ուր տեղաւորած էր Տապանակը և միայն Քահանայապետը կարող էր մանել տարին մէկ անգամ և զոհի արիւնը ներս տանել: Էն սրբութիւն սրբոց կոչւած տեղը նշանակումէր երկինքը, որ փակւած լինելով՝ մարդիկ չէին կարողանում մանել, մինչև որ Քրիստոսի արիւնով չէին սրբւած: Տաճարի առաջը մատաղների սեղանն էր դրած մեծ սրահումը, չորս կողմը սիւնապատ սրահներով, բաժանած սենեակներով քահանայից և ղետացւոց պաշտօնների համար: Բոլոր Իսրայէլացւոց երկ-

բուժն միայն էս մէկ Տաճարն էր, և հրաման չը
կար ուրիշ տեղ զոհ բերելու, բայց միայն էս սե-
ղանի վրայ: Էս յայանի նշան էր թէ՛ Աստուած
մէկ է և նրա եկեղեցին էլ մէկ: Սողոմոնը շատ
երջանիկ կեանք էր վարում և օտար ազգերին էլ
հրամայող էլաւ և անչափ մեծացաւ և հարս-
տացաւ և աշխարհքիս ամէն բաւականութիւն
ներով ճոխացաւ: Սրա պէս իմաստուն չը կար ոչ
ոք, ինչպէս երևում է սրա գրուածներին, որ սով-
բացնում են մեզ ճշմարիտ իմաստութեան ճամբ-
էն՝ մեր վարքն ու բարքը ուղղելու և ուղիղ
կանոնի տակ գծելու:

Սողոմոնի գրուածներումը երևում է Աստու
իմաստութեան զօրութիւնը, որին առաջ է գա-
լիս և մարդկային իմաստութիւնը: Ինչպէս ա-
սում է նա՝ թէ էդ իմաստութիւնը, որ ի սկզբանէ
Աստու մէջն էր, երկիրը, ծովը, երկինքը, անդուն-
դներն էլ ստեղծելուց առաջ Աստու մօտն էր,
ներկայ էր ամէն բանը ստեղծելու ժամանակը և նրա
հետ ստեղծում էր և ուրախանում էր: Եւ թէ՛ իրա
ուրախութիւնը մարդոց հետ լինելն է և կանչում է
ամենին էլ՝ որ իրա հետ միանան, վայելեն իրա դան-
ձը և կը կշտանան իրա մեծարքով, այսինքն կըլքց-
ւին իր վարդապետութիւնով: Էսպէս է խօսում
Առակաց գրքումը թէ՛ Սողոմոն իմաստունի բա-

բոյական և վճռողական խօսքերը՝ մարդուս վարքը ու բարքն ուղղելու համար են :

Բայց Սողոմոնը շարաշար գործածեց էս Աստուծու պարգևները և շնորհքը . ծերութեան ժամանակը մոլորեցաւ ուղիղ ճանապարհից, սկսաւ մարմնաւոր հեշտութիւններին հետեւել . շահանայք սիրեց և օտար ազգի կանայք էլ առաւ, և նրանցից էնքան պղտորեցաւ նրա միտքը, մինչև որ կռապաշտութեան մէջ ընկաւ : Աստուած յայտնեց Սողոմոնին, որ նրա թագաւորութիւնը երկու կը բաժանուի իրանից յետոյ : Նա կորցրեց իր սրտի հանգստութիւնը, և մարմնոյ հաճոյքը և ցանկութիւնը կատարելով՝ վաղ ծերացաւ : Բայց իր մահից առաջ զղջացաւ և էն ժամանակը դրեց ժողովողի դիրքը (էկդէսիաստիկ) աշխարհքիս ունայնութեան վրայ : Էս գրքի միտքն էս է . «Մեծ գործքեր արի, տուներ շինեցի, այգիներ անկեցի, պարտէզներ և դրախտներ շինեցի, ամէն տեսակ պտղատու ծառեր տրուեցի, ջուրի աւազաններ շինեցի, ծառաներ և աղախիններ ունեցայ, շատ արջառներ և հօտեր, արծաթ, ոսկի, թագաւորների և դաւառների դանձեր դիպեցի, ամէն ցանկութիւներս կատարեցի, ամէն ուրախութիւնն ու բաւականութիւնը ունէի, բայց ոչինչ չ'էր ուրախացնում սիրտս .

տեսայ որ ամենը ունայնութիւն է և հոգոյ տան-
ջանք : Արևի տակը ոչինչ հաստատ բան չը կայ :
Էս բոլոր խօսքերիս վախճանն է , Աստուծոց վա-
խեցի՛ր և նրա պատուիրանքները պահի՛ր : Էս է մար-
դուս առաջին պարտաւորութիւնը, պատճառ որ
Աստուած ամէն բանը ամէն դործերի հետ , թէ
չարը և թէ բարին դատաստանի տակն է ձգում » :

29 • ԻՍՐԱՅԷԼԻ ՏԱՍՐ ՅԵՂԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ :

Գ • Թագ • ԺԲ •

Մեռաւ Սողոմոն և նրա տեղը Իսրայէլի թա-
գաւոր նստաւ նրա որդի Ռոբովամը : Սա չը լսեց
ճերերի խորհուրդը և աւելի ծանրացրուց ժո-
ղովուրդի լուծը , էս պատճառաւ միայն Յուդայի
և Բենիամինի ցեղը միացան Ռոբովամայ հետ , իսկ
միւս տասը ցեղը ընտրեցին իրանց համար թագաւոր
Յերոբովամին՝ Նփրեմի ցեղից : Եւ էսպէս մէկ թա-
գաւորութիւնը բաժնւեցաւ երկու , այսինքն Յու-
դայի և Իսրայէլի : Յերոբովամը իր մտքումը ասաց՝
չը լինի թէ ժողովուրդը Երուսաղէմ՝ գնալով
իրանց աղօթքը և զոհերը կատարելու համար՝
իրանց յատուկ թագաւորի հետ միանան . էս մասին
չինեւ տաւ երկու ոսկէ հորթ , երկու տեղ գնեւ
տաւ և ասաց ժողովուրդին , դժուար է ձեզ հա-
մար Երուսաղէմ գնալը , ահա ձեր աստուածները .

անդաններ կանգնացրուց, նոր քահանաներ դնելով տօներ կարգեց և ինքն էլ դնաց զոհ բերել շատածուռն: Սրանից առաջ եկաւ էս բաժանմունքը և միշտ մնաց էս սուտ օրէնքը նրա յաջորդների մէջ էլ:

Եւ էսպէս հերձուած էլաւ Իսրայէլի թագաւորութեան մէջ. հերձուած նշանակումէ բաժանումն, երբ Աստու ժողովրդեան մէկ մասը կը բաժնուի ընդհանուր Եկեղեցուց: Եւ էսպէս Աստու եկեղեցին բաժանուեցաւ երկու այսինքն՝ սուտ և ճշմարիտ: Սուտ Եկեղեցին մընաց Սամարիա, որ թագաւորական քաղաք էր, իսկ ճշմարիտը Երուսաղէմումը, ուր Տաճարի մէջ պիտի կատարուէր Աստուածպաշտութիւնը, որն որ Դաւիթ և Սողոմոն շինեցին և ուր Մովսէսի տւած օրէնքները պիտի պահուէին և Աստու պաշտօնն էլ կատարուէր ղևտացիների և քահանայից ձեռքով Ահարօնի ցեղից, որոց Աստուած ինքն ընտրել էր: — Էս Եկեղեցին միշտ կար հենց աշխարհքի սկզբից, պատճառ որ Մովսէսը դրեց հին Նահապետների աւանդութիւնները, ինչ որ մինչև իր ժամանակը կար. Աբրահամէլ նոյ Նահապետի հաւատքն ունէր, նոյ նահապետը Ենովքի և ջրհեղեղից առաջ էլած սուրբերինը՝ և էս սուրբերն էլ Ադամից ունէին էն հաւատ-

քը: Եկեղեցին որ Մովսիսական օրէնքով ծառայումէր Աստծուն՝ կոչուումէր Մինագովգա՝ ժողովարան, ժողով: Տասն ցեղի թագաւորութիւնը կոչւեցաւ Խարայէլեան կամ Եփրեմայ և կամ Սամարիայի թագաւորութիւն. իսկ Դաւթի ցեղի թագաւորութիւնը կոչւեցաւ Յուդայի թագաւորութիւն Բենիամինի և Ղևիի ցեղերի հետ միասին: Տասը ցեղի միջից շատերը հաւատարիմ մնացին և գնումէին Երուսաղէմ Աստծուն երկրպագութիւն տալու:

Յուդայի թագաւորութիւնն էլ բոլորովին առարատ չը մնաց, այլ մասնակից էլաւ չարութեան և կռապաշտութեան, նմանապէս և Դաւթի ցեղի թագաւորներից շատերը: Եւ Հրէից ժողովուրդի շատերն էլ Աստծու օրէնքը դրսից էին պահում, վախենալով, որ մարմնաւոր լաւութիւններից չը զրկւին: Եւ էսպէս սրտանց Աստծուն ծառայողները քչացան և երկու կողմից էլ ընկան տգիտութեան և կռապաշտութեան մէջ:

Յուդայի թագաւորները, որ տիրեցին միայն երկու ցեղի վրայ՝ սրանք են. Ռորովամ, Աբիու, Ասա, Յովաափատ, Յովրամ, Ռքողիա, Յովաս, Ամասիա, Ողիա, Յովաթամ, Աքազ, Եղեկիա, Մանասէ, Ամոն, Յովսիաս, Յովաքազ:

Յերթնիա • Սեղեկիա :

Տասն ցեղի Իսրայէլի թագաւորներն էին •
 Յերոբովամ Ա • Նարատ , Բաասա , Էզա , Չամրի ,
 Ամրի , Աքաաբ , Ոքողիա , Յովրամ , Յէու , Յո-
 վաքաղ , Յովաս , Յերոբովամ Բ • Չաքարիա ,
 Սելլում , Մանայիմ , Փակկէ և Ովսէ :

30 . ԻՄՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ :

Գ • Թագ • ԺԳ • ԺԳ :

Աստուած երկար ժամանակ համբերեց Իսրայ-
 էլի թագաւորներին և նրանց ժողովուրդի շարա-
 գործութեանը : Շատ անգամ ապաշխարութիւն
 էր քարոզում մարգարէից բերանով և շատ ան-
 ցամ էլ պատժումէր , բայց նրանք չը դարձան
 դէպի ճշմարիտ Աստուածը : Էս պատճառաւ էլ
 Աստուած նրանց վրայ բարկացաւ և մատնեց
 թշնամեաց ձեռքը : Ասորեստանցիք մեծ բազ-
 մութիւնով եկան առան Սամարիա քաղաքը ,
 կործանեցին թագաւորութիւնը , գերի տարան
 ժողովուրդին և հեռու քաղաքներ ցիրուցան ա-
 ըին : Եւ նրանց տեղ Ասորոց թագաւոր Սաղմա-
 նասարը ուղարկեց օտարազգիք , որոնք բնակե-
 ցան էնտեղ և Սամարացի կոչեցան : Եւ էսպէս
 բոլորովին վերջացաւ Իսրայէլի թագաւորութիւնը
 Ասորեստանի թագաւոր Սաղմանասարի ձեռքով
 722 տարի Քրիստոսի ծնունդից առաջ :

ՅԻ . ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱԻՈՐԵՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՅ ԹԱԳԱ-

ԻՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ :

Դ . Թագ . ԺԱ . ԺԸ . Ի . ԻԵ .

Իսրայէլի ցեղի թագաւորութիւնը բաժանուե-
լուց յետոյ, Դաւթի սերունդը թագաւորեց
միայն երկու ցեղի վրայ, այսինքն՝ Յուդայի և
Բենիամինի : Նրանց մայրաքաղաքն էր Երուսա-
ղէմը, ուր շինած էր Սողոմոնի տաճարը : Մեծ
մասը Յուդայի թագաւորներէց թողին ճշմարիտ
Աստուածը և կռոց երկրպագութիւն տւին : Քը-
սանից միայն ութը մնացին ճշմարիտ Աստուա-
ծապաշտ, որոնց անուններն են . Ասա, նրա
որդի Յովսափատը, Յովսա, Ամասիա, նրա որ-
դին Ազարիա, Յովթամ՝ Ազարիայի որդին,
Եզեկիա և Յովսիա :

Մէկ անգամ Դաւթի ցեղը բոլորովին պէտք է
ջնջուէր, բայց Աստուած հրաշքով ազատեց էս
թագաւորի սերունդէց միայն մէկին, որին խոս-
տացել էր, որ նրա ցեղէց պէտք է ծնուէր Մե-
սիան : Յովսափատի որդի Յովրամը ամուսնա-
ցած էր Աքաաբու աղջկայ Գոզոզիայի հետ : Յո-
վրամից յետոյ շուտով մեռաւ նրա որդի Ոքո-
զիէն : Սրա փառասէր և արեանարբու մայրը Գո-
զոզիէն ցանկանու մէր ինքը աիրապետել : Մտքումը

դրեց ջնջել թագաւորական բոլոր ցեղը : Կս կո-
 տորւածքի ժամանակը թագցրին Ոքոզիայի մէկ տա-
 րեկան որդուն Յովասին : Ծծմօր հետ միասին
 ազատեց նրան իր ազգական Յովիդա քահանայ-
 եայեալի կինը տաճարումը : Սա վեց տարի քա-
 հանայից հետ Աստծու տանը վարժեցաւ : Երբ
 եօթը տարեկան էլաւ քահանայապետը հաւաքեց
 քահանայից և ղևտացւոց և շրջապատեց տաճարը
 հաւատարիմ զինւորներով : Բոլոր ժողովուրդը
 մօտ էլան տաճարի մօտ : Քահանայապետը դուս-
 րերաւ երեխին և բարձր ձէնով ասաց , Ա՛զգ Յու-
 դայ , ահա՛ ձեր թագաւորը Յովաս , Ոքոզիայի
 որդին , որ ազատեցաւ Գողողիայի սրից : Բոլոր
 ազգի առջևը Յովասը օծեցաւ թագաւոր և տա-
 ճարը լքցեցաւ փողի հնչմունքով և ուրախու-
 թեան ձէնով : Յովասը սկիզբը Աստուածպաշ-
 տութեամբ էր թագաւորում , բայց Յովիդայից
 յետոյ՝ իշխանների կամքով թոյլ տւաւ Տաճար-
 ումը կուռքերին երկրպագութիւն տալ : Յովի-
 դայի որդին Չաքարիա քահանէն ընդդիմացաւ ,
 և էստուր համար քարկոծեցաւ տաճարի հայա-
 թումը : Յովասը շուտով կրեց իր պատիժը , Ա-
 սորւոց թագաւորի հարուածներով ինքն էլ
 սպանուեցաւ իրա ծառանների ձեռքով : Յովա-
 սից յետոյ Յուդայի ազգի վրայ յաջորդաբար

տիրեցին Աստուածապաշտ թագաւորներ՝ Ամասիա-
 յետոյ նրա որդին Ոզիա, որին յաջորդեց իր որ-
 դի Յովթամը, իսկ Յովթամի որդի Աքապը
 չը գնաց իր Աստուածապաշտ նախնեաց ճանա-
 պարհով, այլ կողպեց Սողոմոնի տաճարը և
 կռոց համար շատ սեղաններ շինեց: Աքապի որ-
 դի Եզեկիէն, որի ժամանակը աւերուած էր իս-
 րայէլի տէրութիւնը՝ բաց արաւ տաճարը, զար-
 դարեց, և քանդեց բոլոր կուռքերի սեղանները:
 Սրա ժամանակը Սենեքերիմ՝ Սաղմանասարի որդին
 պաշարեց Երուսաղէմը, բայց Աստու հրեշ-
 տակը գիշերով ջնջեց նրա զօրքը և նա թողաւ
 Երուսաղէմը և եդ գնաց Նինուէ:

Մանասէն սկիզբը պաշտպան էր կառապաշ-
 տութեանը, և անմեղ արիւնով ջրեց Երուսաղէ-
 մը, բայց երբ գերի լնկաւ Ասորեստան, նա սրը-
 տանց զղջացաւ Աստու առջևը և թողութիւն
 դտաւ: Ուսիա Մանասէի թոռը, որ ութ տարեկան
 թագաւորեց և մինչև իր մահը հաւատարիմ
 մնաց ճշմարիտ Աստուան:

Իսրայէլի թագաւորութիւնը կործանուելուց
 յետոյ, Յուդայի թագաւորութիւնը էլի հարիւր
 տարի տևեց: Բայց վերջը Աստու արդար դա-
 տաստանով մատնուեցաւ նա Բաբելոնացուց թագա-
 ւոր Նաբուգոդոնոսորի ձեռքը: Սա Յովակիմ

Յուդայի թագաւորին հարկատու շինեց : Սրանից
 յետոյ շուտով Նաբուգոդոնոսորը նրա որդի Յե-
 քոնիային բոլոր Յուդայի մեծամեծներով Բաբելոն
 զերի տարաւ : Տասը տարուց յետոյ Սեդե-
 կիա թագաւորը ուզեց ազատ լինել ծառայու-
 թեան լուծից : Նաբուգոդոնոսորը հրամայեց Սե-
 դեկիայի աչքի առջև սպանել նրա որդւոցը ա-
 մէնին և նրա աչքերն էլ փորել, էրել տաճարը և
 Երուսաղէմը քարուքանդ անել : Յուդայի ազ-
 գը իրա թագաւորով գերի գնաց Բաբելոն 588
 տարի Քրիստոսից առաջ : Երուսաղէմը մնաց
 աւերած և տաճարը քանդած, մինչև Պարսից
 Աիւրոս թագաւորի օրերը, որ եկաւ տիրեց Բա-
 բելոնին, Յուդայի գերիքը եղ գարձրեց իրանց
 երկիրը :

32. ԵՂԻԱ ԵՒ ԵՂԻՍԷ ՄԱՐԴԱՐԷԻՔԸ : Գ. Թագ. 2. Ժ. ԺԸ.

Իսրայէլի տասը ցեղը բաժնուելուց յետոյ Աստ-
 ուած շատ մարգարէք ուղարկեց ճշմարիտ հա-
 լատացեալներին մի թարեւու ու անզեղջ չարերին
 և մեղաւորներին իրանց չարագործութիւնից
 դարձնելու դէպի ճշմարտութիւնը : Ընդհանրա-
 պէս մարգարէք ասեցան նրանք, որոնց Աստ-
 ուած շարժումէր ներսից և հոգւով սրբով իմաց
 էր անում նրանց ծածուկ խորհուրդները և ա-
 պագայ լինելու բաները : Նմանապէս նրանց բերնով

խմաց էր անուժ ժողովուրդին իրա կամքը: Օրինակ՝
Մարգարէք են Մովսէս, Դաւիթ, Սամուէլ,
Ողոմոն և ուրիշ շատերը: Նմանապէս երևելիք
էին Եղիէն և Եղիսէն:

Երբ Իսրայէլի թագաւորներից ամենից չարը
և ամբարիշտը Աքաաբ և նրա կին Յեզաբէլը բա-
հաղու կռքատուն շինեցին և անգլթութեամբ
հալածու մէին մարգարէներին, Եղիա մարգարէն
երեք տարի ու կէս կապեց երկինքը և անձրև
չեկաւ, չորացաւ բոլոր երկիրը և սով ընկաւ:
Բայց ինքը Աստու հրամանով գնաց սկիզբը Քո-
ուսթի հեղեղի մօտ, յետոյ Սարեփիթա քաղաքը
մի այրի կնոջ մօտ, որի այլևրը և իւղը հրաշ-
քով շատացրեց և մեռեալ որդուն կենդանացրուց:
Իսրայէլացիք սովից և երաշտութիւնից տանջւած
զղջացան և դարձ եկան դէպի Ճշմարիտ Աստ-
ուածը: Աստուած էլ հրամայեց Եղիային գնալ
Աքաաբի մօտ և խոստացաւ անձրև տալ: Եղիէն
գնաց և ժողովել տւաւ ամենին Վարմելոս լիբան
վրայ, ուր Բահաղու քուրմերի ստութիւնը խայ-
տառակելու և նրանց խաբեբայութիւնը հաս-
տատելու համար՝ երկու զոհ պատրաստել տւաւ
և ասաց՝ Նա է Ճշմարիտ Աստուածը, որ եր-
կրնքից կրակ կ'ուղարկի իր զոհի վրայ. քու մերի
զոհը և իրանք քուրմերը խայտառակւած մնա-

ցին : Իսկ Եղիայի զօհի վրայ կրակ եկաւ երկնքից , վառեց զօհի տակի դրած փայտերը և էրեց զօհը : Ձէն տւին ամէնքը , ճշմարիտ է Եղիայի Աստուածը : Եղիէն սպանել տաւ Բաճաղու քուրմերին և ինքը գնաց Կարմելոս սարի դադաթը աղօթք անելու : Լսեց Աստուած նրա աղօթքը , անձրև եկաւ և թաց արաւ ցամաքած ու չորացած երկիրը :

33 . ԱՔԱԱԲԻ ԵՒ ՅԵԶԱՐԵԼԻ ՊԱՏԻԺԸ :

Ի . Թադ . ԺԹ . ԻԱ . ԻԲ . Դ . Թադ . Բ . Ե .

Թ . Ժ . ԺԴ .

Յեզաբէլը երբ լսեց Բաճաղու քուրմերի կոտորւելը , մահ խոստացաւ Եղիային , բայց Եղիէն քաշւեցաւ Արաբիայի անապատը : Նա էնտեղ մտածումէր Իսրայէլացւոց թշուառ վիճակի վրայ : Աստուած նրան մխիթարելու համար երևեցաւ և ասաց՝ կան էլի 7000 հողի , որոնք Բաճաղին երկրագաղութիւն չը տւին : Սրանից յետոյ Եղիէն Աստու հրամանով կրկին գնաց Իսրայէլ երկիրը Աքաաբի մօտ , յայտնելու նրան Աստու պատիժը , Նարաւթին անմեղ սպանելու և նրա այգին խրչելու համար : Երբ Աքաաբը Նարաւթից խլած այգումը ման էր դալիս՝ Եղիէն մօտ եկաւ և ասաց , էնտեղ կը թափուի քու արիւնը , ուր

Թափւեցաւ Նաբաւթի արիւնը և քու կնոջ
Յեղաբէլին շները կրողողեն : Երեք տարուց յե-
տոյ կատարւեցաւ մարդարէի խօսքը . Աքաաբին
ապանեցին պատերազմումը և նրա մարմինը կառ-
քով բերին Սամարիայ և Թաղեցին . յետոյ նրա
արիւնոտ կառքը լւացին էն տեղ , որ տեղ Թափ-
ւած էր Նաբաւթի արիւնը : Երբ Աքաաբի
տունը ջնջող Յէու զօրավարը տեսաւ Յեղաբէլին
պատուհանումը նստած , հրամայեց դուս քա-
շել նրան . ձիերը ոտնակոխ արին նրան և շը-
ները գողգոցին . նրա որդի Յերոբոամի գլուխը
կտրեցին և միւս 70 որդւոց էլ կոտորեցին :
Էսպէս ջնջւեցաւ Աքաաբի տունը :

Արանից յետոյ Եղիա մարդարէն օծեց Ասոր-
ծու հրամանով իր աշակերտ Եղիսէին և փչեց
իւր հողին նրա վրայ , և նրա առաջ երկինքը վերա-
ցաւ : Սա էլ շատ հրաշքներ արաւ . մէկ հարուստ
Ասորի Նէեման անուն երեք անգամ Յորդանան
գետումը լւանալ տալով բժշկեց բորոտութիւնից ,
որն որ իր բոլոր ոսկին ու արծաթը նրան էր
ուզում ընծայի , բայց Եղիսէն չը վեր կալաւ ,
իսկ նրա ծառայ Գէեզին՝ Եղիսէից Թաղուն նը-
րանից ընծաներ ուզեց և պատժւեցաւ Նէեմանի
բորոտութիւնով : Եղիսէն մէկ մեռելի էլ կենդա-
նացրուց Թաղելու ժամանակը , երբ մեռելի ոս-
կորներին դիպաւ :

34 • ՄԱՐԴԱՐԷՔ ԵՒ ՆՐԱՆՅ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ :

ԵՍ • Զ • ԵՐ • Ա •

Ամուլսայ որդի Եսային բնակուամէր Յուդայի երկրումը, Ողիա, Յովլաթամ, Աքաղ և Եղեկիայ թագաւորների ժամանակը: Որքան որ տխրում էր նա թագաւորների չարութեան և մեղքերի վրայ, էնքան էլ ուրախանումէր բարի թագաւորների Աստուածապաշտութեան վրայ: Եղեկիէն, որ Յուդայի թագաւորների ամէնից աստուածապաշտն էր, Ասորեստանի թագաւորից մեծ ահ ունէր, որովհետև սրա ժամանակը Ասորեստանի Սաղմանասար թագաւորը կործանեց Սամարիայի թագաւորութիւնը և նրա որդի Սենեքերիմը պաշարեց Երուսաղէմը: Բայց Եսայի մարգարէի աղօթքով օգնեց Աստուած նրան: Նմանապէս նրա ծանր հիւանդութեան ժամանակը հրաշքով արեգակի շուաքը տասն աստիճան յետ դարձնելով՝ բժշկեց: Նա վառւած զգացմունքով խօսումէր Աստծու և նրանց երջանկութեան վրայ, որոնք հաւատքով ճանաչում ու պաշտում էին Աստծուն: Նա յայտնի մարգարէացաւ Գաւթիէն զաւակի վրայ, որնոր պէտք է ծնւէր կուսից մարդկանց փրկելու. մարգարէացաւ նրա չարչարանքները, որ պիտի կրէր մարդկային ազգի ազատութեան համար: Ամէնից պարզ գուշակեց

Մեսիայի՝ Յիսուսի, Քրիստոսի ծնունդը, չար-
չարանքը և փառքը:

Երեմիա մարգարէն՝ մարգարէացաւ Մեսիայի
գալը, յորդորելով ժողովուրդին ապաշխարու-
թիւն. գուշակեց Երուսաղէմի կործանումը և
մինչև անգամ ինքն էլ ականատես էլաւ իր գու-
շակութեան կատարածին: Դանիէլ մարգարէն
մարգարէացաւ Կայսերների յաջորդութիւնը մին-
չև Մեսիայի գալը, նմանապէս յայտնեց նրա
գալու ժամանակը. և թէ նա պէտք է սպանւի
ժողովրդի ձեռքից, Երուսաղէմը պիտի կործանւի,
Հրէայք պէտք է ցիրուցան լինեն և կորցնեն ի-
րանց թագաւորութիւնը:

Մարգարէք՝ Եզեկիէլ, Ովսէ, Յովէլ, Ամոս,
Աբդիու, Յովնան, Միքիայ, Անգէաս, Նա-
ւում, Ամբակում, Սոփոնիա, Զաքարիա և Մա-
ղաքիայ մարգարէացան նմանապէս Մեսիայի, Յու-
դայի և ուրիշ ազգերի վիճակների վրայ:

35 • ՅՈՎՆԱՆ ՄԱՐԳԱՐԷՆ:

Յովն • Բ • Գ • Դ •

Յովնան մարգարէն բնակւումէր Իսրայէլի եր-
կրումը: Աստուած հրամայեց նրան գնալ և
քարոզել ապաշխարութիւն Նինուէ քաղաքումը,
որ լիքն էր ամէն չարագործութիւններով: Երբ

Յովնանը կամենալով Աստուծու երեսից փախչել,
 նաւը նստած գնում էր Թարսիս . յանկարծ
 քամի վեր կացաւ և ծովը սկսաւ ստորիկ ալե-
 կոծել : Ամէնքը ահից սկսան դողալ աղօթք անել :
 Ին ժամանակը Յովնանը քնած էր նաւի մի քուն-
 ջոււմը , զարթեցրեց նրան նաւապետը . վեր կաց,
 աղօթք արա՛ Աստուծո՛ւն , տասց նա , գուցէ Աստ-
 ուած աղափ մեզ էս վտանգից : Ամէնքը մտա-
 ծեցին՝ թէ էս մրրիկը իրանց մէջ մէկ չարա-
 գործի պատժելու համար է . վիճակ դձեցին,
 և վիճակը ընկաւ Յովնանին : Նա էլ չը թող-
 ցրեց իրա փախչելը Աստուծու երեսից և պատ-
 մեց բոլորը : Յովնան զգաց , որ իր մեղքի
 պատիժն է էդ փոթորիկը , յօժարեցաւ ծովը դձել
 իրան , որ դադարի մրրիկը : Նաւավարները խրդ-
 ճալով աշխատումէին , գոնէ ծովի ափը տանել
 նաւը , բայց չը կարացին . վերջը աղօթք արին՝
 ասելով . Տէ՛ր , սրա մահը մեզ մեղք մի՛ հա-
 մարիր , և վեր առան դձեցին ծովը՝ և խկոյն ծովի
 խռովութիւնը դադարեցաւ : Աստուած հրա-
 մայեց ծովումը կէտ ձկան՝ կուլ տալ Յովնանին ,
 Նա երեք օր և երեք գիշեր մնաց ձկան փորումը :
 Էս օրինակ էր մեր Փրկչի երեքօրեայ թաղ-
 ման և յարութեանը : Յովնանը սկսաւ ձկան
 փորումը աղօթք անել , որի մէջ շատ մարգա-

րէութիւններ է պարունակում: Աստուած լսեց նրա աղօթքը և կէտին հրամայեց ցամաքը գծել նրան:

Երկրորդ անգամ հրամայեց Աստուած Յովնանին գնալ Նինուէ և քարոզել: Նա գնաց շուտով և սկսաւ քարոզել և ասել. ապաշխարեցէք, երեք օրից պիտի Նինուէն կործանուի: Նինուէացիք դարձան, ապաշխարեցին պահօք, քուրճ հագնելով և մօխրի վրայ նստելով ամէնքը՝ թաղաւորից սկսած մինչև յետինը. թողին իրանց շարութիւնները և ջերմեռանդ սրտով աղօթք էին անում: Աստուած տեսաւ նրանց սրտանց զղջումը և ներեց նրանց: Յովնանը դուս եկաւ քաղաքից դադրած և նստաւ մէկ բլուրի վրայ քաղաքի դէմուդէմը: Էն ժամանակը Աստուած հրամանով մէկ դդմենի դուս եկաւ նրա գլխի տակը շուաք անելու արեգակի շոքից: Նա մտիկ էր անում քաղաքին և սպասումէր իրա դուշակութեան վախճանին: Բայց տեսաւ, որ իր մարգարէութիւնը չ'ի կատարւում, սկսաւ տրտմել և Աստուանից մահ խնդրել և ասաց. ահա՛, ինչի՞ չ'էի ուզում Նինուէ գնալ. ես գիտէի Տէր, դու երկայնմիտ ես և ողորմած, և թողութիւն կրտասա զղջացած մեղաւորներին: Հիմա աղաչումեմ, Տէր, առ իմ հողիս. լաւ է ինձ մեռնիլ, քան

Թէ ապրել: Միւս օրը տեսաւ Յովնանը դդմենին չորացած, շատ տրտմեցաւ և սկսաւ կրկին մահ խնդրել, որովհետև Աստուած խնայեց դդմենին: Կն ժամանակը Աստուած ասաց նրան, Յովնան, դու դդմենին չ'ես տնկել, ոչինչ հողս չ'ես քաշել նրա համար, բայց տրտմումես նրա չորանայու համար: Նա մէկ գիշերումը դուս եկաւ, և միւս գիշերը չորացաւ: Ապա դու ի՞նչպէս ես ցաւում և տրտմում, և ուզումես, որ ես ջնջեմ նինուէ քաղաքը, ուր հազար հազար մարդիկ կան, որ դեռ չ'են կարող բարին ու չարը ճանաչել, նաև շատ անասուններ:

36. ՅՈՒԴԻԹ: Յող. Ա. Է. Ը. ԹԵ.

Մէկ անգամ Բաբելոնացոց Նաբուգոդոնոսորը Թազաւորը կռիւ էր տալիս Մարտց Արփազաադ Թազաւորի հետ: Նա օգնութիւն խնդրեց հարևան ազգերից, որոնց մէջն էին և Յուդայի բնակիչները: Երբ քաջութիւնով կատարեց իր յաղթութիւնը Մեդացոց Թազաւորի դէմ, նա մտքումը դրաւ վրէժը հանել նրանցից, որ չ'օգնեցին նրան: Սրա համար իր պորավար Հովէփեռանեսին մեծ պոքով ուղարկեց նրանց դէմ: Կն ժամանակը Յուդայի Թազաւորն էլ ընկաւ նոյն վատանդի մէջ: Յուդայի ժողովուրդը սկսաւ պաս

պահել և խօսք կապել, որ մինչև մահը պաշար-
 պանեն իրանց : Հողէփեռնեօր զարմացած մնաց
 նրանց հաստատ խորհուրդի վրայ : Նա պաշա-
 րեց Բեռուղիա ամրոցը, կապեց ջրի ճանապար-
 հը : Վերջապէս ժողովուրդը սաստիկ նեղութիւն
 էր քաշում և շատ յուսահատուած էր : Հինգ օր
 կրկին պաս նշանակեցին և վճռեցին, եթէ էն
 օրերումը Աստուծու օգնութիւնը չը հասնի նրանց՝
 բերդը տան թշնամու ձեռքը :

Բեռուղիայումը կար մէկ պարկեշտ և զե-
 ղեցիկ կին՝ անունը Յուդիթ : Նա իր մտքումը
 դրել էր բերդը ազատի, բայց ոչովին բան չասաց
 միայն խնդրեց որ ջերմեռանդ աղօթք անեն իրա
 համար : Յուդիթը փոխեց սև շորերը . զուքե-
 ցաւ թանկագին զուքսերով և գնաց թշնամու
 բանակը : Ներկայացաւ Հողէփեռնեսին և ասաց,
 թէ ես կարող եմ շուտով քու ձեռքը դնել քա-
 ղաքը, միայն հրաման տուր, որ ամէն առաւօտ
 և երեկոյ բանակից դուս գնանք աղօթք անելու :
 Հողէփեռնէսը սիրահարուած Յուդիթի զեղեցկու-
 թեան և խելքին՝ իսկոյն կամք տուաւ և կար-
 զադրեց կատարել Յուդիթի խնդիրքը :

Վրայ չորս օրը հրաւիրեց Յուդիթին ճաշի, նս-
 տացրեց իր սեղանի վրայ . կեր, խմի՛ր և ուրա-
 խացիր մեզ հետ, ասաց նրան Հողէփեռնէսը :

Ես ուրախ եմ, ասաց Յուդիթը, էս մեծ պա-
 տիւ է ինձ. որ ես վայելումեմ էս օր: Հողէփեռ-
 նէսը ուրախութիւնից էլ չէր խմանում անչափ
 կերածն ու խմածը: Ճաշից յետոյ վրանումը
 մնացին միայն Յուդիթը և Հողէփեռնէսը, որ
 հարբածէր էնպէս, որ անզգայ քնած մնաց ան-
 կողնի վրայ: Էն ժամանակը մօտ գնաց Յուդիթը
 և ասաց արտասուներով. Տէր Աստուած իսրայ-
 էլի, զօրացուր ինձ: Էս ասելով վեր առաւ պա-
 տից սուրը, կտրեց նրա գլուխը և նրա աղախինը
 դրաւ պարկումը: Միւս առաւօտը ինչպէս նրանց
 սովորութիւնն էր՝ դուս գնացին բանակից աղօթք
 անելու և էլ եղ չեկան, այլ մտան շուտով քա-
 ղաքը: Յուդիթը ցոյց տւեց Հողէփեռնէսի գլուխը
 քաղաքի ծերերին: Բետուղիայումը ամէնքը ու-
 ռախացան և առաջ գնացին թշնամեաց դէմ:
 Նրանք չ'խմանալով որ իրանց զօրավարը գլխատ-
 շել է, ծաղը էին անում Բետուղիացւոց: Վեր-
 ջը տեսան որ Հողէփեռնէսը չէ զարթնում, մտան
 ներս վրանը և տեսան նրա գլուխը կտրած մար-
 մինը միայն: Մեծ շփոթ ընկաւ թշնամու բա-
 նակի մէջ. զօրքը թողաւ բանակը և փախաւ:
 Բետուղիացիք մտան բանակը և էնքան կողո-
 պուրտ գտան, մինչև երեսուն օր հապիւ տարան
 քաղաքը: Յուդիթը դոհացաւ և գովասանական
 երգ ասաց Աստծուն,

37. ԲԱՐԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ . ԴԱՆԻԷԼ ԵՒ ԵՐԵՒ ՄԱՆԻ

ԿՈՒՆԲ : Դան . Ա .

Բարեւոն տարած Հրէից մէջ շատ կային թա-
գաւորական ցեղից և իշխանների որդիք : Նա-
բուգոդոնոսորը հրամայեց նրանցից ջոկել խելք և
սիրուն երեխաքը, սորվացնել նրանց ամէն գի-
տութիւն և արհեստներ և կերակրել նրանց իրա-
սեղանից : Նրանց անուններն էին . Գանիէլ, Սե-
դրակ, Միսակ և Աբեգնագով : Նրանք մաքուր
գրին ոչ ուտել և ոչ խմել նրանց անուշ կերա-
կուրներից : Նրանք էս հասակի մէջ արհամար-
հումէին էս կեանքի լաւութիւնները և փառքը
և մտածումին միայն Աստու օրէնքները պա-
հել : Հասկանումէին նրանք՝ թէ թագաւորի սե-
ղանի վրայ անկարելի է, որ չը լինէր Մովսէսի օրէնքով
արգելած կերակուրներից : Նրանց օրէնքը չը կո-
տրելու համար՝ բաւականանումէին միայն հացով,
ջրով և ընդեղէններով : Նրանց վերակացուն ա-
սումէր նրանց՝ եթէ թագաւորը տեսնի ձեր ե-
րեսը դեղնած և տխուր՝ կը բարկանայ իմ վրէն :
Գանիէլը տասն օր ժամանակ ուզեց փորձելու :
Տասնօրեայ փորձից յետոյ, նրանք աւելի առողջ և
զուարթ երևեցան թագաւորի սեղանից ուտող-
ներից : Նրանք մեծ յառաջադիմութիւն ցոյց
տւին ուսման մէջ, և Բարեւոնի խնամանակներից էլ

անցկացրին : Նրանց կարգեցին իրանց երևելի
գործերի վրայ տեսուչ և կառավարիչ :

38 . ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆԻ ՎՍՈՒՍԾ ՀՆՈՏՈՒՄԸ :

Դ. ան . Գ .

Նաբուգոդոնոսորը մէկ անգամ ոսկէ պատկեր
շինել աւաւ և դրաւ Գլերայ դաշտումը : Հրա-
մայեց ամէնին գնալ էն պատկերին երկրպագու-
թիւն տալ : Սեդրաք , Միսաք և Աբեղնագով , որ
և Սնանիա , Ագարիա , և Միսայէլ էլ կոչեցան
լաւ համարեցին մեռներ քանթէ նրանց չ'Աստ-
ուածը պաշտել , և ճշմարիտ Աստու փառքը ոս-
կէ պատկերին տալ : Էն ժամանակը Նաբուգո-
դոդոնոսորը սաստիկ շարացաւ նրանց վրայ և հրա-
մայեց եօթնպատիկ աւելի առաջւանից վառել
փուռը և կապած գծել նրանց նրա մէջ , որ բո-
լորովին էրւին : Բայց նրանք երեքը օրհնում ու
գովումէին Տէր Աստուան կրակի մէջ , պատճառ
որ կրակը չը կպաւ նրանց մարմուտն , ոչ գլխի
մազերը խանձեցան և ոչ կրակի հոտ եկաւ նրան-
ցից : Կս որ աեսաւ Նաբուգոդոնոսորը սարսափե-
ցաւ և ասաց . օրհնեալ է ձեր Աստուածը , որ ու-
ղարկեց իր հրեշտակին փրկելու նրանց , որ իրանց
յոյսը դնումեն նրա վրայ : Այսուհետեւ ով կը
համարձակի հայհոյել Աստուան՝ մահով կը մեռնի :

39. ԳԱՆԻԷԼ, ՄԱՐԳԱՐԷՆ : Գան . Բ . Գ . Ե .

Նաբուգոդոնոսոր թագաւորը մէկ անգամ երազ տեսաւ և շատ շիտթւեցաւ : Նրա մաքումը չը մնաց երազը , ահ էր ընկել նրա սրտումը , շատ էր վախենում և միշտ էն երազի վրայ էր մտածում : Կանչեց նա երազահաններին և քուրմերին : Ոչ մէկը առանց երազը լսելու չը կարացին մեկնել նրան : Իսկ թագաւորը պահանջում էր նրանցից իմանալ իրա մոռացած երազը , եթէ ոչ՝ խոտանում էր սպանել նրանց և քանդել տները , ով չ'ի պատմի նրա երազը : Էս որ իմացաւ Գանիէլը՝ զնաց թագաւորի պաշտօնավարի մօտ , իմացաւ Նաբուգոդոնոսորի բարկութիւնը , և էդ պատճառաւ Աստծու զօրութեամբ յանձն առաւ երազի մեկնութիւնը : Գանիէլը իր ընկերաց յայտնեց ամէնը և միասին աղօթք արին Աստծուն : Աստուած լսեց նրանց աղօթքը և զիշերով երազումը յայտնեց Գանիէլին թագաւորի երազի խորհուրդը : Առաւօտը զոհացաւ Աստծուն և զնաց պալատը : Գանիէլը ներկայացաւ թագաւորին և ասաց , ոչ ոք կարող չ'է մեկնել քու երազը իր իմաստութիւնով՝ եթէ Աստուած ինքը չը յայտնի նրան : Մինչև որ Գանիէլը պատմում էր, նա միաքն էր բերում իր տեսած երազը բոլորովին : Նաբուգոդոնոսորը որ ի-

մացաւ իր երազի մեկնութիւնը մանրամասն հա-
մաձայն իր տեսածին, փառք տւաւ Աստուծոն և
համոզեցաւ նրա ամենակարող զօրութեանը
Գանիէլը մեծ պարգևներ ստացաւ թագաւորից
և առաջին պաշտօնակատար կարգեցաւ պալա-
տումը . և իր ընկերներին էլ կարգել տւաւ Բաբելոնի
երկրի կառավարիչ, և մեծ օգնութիւններ
արաւ իր ազգին :

Նաբուգոդոնոսորը էլի տեսաւ երազ . Գանիէլը
մեկնեց նրան՝ թէ Աստուած կամենում, նուա-
ճել, խորտակել քու ամբարտաւանութիւնը .
դուս կ'ընկնես գահիցդ, խելքից կըլնես և ա-
նապատումը գաղանների պէս կը կերակրես, մին-
չև կը հաւատաս՝ թէ Աստուած մէկ է և ա-
մենազօր, և թէ՛ Նա է տւողը և առնողը իշխա-
նութիւնը և թագաւորութիւնը :

Կատարեցաւ Գանիէլի գուշակութիւնը շու-
տով . նա խելացնորեցաւ, ընկաւ անապատները
և գաղանների հետ էր բնակում : Աւ էսպէս
հպարտութիւնը և փառասիրութիւնը զրկումն
մարդուս ամէն բարութիւնից և հաւասարումն
անասուններին և վայրենիներին :

Մեռաւ Նաբուգոդոնոսորը և նրա աթոռը
նստաւ նրա որդի Բաղդասարը : Նա մէկ անգամ
մեծ մեծարք արաւ և հրաւիրեց բոլոր մեծա-

Մեծներին : Մեղանի վրայ բերել տւաւ Երուսա-
 զէմի տաճարի ամանները, որ իրա հայրը կո-
 ղուպտել էր, և նրանցով գինի էին խմում և
 վառւաւորումէին իրանց կռուքերը. և ոչ մէկը չ'էր
 մտածում վառւաւորել ամենազօր ճշմարիտ Աստ-
 ծուն : Յանկարծ մէկ ձեռք երևեցաւ, և գրումէր
 :էս անձանօթ բառերը, Մանէ, Թեկեղ, Փարէս :
 Թագաւորը սարսափած, տեսնումէր բառերը, ձեռ-
 քը և մատները, որ շարժումէր և գրումէր ամենի
 առաջ : Կանչել տւաւ էլի բոլոր գիտնականներին,
 բայց ոչ ոք չը կարաց կարդալ և մ. կնել էն բառերի
 միտքը բացի Դանիէլից, որ ասաց թէ՛ էս բառերը
 նշանակումեն՝ չափեցի, կշռեցի և բաժանեցի, և
 թէ Բաղդասարի Թագաւորութիւնը կը բաժան-
 ուի և կընկնի Մեղացւոց և Պարսից ձեռքը :
 Նոյն գիշերը սպանեցաւ Բաղդասարը և Թագա-
 ւորութիւնը առաւ Մարաց Դարեհ Թագաւորը :

40 . ԴԱՆԻԷԼ ԱՌԻԻԾՆԵՐԻ ԲԵՐՆՈՒՄԸ : Դան . 2 .

Մարաց Դարեհ Թագաւորը շատ նախարար-
 ներ կարգեց և նրանց վրայ հրամանատար նշա-
 նակեց Դանիէլին : Նախարարները նախանձումէին
 և պտոճառ էին պտռում նրան սպանելու, բայց
 ոչ ինչ մեղք չէին կարում գտնել, բայց ի հաւա-
 տարիմ լինելը և Աստծու օրէնք պահելը : Մէկ

անգամ ամէնքը հաւաքւեցան և ասացին թա-
 գաւորին. Թագաւոր, խորհուրդ արին քո բո-
 լոր զօրավարները, նախարարները, և կուսակալ-
 ները արքունի հաստատութիւնով հաստատել էս
 մէկ ուխտը — ով որ երեսուն օր մէկ խնդր-
 ւածք անի որ և իցէ աստժանից կամ մարդուց բաց
 ի քեզ, առիւծների գութը ընկնի: Հաստատեց
 թագաւորը գրով և հրաման գրեց ամէն տեղ:
 Դանիէլը, երբ լսեց էս հրամանը՝ տուն մտաւ և
 պատուհանները բաց՝ սկսաւ ծունր դնել և աղօթք
 անել երեք ժամ: Մարդիկ էս տեսան: Մտն է-
 լան և ասացին թագաւորին, թէ Դանիէլը չը
 հնազանդւեցաւ քու հրամանին: Թագաւորը երբ
 լսեց՝ տրտմեցաւ և ամէն հնարքով մինչև իրիկ-
 նահացը աշխատումէր ազատել նրան, բայց չը
 կարաց: Գձեցին Դանիէլին առիւծների գութը և
 մեծ քար դրին բերնին և թագաւորը իր մատա-
 նիքով կնքեց փոսի բերանը: Կապեց Աստուած
 առիւծների բերանը և չը լափեցին Դանիէլին:
 Առաւօտը լուսով թագաւորը շուտ գնաց և
 գութի բերնին որ հասաւ՝ ձէն տւեց. Դանիէլ,
 կենդանի Աստուածաբայ, քու Աստուածը, որին
 դու միշտ պաշտումէիր, կարաց ազատել քեզ
 առիւծների բերնից: Դանիէլը ասաց՝ Թագաւոր,
 իմ Աստուածը ուղարկեց իր հրեշտակը և կապեց

առիւծների բերանը: Իմ արդարութիւնը նրա
 առջևն է. և քու առջևն էլ ոչինչ փնտս չեմ
 արել: Էն ժամանակը ուրախացաւ թագաւորը,
 հրամայեց հանել Դանիէլին և դնել նոյն գուբը
 նրա շարախօսներին իրանց տնովը: Սրանից յե-
 սոյ Դարեհը հրաման տւաւ, որ պաշտեն ճշմա-
 րիտ Աստծուն, պատճառոր նա է կենդանի Ա-
 ստուածը և կայ յաւիտեան. նրա թագաւորու-
 թիւնը չ'ի ոչնչանայ, օգնական է լինում իրա
 հաւատացողներին և փրկումէ, հրաշքներ է գոր-
 ծում երկնքումը և երկրումը, որ փրկեց Դանի-
 էլին առիւծների բերնից:

41. ԵՍԹ.ԵՐ: Եսթ. Ա. Գ.

Եսթերի ծնողքը, որ գերի Հրէաներից էին,
 Պարսկաստանումն էին բնակւում Արտաշէս երկայ-
 նարագուկ թագաւորի ժամանակը: Նրա ծնողքը
 մեռան, և նա մնաց որք օտար երկրումը: Բայց
 Աստուած որբերի Տէրը՝ պաշտասպան տւաւ նրան
 իր հօրեղբօրորդի Մուրթքէին: Սա աստուածա-
 պաշտ և բարի մարդ էր, որ մեծացրուց և վար-
 ժեց Եսթերին ճշմարիտ հաւատքով և Աստծու
 սիրով: Եսթերը պարկեշտ, բարի, խելօք և դե-
 ղեցիկ աղջիկ էր:

Արտաշէսը հզօր թագաւոր էր և սիրումէր

Հարիւր քառասուն և եօթն դաւառներին :
 Սա մէկ անգամ մեծ մեծարք արաւ իր երևելի
 իշխանների և աստիճանաւորների համար և մեծ
 սօն կատարեց : Էս մեծարքը եօթն օր քա-
 շեց : Եօթներորդ օրը թագաւորը աւելի ուրա-
 խութիւնից ուղեց, որ իր կին Ստեփանէն թա-
 գաւորական զուգսով զարգարած դուս դայ էն
 բաղմութեան մէջ մեծարքումը : Նա ամբարտա-
 ւանութիւնից չը կատարեց իր մտրդու կամքը :
 Թագաւորը բարկացած թողաւ նրան և հրամայեց
 ուրիշ աւելի բարի և հեզ աղջիկ պտուել :

Բերին թագաւորի մօտ սիրուն աղջկերք և
 նրանց մէջ հաւանեց Նսթերին, և թագաւորական
 թագ դրաւ նրա գլխին և ամուսնացաւ նրա հետ :
 Նսթերին պատուելու համար՝ մեծ վարձք արաւ
 թագաւորը, մէկ տարի հարկից ազատեց բոլոր
 ժողովուրդին և առատ առատ պարգևներ բա-
 ժնեց : Նա էն քան ուրախ էր, և ուզումէր որ իր
 բոլոր թագաւորութիւնն էլ մասնակից լինի էն
 ուրախութեանը : Բայց Նսթերի բարի սիրտը չը
 փոխւեցաւ ամենևին և հպարտութեան քամին
 տեղիք չ'ունեցաւ նրա սրտումը : Նա էլի պատ-
 ւում ու սիրում էր Մուրթքէին, ինչպէս առաջ :

42. ՄՈՒՐԹՔԷՆ ԵՒ ՀԱՄԱՆԸ : ԵՄԹ . Գ . Դ . Ժ .

ԺԳ . ԺԴ . ԺԵ .

Մուրթքէն միշտ գնումէր թագաւորի պալատը, որ իմանայ Եսթերի որպիսութիւնը : Մէկ անգամ նա լսեց, որ թագաւորի դռան երկու մարդիկ խօսք էին կապում թագաւորին սպանելու : Մուրթքէն յայտնեց էս թագուհուն, և նա իբր իրանից՝ թագաւորին իմաց տւաւ. քննուեցաւ էս չարագործութիւնը, հաստատուեցաւ դաւաձանների չար խորհուրդը և գրուեցաւ էս յիշատակի գրքու մը : Արտաշէսը շատ սիրեց Համանին, կարգեց նախարար և բարձրացրեց նրան իր սիրելիներից ամէնից բարձր աստիճանով. ամէնքը պէտք է երկրպագութիւն տային նրան, բայց Մուրթքէն ծունր չէր գնում նրան. սրա համար չարխօսուցին Համանի մօտ, նա էլ շատ բարկացած նրա վրայ, մտածում էր ջնջել բոլոր Հրէից ազգը, որոնք Արտաշէսի իշխանութեան տակն էին : Համանը չարխօսեց թագաւորի առաջը և ապտտամբ ձեւացնելով հրաման առաւ կոտորել նրանց ամէնին :

Մուրթքէն, երբ լսեց էս հրամանը՝ սարսափեցաւ, և սկսաւ աղօթք անել և Աստծանից օգնութիւն խնդրել իր ազգի փրկութեան համար : Նա թագաւորի էն վճռի օրինակը ուղարկեց Եսթերին, և խնդրումէր ողորմութիւն խնդրել

նրանից : Նմանապէս Մուրթքէն ապսպրեց նրան,
 չը կարծես՝ թէ դու ազատ կը մնաս էս կոտորածից : Աստուած հասցրեց քեզ էդ տեղը, որ
 դու միջոց լինիս Հրէից աղգի փրկութեանը :
 Զգալի թւեցաւ Մուրթքէի խօսքերը Նսթերին .
 արտասուներով ու լացով ելիք օր և երեք դիշեր
 աղօթք արաւ ասելով Աստուած, երկնքի և երկրի
 Տէր, էս զրկւած եմ ամէնից, չունիմ ինձ
 պաշտպան և տէր . օգնի՛ր ինձ . օգնի՛ր քու աղ-
 ցիդ էս նեղութեան մէջ, եզոբի՛ր մեզ, հա-
 մարձակութիւն տո՛ւր ինձ . իմաստութիւն տո՛ւր
 լեզուիս, որով կարողանամ թագաւորի սիրտը շար-
 ժել : Տէ՛ր ամենագէտ, դու գիտես, և քննումես
 իմ սիրտս, որ ո՛չ թագաւորական թագը և ո՛չ փառքը
 չ'են ուրախացնում ինձ, այլ դու միայն էիր իմ
 մխիթարութիւնը և բոլորովին ուրախութիւնը :
 Ասի՛ր քու ծառայից աղօթքը, որոց յոյսը քեզ
 վրայ է . փրկի՛ր նրանց մահից, և ազատի ինձ
 էս վտանգից :

Աղօթքից յետոյ չորրորդ օրը Նսթերը վար-
 դարւեցաւ թագաւորական փառաւոր զուգսով,
 երկու աղախնով . մէկի վրայ թեք ընկած, իսկ
 միւսը երկար ծիրանի շորի փեշերը բարձրացրած՝
 դնաց թագաւորի մօտ մտաւ սենեակը : Արտաշէսը
 մտիկ արաւ Նսթերին և բարկութիւնը շարժե-

ցաւ երեսից : Թագուհին թալկացած դեղնեցաւ,
 և ընկաւ աղախնու կռան վրայ : Բայց շուտով
 փարատեցաւ թագաւորի բարկութիւնը . ցած
 եկաւ դահից . ինքը բռնեց Նսթերին, մինչև որ
 ուշքի եկաւ նա : Աերջապէս քաղցրութեամբ
 ասաց նա . Նսթեր, դու չե՞ս մեռնի, դու ա-
 զատ ես էն օրէնքից՝ որ դատապարտում է նրանց,
 ով որ առանց իմ հրամանի կը ներկայանայ ինձ :
 Տեսաւ որ նրա ուժը եղ եկաւ, շարունակեց թա-
 գաւորը . թագուհի, խնդրի՛ր, ինչ կամենումես,
 ես մինչև թագաւորութեանս կէտը պատրաստ եմ
 քեզ տալ : Նսթերը խնդրեց Համանի հետ գնալ
 նրա մօտ ճաշին . էն ժամանակը կը յայտնեմ
 ասաց, քեզ իմ խնդիրքս :

43 . ՄՈՒՐԹ ՔԷԻ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ : Եթ . Ե . 2 .

Թագաւորը Համանի հետ ճաշը կերաւ Նս-
 թերի մօտ : Միւս օրւայ համար էլ խնդրեց
 թագաւորից Համանի հետ ճաշի գալ իր մօտ, և
 երբորդ օրը կը յայտնեմ իմ խնդիրքս ասաց Նս-
 թերը : Ճաշից յետոյ Համանը ուրախ գնում էր
 տուն, տեսնելով իրան էն փառքին հասած : Բայց
 չար մարդու սրտի ուրախութիւնը երկարատև
 չէ, նա տուն գնալիս տեսաւ Մուրթքէին պալա-
 տի դրանը, և նա ոտի վրայ չը կանգնեց նրա ա-

առաջը : Էն բոպէին կորաւ Համանի ուրախութիւնը :
 Նա նեղացած դնաց տունն իւ մէկ մէկ պատմու-
 մէր կնոջը : Բայց էս ամէնը չէ ուրախացնում
 ինձ , սրտիս ցաւ է տալի ամէն մէկ անգամ Մուրթ-
 քէին տեսնելիս պալատումը : Կանգնել տունը կա-
 խաղան ասումէին նրան , իր կինը և բարեկամները ,
 և էգուցէէտ հրաման առ թագաւորից Մուրթքէին
 կախ անել : Ոչ մէկ ժամանակ էլ քու սիրտդ չի
 պղտորւի : Մուրթքէի սիրտը բոլորովին խաղաղ էր
 և չէր սպասում էնպիսի մահին :

Էն գիշերը թագաւորի քունը կտրւեցաւ և
 անքնութիւնից առաջ եկած շփոթութիւնը խա-
 ղաղայնելու համար՝ հրամայեց իր թագաւորու-
 թեան ժամանակագիրը կարդալ : Աստուած ա-
 մենակարող , ո՞վ է , որ չի հաւատում քու նա-
 խախնամութեանը : — Բացւեցաւ դրի հենց էն
 տեղը , որ տեղ գրուած էր երկու նախարարների
 դաւաճանութիւնը թագաւորի կեանքի դէմ , որ
 բաց էր արել Մուրթքէն : Ինչո՞վ վարձատրւեցաւ
 Մուրթքէի հաւատարմութիւնը , հարցրեց թա-
 գաւորը : Ոչնչով , ասաց կարդացողը : Թագաւորը
 ամաչեց և մտքումը դրաւ միւս օրը անպատճառ
 վարձատրել Մուրթքէին : Տէս , օքսին չը կայ միւս
 սենեակումը , կանչի՛ր , ասաց թագաւորը : Հա-
 մանը մտաւ ներս , որ առաւօտը վաղ եկել էր

Մուրթքէին կախ անելու հրամանը խնդրել: Համանին հարցրեց թագաւորը. ի՞նչ պէտք է անել էն մարդուն, որին ես ուզումեմ, որ մեծ պատիւ տամ: Համանը կարծելով թէ թագաւորը իրան պէտք է տայ էն պատիւը, ասաց նա, ում որ թագաւորը ուզումէ մեծ պատիւ տալ, պէտք է հազցնի էն շորերը, որնոր բանեցնումէ թագաւորը. նստի էն ձիու վրայ, որի վրայ հեծնումէ թագաւորը, և նրա նախարարներից առաջինը բռնի ձին և պտուտ ածի քաղաքի մէջ ձէն տալով թէ էսպէս փառաւորումէ նա, ով որ հաւատարմութիւն է անում թագաւորին:

Ետո բարի, ասաց թագաւորը, դնա, ուրեմն պատրաստիր ամէնը ինչպէս դու ասացիր: Եւ դու ինչպէս իմ առաջին նախարարը կրմանաձես բոլոր քաղաքի միջով Մուրթքէին, որ միշտ իմ դրան մօտ նստած է: Բայց տես, ոչինչ չը մոռանաս: Նա իսկու թեամբ կատարեց թագաւորի հրամանը: Մուրթքէն ցած եկաւ ձիուց, հանեց թագաւորական շորերը, և նստաւ իրա սովոր տեղումը: Իսկ Համանը զլուխը կախ դձած ամօթով դնաց տուն:

44. ՀԱՄԱՆԻ ՄԱՆԸ: ԵՍԹ. Է.

Հասաւ ճաշի ժամանակը. թագաւորը Համանի հետ դնաց թագուհու մօտ ճաշի: Ելլէ

զուարթացաւ սեղանի վրայ թագաւ որի սիրաբ ,
 ասաց նա Նսթերին . ի՞նչ ես կամենում , խնդրի՞ք
 մինչև թագաւորոշեանս կէսը կը տամ քեզ :
 Թագաւոր , ասաց Նսթերը , եթէ դտայ շնորհք ,
 քու առաջիկ . բաշխի՛ր ինձ և իմ ազգիս կեանք .
 մենք դատապարտուած ենք և մեզ ամէնքիս կա-
 մենու մեն ոչնչացնել : Եթէ ստրուկների պէս ծա-
 խէին մեզ լռութեամբ կը չափէի արտասունքս
 և կը համբերէի , Բայց մեր թշնամին չարասիրա
 է և անողորմ . նա իր մտքումը դրել է մեզ կեան-
 քից զրկել : Թագաւոր , արժան չ'է լինել նրան քու-
 պալատումդ : Եդ դարձնել տուր հրովարտակդ , որ
 գրեցաւ Համանից Հրէից ազգը ջնջելու : Ո՞վ է
 դա բարձր ձէնով կանչեց Արտաշէսը : Համանը ,
 որ սաստիկ թշնամի է մեզ , ասաց Նսթերը :

Էն րոպէին մէկը ծառաներից մտա եկաւ թա-
 գաւորին և ասաց . ահա՛ Համանը մէկ փայտ է
 անկել աւել իր տան բակումը յիսուն կանգնանոց
 Մուրթքէին կախ անելու համար , որ թագաւորի
 կեանքը ազատեց : Թո՛ղ կախուի փայտից ինքը ,
 ասաց թագաւորը , և Համանի տեղ կալղեց
 Մուրթքէին :

45 . ԳԱՆԻԷԼԻ ՄՍԲԱՐԷՌԻՑԻՆԸ ՄԵՍՍԻԱՅԻ ԳՍԼՈՒ

ՀՍ.ՄԱՐ : Գ.ան . Թ .

Աչինչ բան չ'էր ուրախացնում Գանիէի սիր-
 ար : Երեմիա մարգարէն զուշակել էր՝ թէ Յու-

դայի ժողովուրդը եօթանասուն տարի պիտի մը-
նայ գերութեան մէջ, և թէ Երուսաղէմը աւե-
րակ կը մնայ մինչև Բաբելոնի թագաւորութեան
կործանուելը: Արանումէր եօթանասուն տարին,
բայց Հրէայք էլի գերի էին, և Երուսաղէմը դեռ
աւերած քանդած մնումէր: Ղանիէլը խորը մը-
տածումէր՝ թէ Աստուած՝ երբ արդեօք կ'ողորմի
իր ժողովուրդին և կ'ազատի նրան գերութիւնից:
Աստուած խոստացել էր մարդկանց Փրկիչ ուղար-
կել, որ ազատի նրանց սատանայի իշխանութիւ-
նից և մեղքից: Մինչև որ Ղանիէլը էս մտած-
ման մէջ էր, և նրա սիրտը մրմնջումէր Փրկչի դա-
լու համար, Աստուած նրան մխիթարելու և
մարդկանց հաւատը հաստատելու համար՝ յայտ-
նեց Ղանիէլին, թէ Փրկիչը կ'ազատի մարդկանց
մեղքից և յաւիտենական պատժից եօթն ան-
գամ եօթանասուն — 490 — տարուց յետոյ, սկսած
Երուսաղէմի նորոգելուց:

46. ՀՐԵՒՅ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏԸ:

Բաբելոնի գերութիւնը մեծ օգուտ բերաւ Յու-
դայի ազգին: Նրանք բոլորովին թողին կռապաշ-
տութիւնը. նմանապէս նոյն գերութիւնը օգուտ
էր և Հեթանոսներին, որոնց մէջ բնակւումէին
Հրէայք: Հեթանոսները աւսնումէին Նորայէլի

Աստծու մեծամեծ դործքերը, սովորումէին պաշտել նրան, և լսելով Յուդայի ժողովուրդից Յիսուսի դայը, որ պէտք է դայ և ազատի նրանց մեղքից և պատժից, նրանք էլ սկսան ցանկալ նրա դալատեանը: Էսպէս սկսաւ քիչ քիչ հաւատոյ լոյսը ծագել նրանց սրտի մէջ էլ:

Հեթանոսները, որոնք ընդունում էին Յուդայի հաւատը՝ կոչուումէին նորադարձ:

47. ՀՐԷԻՑ ԱԶԳԻ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ:

ԵՐԿ. ՄՆԱԿ. ԺԶ: ԵՂԲ. Բ. Գ. Ե.

Վերջապէս Հրէից ազգի գերութեան կօթանաստուն տարին լրացաւ, ինչպէս որ Երեմիայ մարգարէն գուշակել էր: Աիւրոս Պարսից թագաւորը տիրեց Բաբելոնի և Ասորեստանի թագաւորութեանը, ուր գերի էր տարած բոլոր Իսրայէլի ազգը: Աիւրոս թագաւորը գիտէր մարգարէից գրեւածներէից, որ նրա ձեռքով պէտք է ազատէին Իսրայէլացիք գերութիւնից և կրկին պէտք է շինուէր և նորոգուէր Աստծու տաճարը և Երուսաղէմ քաղաքը: Նա իրա տիրապետութեան առաին տարինջ հրատարակեց էս հրամանը. «Աստուած, երկնի և երկրի Տէրը, որ ինձ տուաւ երկրիս բոլոր թագաւորութիւնները՝ հրամայեց ինձ իրա համար Տաճար շինել Երուսաղէմումը Իմ

Հպատակ Իսրայէլացիք թող զնան Երուսաղէմ :
 շինեն Աստծու տաճարը և նորոգեն Երուսաղէմ
 քաղաքը, և Աստուած ինքը գործակից կը լինի
 նրանց : Կիւրոսը հրամայեց եղ զարձնել բոլոր ոսկի
 և արծաթի անօթեղենները, որ գուրեւ զԶԷԷ էր
 Նաբուգոդոնոսոր թագաւորը Երուսաղէմի Տաճարից :

Եւ էսպէս քառասուն երկու հազար Իսրայէ-
 լացիք գաղթեցին իրանց հայրենիքը Զորաբա-
 բէլ իշխանի առաջնորդութեամբ, որ Քաւթի
 մարգարէի ցեղիցն էր, և Յեսու քահանայապետի և
 Ղևտացւոց ուղեկցութիւնով եկան բնակեցան
 Երուսաղէմումը և իրանց առաջւայ հայրենի քա-
 ղաքներումը :

Բայց ամէն բանից առաջ Յեսու Քահանայա-
 պետը իրա Ղևտացիներով և Զորաբաբէլը Յու-
 դայի և Բենիամինի ցեղի մեծամեծներով հա-
 ւաքեցան Երուսաղէմումը և շինեցին իր առա-
 ջին տեղումը սեղան, և սկսան ամէն օր զոհ բե-
 բել Աստծուն : Ի՞նչ ուրախութիւն էր նրանց
 համար արդեօք էն օրը : Ամէն մէկ զոհագոր-
 ծութիւնը նրանց միտն էր բերում Փրկչին, յոյս
 էր տալիս նրանց, որ պէտք է զայ էնպէս երջանիկ
 ժամանակ, որ ամէնքը մեղքից ազատեն և Աս-
 տծու հետ հաշուեն : Քահանայքը հնչու մի լին փողը
 և գոլարանումէին Աստծուն, և բոլոր ժողովուրդի

ուրախութեան ձայնը և սրտեռանդ արտասունքները
 խառնուումէին միասին : Մէկ տարուց յետոյ սկսան
 Տաճարի հիմքը դձել, բայց նոր Սամարացիք, ու
 ընց Ասորուց թագաւորը քշել էր էն տեղերումը
 բնակելու՝ չարախօսումէին Պարսից թագաւորի
 մօտ, որպէս թէ բերդ են շինում, որ ամրանան
 նրա դէմ. և էսպիսի զրգարտութեամբ երկար
 միջոց արգելք էին լինում, պատճառ որ իրանց
 հայրենակից համարելով Հրէից՝ և որպէս թէ
 նրանց օրէնքը պահող, կամենումէին մասնակից
 լինել Տաճարի շինութեանը : Բայց հրէայք ար-
 ժան չը համարեցին, որպէս կրօնի մէջ կասկա-
 ծաւոր և օտարազգ՝ գործակից ընդունել նրանց
 Աստուտ ասան շինութեանը : Թագաւորը քննեց
 նրանց ամբաստանութիւնը, և խափանելու տեղ՝
 մեծ օգնութիւն արաւ, և շուտով վերջացաւ Տա-
 ճարի շինութիւնը, որ կոչւում էր Զօրաբարեկեան,
 թէպէտ երբեմն Սողոմոնի էլ էր կոչւում, որով-
 հետև նոյն և նման և իսկ նոյն տեղումն էր
 շինած :

Էս պատճառաւ առաջ եկաւ էս երկու ազգի
 մէջ մէկ հերձուած (բաժանմունք) և մշտնջե-
 նաւոր թշնամութիւն միմեանց հետ : Սամարա-
 ցիք էլ բարկացած Սիւքեմումը շինեցին տաճար,
 որով բաժանուեցաւ Աստուտ եկեղեցին երկու՝ ճրշ-

մարիտ և սուտ, սուտը՝ մնաց Սամարիա մայրաքաղաքի վիճակում — Սիւքէմումը իսկ ճշմարիտը երուսաղէմումը:

Նոր տաճարը հենց էս զանազանութիւնը ունէր . առաջինը՝ որ տաճարի դռան մօտ շինած էր մէկ աւազան, որի մէջ լուանումէին զոհերը ընծայ բերելուց առաջ և կոչւումէր Պրոպատիկէ: Հրէայք տեսնումէին, որ էս աւազանի ջուրը տարին միանգամ խառնւումէր և բժշկելու զօրութիւնն էր ստանում, մինչև անգամ էնպիսի հիւանդութիւնից էին բժշկւում, որից մարդիկ չէին կարանում բժշկել:

Բայց էն ջուրը ամէն հիւանդին չէր բժշկում, այլ միայն նրան, ով որ առաջ մտնումէր ջուրը խառնելուց, որ տարին միանգամ էր պատահում: Էստուրից Հրէայք հասկացան, որ էն ջուրը տարին միանգամ է զօրութիւն ստանում, և ասումէին՝ թէ Աստուած տարին մէկ անգամ ուղարկում է իր հրեշտակին, և բժշկութեան ուժ է տալիս էն ջրին: Էս բժշկութիւնը ապացոյց էր, թէ Աստուած ողորմում է Յուդայի ազգին և օգնում է նրանց: Բայցի սրանից մարմնաւոր հիւանդութիւններով յիշեցնումէր նրանց իրանց մեղքերը, որի համար էլ որ կրումէին էն հիւանդութիւնները, և թէ ոչ միայն զոհի արիւնա-

Խառն ջրով պէտք է բժշկուէին հոգևոր հիւանդու-
թիւններից — մեղքից, այլ Փրկչի արիւնովը, էս
պատճառաւ էլ սպասում էին և ցանկանում նրա
շուտով դադատեանը :

Երկրորդ՝ հինգ ծածկոց կար շինած աղքատ
հիւանդների համար, որ կոչուումէր դժասրտու-
թեան տուն — Բեթեղդա : Երրորդ՝ հին Տա-
ճարումը միայն հրէայք պէտք է լինէին, և մէկ
գաւիթ ունէր միայն Հրէից համար : Բայց որով-
հետև Բաբելոնի գերութեան ժամանակը շատ
կռապաշտներ հաւատացին ճշմարիտ Աստծուն և
Մովսիսական օրէնքն ընդունեցին, և նմանապէս
ցանկանումէին կատարել իրանց Աստուած պաշտու-
թիւնը՝ նրանց համար էլ Տաճարի մօտ շինեցին
առանձին գաւիթ, որ կոչուումէր Հեթանոսաց գա-
ւիթ : Իսկ Հեթանոսաց գաւիթը Տաճարի մօտ՝ նը-
շանակումէր, թէ Աստծու արքայութիւնը ոչ միայն
Հրէից, այլ ամէնի համար է :

48. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ ԿԱՐԻԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ :

— ԵԶՐԱՍ ԵՒ ՆԷԵՄԻ : ԵՊԻ • Ը • Թ • ՆԷԷ • Ա •

Պարսից թագաւորները Խորայէլի ազգին ամէն
ապատու թիւնները աւին իրանց օրէնքներով, և
մինչև անգամ իրանց ժողովուրդից իրանց կռապ-
վարիչներ և դատաւորներ ունենալ, միայն հարկ

էին պահանջում նրանցից : Փոքր ժամանակից անկարգութիւններ և օրինազանցութիւններ մտան Յուդայի ժողովուրդի մէջ :

Պարսից թագաւորը կամենում էր, որ ամէն բանը օրէնքով և կանոնով լինի, էս պատճառաւ ուղարկեց նա Եզրաս քահանային որ ամէնը կարգի գծի նրանց մէջ : Եզրասը եկաւ Երուսաղէմ, տեսաւ ամէնը անկարգ, և էս ամէն անկարգութիւնները առաջ էր եկած Աստծու օրէնք չը զիտննալուց : Սորվացրեց և հասկացրուց նրանց Աստծու օրէնքը . ժողովուրդը երդում արաւ և թղթով հաստատեց, Եզրասը կարգադրեց՝ թէ մեծը և թէ փոքրը Աստծու օրէնքը սովրեն, ժողովեց բոլոր սրբազան գրեանքը միասին և կազմեց մէկ մատեան՝ սուրբ գրոց ժողովածոյ, Աստծու օրէնքը սովորելու համար մէկ տան մէջ պէտք է հաւաքուէին բոլոր Հրէայքը, որ կոչուում էր ժողովարան (Սինագոգա), ուր պէտք է կատարէին իրանց հրապարակական աղօթքը, լսէին և հասկանային սուրբ գիրքը : Արդացողները և օրէնսգէտները ժողովարանումը գլխաւոր ուսուցիչ էին կարգած, որ Ռաբբիք (վարդապետ) էին կոչուում, և ժողովուրդը պատուում էր նրանց հօր պէս :

Ետեւ թ օրը ամէնը պէտք է հաւաքուէին ժողովարանումը, ով պակասում էր ժողովարանից՝ մէր -

ԺԼՈԼՄԵՐԺՈՂՈՒԼՐԴԻԿ: Ս՝մէն ժողովարանի մօտ կային
 էլի ուրիշ առանձին տուն-ուսումնարան և գրքա-
 տուն, նմանապէս ամէն գիւղումը մի և նոյնը: Իս-
 տուրով հաստատուեցաւ ժողովարանի մէջ ճշմարիտ
 հաւատքը, լուսաւորութիւնը և Ստուածապաշ-
 տութիւնը: Բայց հարեան թշնամիքը-Սամարացիք
 շատ անգամ խանդարումէին նրանց բարեկա, գու-
 թիւնները, գրկումէին և հալածումէին Յուդայի
 ժողովուրդին, սրանք չէին կարողանում իրանց
 պաշտպանել նրանց հարստահարութենից, պատ-
 ճառ որ ամրացած չէին քաղաքները, և ոչ էլ
 հրաման ունէին քաղաքի պատերը շինելու:

Պարսից թագաւորի մօտ մէկ հրեայ կար նե-
 եմի անուն, թագաւորի տակառուպետ. սա լսե-
 լով իր ազգի նեղութիւնը՝ թագաւորից հրաման ա-
 ռաւ դնաց, շինեց Երուսաղէմի պատը: Թէպէտ Սա-
 մարացիք արգելումէին, բայց չը յաջողեցաւ նրանց:

Ս. յնուհետեւ ապահով էին Նորայէլացիք, բայց
 չէին մտնանում իրանց թշնամութիւնն ու ա-
 տելութիւնը Սամարացւոյ հետ. չիմացան նե-
 ղողամիտ շինել թշնամուն, ատեցին նրանց, մեղք
 էին համարում Սամարացւոյ հետ հաղորդակ-
 ցութիւն անելը. շուն էին կոչում նրանց. մէկ
 մէկու տուն չէին մտնում, և մինչև անգամ ջուր
 չէին խմում Սամարացւոյ ձեռքից:

49 . ՅՈՒԴԱՅԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԻԻՆԸ :

ՆԷԵ • ԺԱ • ԺԳ •

Յուդայի ազգը պարսից թագաւորների իշխանութեան տակ կառավարուեալին Քաջանայապետները : Քաջանայապետը լինումէր միշտ մէկ և ընտրւումէր Դաւթի ցեղից : Բայց Քաջանայապետը ինքը չ'էր կարող քննել և վճռել Յուդայի գործերը . նրանց համար կարգւեցան օգնականներ — դատաւորներ : Ամէն քաղաքումը հիմնեցին դատաստանատաներ , ուր նստումէին գործերը քննելու և վճռելու քաղաքի բնակիչներից մի և քանի ծերերը : Իսկ մայրաքաղաքումը կարգած էր ծայրագոյն իրաւարան եօթանասուն և երկու անդամներից կազմւած : Գլխաւոր դատաստանատան կառավարիչը՝ կամ ժողովի իշխանն էր Քաջանայապետը : Իսկ միւս անդամները ջոկւումէին քաջանաներից և ժողովուրդի ծերերից : Էս դատաստանատաները կոչւում էին Սիւնհողոս, ծերակոյտ, քաղաքներիներ՝ փոքր, իսկ Երուսաղէմինը՝ մեծ : Սիւնհողոսը քննումէր Յուդայի բոլոր գործերը , վերջացնումէր նրանց վէճերը , վճռահատումէր դատատանը , և օրէնքով դատապարտում էր յանցաւորներին : —

50 . ՄԱՂԱՔԻԱ ՄՈՐԳԱՐԷՆ : Մաղ . Ա . Գ .

Էն ժամանակը , երբ Յուդայի ազգի մըջ եկեղեցական ու քաղաքական կարգ ու կանոնները մը-

տան, Աստուած ուղարկեց նրանց Մաղաքիա մարգարէին : Նա սկսաւ նրանց սպառնալիքներով քարոզել, խրատել նրանց, ո՛չ թէ կռապաշտութեան համար, պատճառ որ թողել էին նրանք կռապաշտութիւնը, Բաբելոնի գերութիւնը մոռացնել էր տւել նրանց կռապաշտութիւնը. էն գերութիւնը և սաստիկ հալածանքները ճանաչել տւին նրանց ճշմարիտ Աստուածը. այլ խիստ յանդիմանումէր նրանց էնդուր, որ նրանք արտաքուստ էին պաշտում Աստուան, դրսանց էին կատարում նրա օրէնքները, իրանց սիրտը չէին մաքրում չարութիւնից, և կարծում էին թէ միայն զոհերով կը փրկւին :

Յանդիմանելով մեղաւորներին, մխիթարումէր և նրանց, որոնք սրտով էին պաշտում Աստուան և աշխատում էին սրբել իրանց սիրտը մեղքից և չարութիւնից : Նա գուշակեց նրանց, որ Փրկչից առաջ՝ կը գայ մէկ մարդ, որ կը պատրաստի մարդկանց՝ նրան ընդունելու — կը գայ Փրկչի կարասպետը (ճանապարհ պատրաստող) : « Ահա ես կ'ուղարկեմ ասումէր Մաղաքիէն Աստու կողմից, իմ հրեշտակը իմ առաջին : Մինչև Տէրի երևիլը և մեծ օրը, ես կ'ուղարկեմ Եղիա մարգարէին, որ կը դարձնի ծնողաց սիրտը դէպի որդիբերանց և որդիբերանց սիրտը դէպի ծնողաց : Եւ Տէրը կը

զայ շուտով Տաճարը, որին պտուռ մէք դուք, և
 ուխտի հրեշտակը, որին սպասում էք դուք»:
 Մաղաքիէն կարապետին կոչեց Եղիա, ոչ թէ էն-
 դուր համար, որ նա Եղիա մարգարէն կը լինի,
 այլ նա, որ իր կեանքով և իր վարդապետու-
 թեամբ նման կը լինի Եղիային:

51 · ՅՈՒԴԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԹԱԴԱԻՈՐՆԵՐԻ

ԻՇԻՍՆՈՒԹԻՍՆ ՏԱԿ : Ա . Մակ . Ա . Բ .

Մեծ Աղէքսանդր Մակեդոնացին նուաճեց
 բոլոր Պարսից թագաւորութիւնը, նմանապէս և
 բոլոր Յուդայի ազգը և Սամարիէն: Նա ցան-
 կանալով էն ազգերի սիլտը շահել, նրանց իրա-
 ւունք տւաւ իրանց օրէնքներով վարել, իսկ բացի
 սրանից Սամարացւոց հրամայեց տաճար շինել
 Աստծուն Քարիպին լեռան վրայ և Մովսիսական
 օրէնքով կատարել իրանց աստուածապաշտութիւնը:
 Յուդայի ազգի բարեպաշտներին անհաճելի էր
 էս բանը. ով որ իրանց անուղղայ գնացից հա-
 մար պատիժ էր ստանում Քահանայապետից և
 Սիւնհոգոսից, և մերժւումն ժողովարանից՝
 վախշումն Երուսաղէմից և ապաստան էին լե-
 նում Սամարացւոց: Էստուրով աւելի սաստկա-
 ցաւ ատելութիւնը և նախանձը Յուդայի և Սա-
 մարացւոց մէջ:

Աղէքսանդր մակեդոնացին երբ մեռաւ, նրա
 թագաւորութիւնը չորս մասը բաժանուեցաւ, և
 որովհետև Յուդայի երկիրը կամ Պաղեստինը Ա-
 սորեստանի և Եգիպտոսի մէջ էր ընկած, էս պատ-
 ճառաւ. Եգիպտոսի թագաւորները անդադար վի-
 ճումէին Պաղեստինի վրայ, թէ ո՞րը նրանցից տի-
 րի էն կողմին: Պաղեստինին առաջ տիրեց Պրտ-
 ղոմէոսը, առաւ Երուսաղէմը, նուաճեց բոլոր
 Պաղեստինը և հարիւր հազար Հրէայ և Սամա-
 րացի զերի տարաւ Եգիպտոս: Բայց Պտղոմէոսը
 շատ լաւ էր վարւում ընդհանրապէս Հրէից հետ
 նրանց հաւատարմութեան համար: Լսելով թա-
 գաւորի խնամքը իրանց հայրենակցաց վրայ՝ Յու-
 դայի ազգից շատերը ինքնակամ գաղթեցին Ա-
 ղէքսանդրիա՝ Եգիպտոսի մայրաքաղաքը:

Հրէայքը երկար ժամանակ մնալով Եգիպտո-
 սումը՝ մոռացան իրանց հայրենի լեզուն, օրէնք-
 ները և սուրբ գիրքը: Փիղադելիոս Պտղոմէոս
 Եգիպտոսի թագաւորը՝ հարկաւոր համարեց Հը-
 րէից գրքերը փոխել Յունաց լեզու: Բացի սրա-
 նից, նա ժողովեց շատ տեսակ գրքեր և գրա-
 տուն կազմեց իր մօտ: Հրէից ծերերից և կար-
 դացողներից թարգմանիչներ հրաւիրեց և եօթա-
 նասուն ու երկու հոգի թարգմանեցին սուրբ գիր-
 քը Հրէից լեզուից Յունաց լեզու: Էս թարգմա-

նութիւնը կոչուով Եօթանասնից թարգմանու-
թիւն . սրանով ըիչ քիչ տարածեցաւ Հեթա-
նոսաց մէջ ճշմարիտ հաւատքը և Աստուածա-
ծանօթութիւնը , և էն ժամանակից շատերը Յոյն
և Հռոմայեցի հեթանոսներից կարդալով սուրբ
գիրքը՝ հաւատացին և սկսան զոհ բերել Աստուծոն
Երուսաղէմի տաճարումը և անհամբեր սրտով
սպասել Մեսիայի գալստեանը :

52. ՀՐԷԱՅՔ ԱՍՈՐԻՈՅ ԹԱԳԱԻՈՐՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ :

Յուդայի ազգը երկար չմնաց Եգիպտոսի թա-
գաւորների ձեռին : Անտիոքոս Ասորւոց թագա-
ւորը խլեց Եգիպտոսից Յուդայի ազգը և նուա-
ճեց իր իշխանութեան տակ : Նոր թագաւորի
ձեռին Հրէայ ք սկիզբը խաղաղէին : Անտիոքոս մեծը
թոյլ տաւ նրանց պահել իրանց օրէնքները և
սովորութիւնները , և հրամայեց մինչև անգամ
գանձարանից հոգալ զոհագործութեան բոլոր հար-
կաւոր պիտոյքը Երուսաղէմի Տաճարի համար :
Կառավարութիւնը շարունակուով ֆահանայա-
պեաների ձեռքով , միայն հարկէին տալիս Ասո-
րւոց թագաւորին :

53 . ԱՆՏԻՈՒԲՈՍ ԵՊԻՓԱՆՈՍ . ԵՒ ՄԱԿԱՐԱՅԵՅԻՔ : Ա . Մակ . Ա .

Հրէից հանգստութիւնը և խաղաղ կեանքը
երկար չը տևեց : Ասորւոց թագաւորութանը տի-

րեց միւս Անտիոքոս երևելին, յունարէն Նպի-
 փանը: Սա կամեցաւ որ իր տէրութիւնումը ոչ-
 ինչ զանազանութիւն չը լինի իրա հպատակների
 մէջ, ո՛չ լեզուով, ո՛չ հագուստով և ո՛չ սովորու-
 թիւնով: Սա սաստիկ հրաման հանեց Հրէից ազ-
 գին, որ էլ զո՛հ չը բերեն Տաճարումը, տօները
 և շաբաթ օրերը փոխեն, առանձին սեղաններ շինեն
 անտառներումը և կռքատներումը, մատաղ բերեն
 էն կենդանիքից, որից չ'են զզոււմ հեթանոսները.
 մէկ խօսքով թողնել իրանց օրէնքը, վարքը և
 հայրենական սովորութիւնները: Էս հրամանի հետ
 ուղարկեց նա Յունաց փիլիսոփաներից (խմաստա-
 սէրներից) մէկին, սորվացնել նրանց հեթանոսա-
 կան կրօնը և Նրուսաղէմի Տաճարը ԶԼԵԽՍԻ կրո-
 քատուն դարձնել, իսկ էն Յուդայի ժողովրդոց,
 որոնք չ'են լսի, և կամ չ'են հնազանդի նրա հը-
 րամանին՝ սաստիկ հալածել և սպանել:

54. ՅՈՒԴԱՅԻ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԸ: Բ. Մակ. 2.

Յուդայք արդեօք ի՞նչպէս ընդունեցին Նպի-
 փանու հրամանը: Էս ժողովուրդից շատելի սըր-
 տին տիրել էր օտարասիրութիւնը. շատերը հա-
 մոզած էին Յունաց սովորութեան, վարքին, և
 բարքին, և արհամարհումէին իրանց հայրենա-
 կանը: Մանաւանդ աւելի Սաղուկեցիք, որ միայն էս

կեանքն էին ընդունում և էս կեանքի վայելչու-
 թիւնն էին պտուում, սկսան ոչ միայն իրանց նա-
 խնական հազուսաները փոխել, այլ և նրանց կուռ-
 քերին էլ զոհ բերել: Եւ Մովսէսի օրէնքն էլ էն
 պատճառաւ էին աւելի պահում, որ էս աշխարհ-
 քումս միայն երջանիկ ապրեն: Եւ որովհետեւ
 Մովսէսի օրէնք կատարելը էս կեանքումս չար-
 չարանք և նեղութիւն էր կրել տալիս, իսկ թա-
 վաւորի հրաման կատարելը աշխարհքիս երկրա-
 ւոր բարութիւններն էր խոստանում՝ շատերը ըն-
 դունեցին արքունի հրամանը: Սրանցից առաջ
 եկաւ ժողովուրդի մէջ ուրացողների ժողով-
 ընկերութիւն: Եւ հետ զհետէ բազմանում էր
 նրանց թիւը: Էս պատճառաւ նրանք անար-
 գւած և ատելի էին Յուդայի ժողովուրդին:
 Շատերն էլ նրանցից փոքրոգութեամբ, երբ սկսան
 հաւատացեալներին հալածել և սպանել, ա-
 հից ու մահից քաշելով ակամայ ուրացան ի-
 րանց օրէնքին: Բայց էլան էնպիսի հաւատա-
 ըիմ և հաստատուն մարդիկ, որ մահը առաւել
 լաւ համարեցին, քան թէ իրանց հաւատին, օր-
 էնքին և համոզմունքին ուրանալ: Սրանցից մեծ
 մասը փարիսեցիք էին, որ հաւատում էին հան-
 դերձեալ կեանքը և մեռելոց յարութիւնը:

Հրէից մէջ անուանին բարեպաշտութեամբ ծե-

բունի Եղիազարը, որ ազգային երևելի ուսուցիչներից մէկն էր, և սիրելի ամէնին, որին կրօնապաշտ դարձնելը Յունաց համար մեծ պարծանք էր, և որի օրինակին շատերը կը հետևէին, տարան իրանց կռքատան սեղանի մօտ և ստիպումէին խողի միս ուտել, որնոր օրէնքով նրանց արգելած էր, բայց նա մահ յանձն առաւ քաջ անուամբ, քան թէ վատ անուն տտանալ իր ընկերներից: Նրա ծանօթները առանձին յորդորումէին երեսանց միայն յանձն առնել թագաւորի հրամանը, որ լուծելի նրա կարծիքը և ազատելի մահից: Իսկ նա պատասխան էր տալիս նրանց, արժան և պատշաճ չէ իմ հասակիս ծերութեանը՝ կեղծաւորութիւնը խառնել սրբութեան հետ: Ծատերը ծուռը աչքով մտիկ անն և կարծիքով ասեն՝ թէ Եղիազար իննսուն տարեկան ծերը, գերեզմանի դուռը հասած հեթանոս դարձաւ. նրանք էլ իմ պատճառաւ գայթակղւին, խղճմտանքիս տանջանք ու կեղտ անուն թողնեմ աշխարհքումս:

Քաջութիւնով կերթամ էս աշխարհքից, որ արժանի երևամ իմ ծերութեանս, և բարի օրինակ թողնեմ երիտասարդներին: Էս որ ասաց իսկոյն սպանեցին:

55. ԵՅԹՆ ԵՂԲԱՐԳ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՅՐ ՇԱՄՈՒՆԷՆ : Բ. Մակ. Է.

Եօթն եղբարք բերին իրան Եպիփանի մօտ և նա ինքը ստիպումէր ուտել էն կերակուրները, որ արդեւած էին Մովսէսի օրէնքով: Բայց նրանք յանձն չ'առան և էս պատճառաւ սկսան ծեծել նրանց եղի ջղերից հուսած խարազանով (մաթրախ): Իսկ նրանք մի և նոյն ժամանակը ստում էին մէկ մէկու մխիթարելով: «Քաջութեամբ մեռնենք, հողի և անուն ժառանգենք. Աստուած տեսնումէ մեր պատերազմը և մխիթարւում է իրա ծառաների մէջ: Անգութ թագաւորը սկսաւ չարաչար տանջել նրանց. մօր աչքի առաջը կորսեցին ձեռները, ոտները և լեզուները հանեցին, կաշիները քերթեցին և էրեցին կաթսայի (թաւայի) մէջ:

Մնաց եօթներորդը. Եպիփանը կարծումէր թէ մայրը կը խնայի փոքր որդուն և կը խրատի կատարել նրա կամքը: Բայց մայրը ծայր արաւ թագաւորին և սկսաւ ասել. «Իրդեակ, ողորմի՛ր ինձ, միտդ բեր, որ ինն ամիս փորումս պահեցի քեզ և երեք տարի ծծով մեծացրի և հասցրի քեզ էդ տարսը. մի զարհուրի՛ր չարագէմ դահճից, քու եղբարց պէս ընտրի՛ քեզ մահ, քան թէ էս աշխարհքիս կեանքը, և քեզ քու եղբարց հետ էն կեանքումը կ'ընդունեմ Աստու

ողորմութեամբը : Սրանից յետոյ և նա նոյն տան-
ջանքով փոխուեցաւ էս կեանքից : Նմանապէս և
էրեցին մօրը Շամունէին :

56 • ՄԱՏԱԹԻԱ, ՆՐԱ ՔԱՋՈՒԹԻԻԻԸ ԵՒ ՆՐԱ ՈՐԴԻՔԸ :

Ա • Մակ • Բ .

Էն հալածանքի ժամանակը մէկ քահանայ կար
անունը Մատաթիա, որ ունէր հինգ որդի, Յու-
դայ, Յովնաթան, Սիմէոն, Եղիազար և Յովհան-
նէս : Սա տեսաւ, որ Երուսաղէմի տաճարումը
կուռքերին են զոհ մատուցանում հեռացաւ, վնաց
իր հայրենի քաղաքը Մովղիիմ և սովրացնումէր
ժողովուրդին հաստատ մնալ հաւատքին, և ա-
մէն կերպ աշխատումէր ազատ պահել իր քա-
ղաքը կռապաշտութիւնից : Եկաւ թագաւորից
պատուիրակ, նեղում, ստիպումէր Մատաթիային
բոլոր ժողովուրդով դառնալ ճշմարիտ օրէնքից և
կուռք պաշտել՝ մեծ պարգևներ խոստանալով
նրան : Բարեպաշտ Մատաթիէն չուրացաւ ար-
դարութիւնը, շնորհունեց էն խոստմունքները և
ասաց. «Թող թագաւորութեան բոլոր ազգը լը-
սելով թագաւորին՝ դառնան իրանց հայրենի
պաշտօնից, բայց ես, իմ որդիքս և իմ եղբարքս
հաւատարիմ և հաստատ կը մնանք մեր հայրե-
նական ուխտին • քաւ լիցի, թուլանալ, թող-

նել նրա օրէնքը և կարգը : Մէկ Հրէայ իր թու-
 լասրտութիւնով խաբւեցաւ և մօտ գնաց նրանց
 սեղանի կռուքին երկրպագութիւն տալու : Մա-
 տաթիէն գիտէր, որ նա գայթակղութեան օրի-
 նակ կը լինի, հանեց սուրը և ամէնի առաջին
 սպանեց նրան, նմանապէս և արքունի պատուի-
 րակին : Մատաթիէն յայտնի ընդդիմացաւ, զի-
 նավառւեցաւ ընդդէմ թագաւորին և յանձն առաւ
 իր բոլոր կեանքը ընծայել հայրենեաց ազատութեան
 համար, որ ազատի իր հայրենիքը : Սա զօրացաւ,
 զօրք ժողովեց մի քանի հազար հոգի : Համբաւը
 հասաւ Անտիոքոսի զօրապետին, նա եկաւ զօրքով
 հասաւ Յուդայի վրայ մէկ շաբաթ օր, որ Մով-
 սէսի օրէնքով սուրբ էր Յուդայի համար և ոչինչ
 գործի չ'էին կարող ձեռ տալ նոյն օրը . նրանք
 չը պաշտպանեցին իրանց թշնամու ձեռքից և
 թոյլ աւին էն օրը կոտորել իրանցից մինչև հա-
 ղար հոգի : Մատաթիէն հասկացրուց նրանց օր-
 էնքի զօրութիւնը, որ թշնամու դէմ շաբաթ-
 օրն էլ կարելի է դուս գալ և կռիւ տալ ինչպէս
 հասարակ օրը :

Ի վերջոյ, շատ զօրք հաւաքւեցան Մատա-
 թիայի մօտ և նա բազմութիւնով առաջ գնաց
 աւերեց, քանդեց Յունաց կրօնապատուները, զօ-
 ռացաւ Իսրայէլի սահմանների վրայ և շատ սե-
 ղեր պղատեց նրանց ձեռքից :

57. ՅՈՒԴԱՅ ՄԱԿԱՐԷՆ, ԵՒ ՀՐԷԻՅ ԱԶԱՏՍԻԹԻԻՆԸ Ա ՆՏԻՈՒ
ՔՈՍԻ ԻՇԻԱՆՈՒԹԵՆԻՅ : Ա . Մակ . Գ . Ե .

Մատաթիի մահուան յետոյ ազգի կառավարութիւնը յանձն առաւ նրա որդի Յուդայ Մակարէն : Նա շատ յաղթութիւններ արաւ և Անտիոքոսի զօրավար Ապողոնիոսին սպանելով՝ շատ անգամ կտորեց, ցրուեց նրանց զօրքը : Անտիոքոսը լսելով՝ հրամայեց Ալուսիաս զօրապետին դնալ աւերել, քանդել Յուդայի երկիրը և նրանց ազգը ջնջել : Ալուսիասը ընտրեց Նիկանովրին և Գորգիասին և մեծ զօրքով ուղարկեց Իսրայելի գէմ : Յուդայ Մակարէն, որ Աստուած էր յուսացել, փոքր գունդով դուս եկաւ նրանց գէմ, նուաճեց նրանց անթիւ զօրքը և Տնացածն էլ ահից ցիր ու ցան էլած՝ եղ փախան : Կն ժամանակը Յուդայ Մակարէն մաքրեց Երուսաղէմը. Տաճարի դռները նորոգեց, սեղանը շինեց, ութ օր նաւահատիք կարգեց Տաճարի նորոգութեան տօն, և հրամայեց ամէն տարեգլխին էն ուրախութեան օրերի յիշատակը կատարել :

Երբ հեթանոսները լսեցին Երուսաղէմի նորոգւելը՝ շատ բարկացան և մտքումը դրին Իսրայելի ցեղը ջնջել բոլորովին : Տիմոթէոս Անտիոքոսի զօրավարը մեծ զօրքով դիմեց Հրէաստանի վրայ, բայց Աստուած հրաշքով ազատեց Հրէից

աղգը և թշնամիքը յաղթեցան Յուդայ Մա-
կաբէի քաջութեամբ : Անտիոքոսը լսելով իրա-
յօրավարաց անյաջողութիւնը՝ կամեցաւ քարու-
քանդ և անմարդաբնակ անել Երուսաղէմը : Բայց
Ամենաբարձրեալը էնպէս չարաչար պատժեց նրան
անտանելի ոսկրացաւով, մինչեւ անգամ վերջը մեղ-
մանալով իրա ամբարտաւանութիւնից՝ զղջացաւ և
սկսաւ ասել. « Արժան է, պէտք է հնազանդել
Աստծուն : աղաչումք, ուխտ էր դնում զեղեցիկ
զարդերով զարդարել Տաճարը, բոլոր սպասը և
Տաճարի զարդերը աւելով եղ զարձնել և Իսրա-
յելացւոց հարկից ապատել և Աստծու ամենա-
կարողութիւնը՝ ամէն տեղ քարոզել, բայց Աստ-
ուած չ'ողորմեց նրան, չընդունեց նրա զղջումը և
չարաչար մահով մեռաւ :

Նրանից յետոյ նրա որդի Անտիոքոսը թա-
գաւորեց : Սա մէկ անգամ իր Լիւսիասս զօրա-
պետի հետ եկաւ Հրէաստանի վրայ մեծ զօրքով,
բայց ամօթով մնաց Յուդայ Մակաբէի դէմ :

Պէտք է տր Սելևկեանը Հռովմ քաղաքից եկաւ
աւերեց Ասորեատանը և մտքումը դրաւ որ Հրէաս-
տանին էլ տիրապետի : Սա իր զօրքը յանձնեց
փղապետ Նիկանովրին և կարգեց Հրէաստանի կող-
մերի վրայ կուսակալ : Նմանապէս հրամայեց, որ
Յուդայ Մակաբէին սաղ սաղ բռնեն և զօրքը ցը-

ւեն չորս կողմը : Բայց Յուդայ Մակարէն, որ ամէն ժամանակ Աստուած էր յուսացել, իր սակաւաթիւ զօրքին սիրտ տալով՝ դուս եկաւ թըշնամու դէմ և նրանց զօրքից անթիւ բազմութիւն կոտորեց, որոնց մէջ գտաւ և Նիկանովին, որի գլուխը և աջ ձեռը բերին Երուսաղէմ և կախ տւին բարձր աշտարակի վրայ :

Դեմէտրը չ'իմանալով Նիկանովրի մահը, կրկին զօրքով ուղարկեց Հրէաստան Բաքիդ զօրավարին : Երբ սկսաւ պատերազմը՝ երկու կողմից էլ կոտորուումէին Յուդայ Մակարէն յաղթեցաւ նրանցից, և մնացած զօրքը ցրեցան :

58. ՅՈՎ.ՆԱԹԱՆ . ՅՈՒԴԱՅԻ ՈՐԳԻՆ : Ա . Մակ . Ը .

ԺԱ . ԺԲ .

Յուդայի տեղը Իսրայէլի առաջնորդ ընտրեցին նրա եղբօր Յովնաթանին : Սա շատ անգամ յաղթութիւն արաւ Դեմէտր թագաւորի զօրավար Բաքիդի դէմ, մինչև որ նրանց թագաւոր Աղէքսանդրոս Անախոքի որդին խաղաղութեան դաշն հաստատեց Յովնաթանի հետ : Էս Աղէքսանդրոսը զօրք ժողովեց և պատերազմ դուս եկաւ Դեմէտրի դէմ և յաղթեց նրան :

Փոքր ժամանակից յետոյ Տրիփոնը սպանեց Յովնաթանին և նրա զօրքը յաղթեցան : Սի-

մէտիւնը իր եղբօր տեղը ժառանգեց, որի առաջ-
նորդու թիւնը երկար չը տևեց և սպանւեցաւ
Պատրուկոսից : Սիմէոնի ժառանգութիւնը առաւ
Յովհաննէսը : Սա մէկ տարի կառավարեց ազգը և
մեռաւ, թողնելով ժառանգութիւնը իր Արիս-
տաբուղոս որդուն : Սա առաջինն էր, որ թա-
ղաւորի անուն ստացաւ և թագ դրաւ զլիւին :

59. ԻՍՐԱՅԷԼԱՅԻՔ ՀՈՒՎՄԱՅԻՑԻՈՅ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ
ՀԵՐՈՎԴԴԷՍ ՀՐԷԻՑ ԹԱԿԱԻՈՐԸ 4000 ԹԻԻՆ ՍՏԵՂԾԱԿՈՐ-
ԾՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ : Ա . Մակ . ԺԶ .

Արիստաբուղոսի մահուան յետոյ թագաւո-
րեց նրա որդի Աղէքսանդրը : Սա ոչինչ մեծա-
գործութիւն չարաւ, բայց ունէր երկու որդի՝
Հիւրկանոս և Անտիգոնոս անուն, որ սասաիկ վի-
ճում էին միմեանց հետ թագաւորութեան հա-
մար : Պոմպէոս Հռովմայեցւոց զօրապետը լսելով
սրանց վիճը՝ եկաւ Հրէաստան խաղաղացրեց
երկու եղբարց մէջ խռովութիւնը և Պաղես-
տինը, որ չորս մասն էր բաժնւած — Հրէաս-
տան, Սամարիա, Գալիլեայ և Պերիայ կամ երկիր
Յորդանանու նուաճեց, և էս բոլոր մասերին տիրե-
ցին Հռովմայեցիք, իսկ Հրէաստանը Յուլիոս և
յետոյ օգոստոս Վայսերաց ձեռքով Հերովդէս Ե-
դոււկացին խորամանկութեամբ ձեռքը գծեց և
հարկ էր տալիս Հռովմայեցւոց, նմանապէս և
թոյլ էր տւած նրան Հրէաստանի թագաւոր կոչել :

60. ՄԵՍԻԱՅԻ ԳԱԼՈՒ ՅՈՅԱԸ: ԾՆ . ԽԹ :

Ասածու մեծ խոստմունքը իրա ծառաներին
 և նրանց սերունդին՝ Մեսիայի գալն էր: Մեսիէն,
 ինչպէս որ մարգարէք գուշակել էին, պէտք է սրբ-
 բէր աշխարհքի մեղքը և մարդկային ազգը հաշ-
 տեցնէր Ասածու հետ, իրա անձը պատարազ բե-
 րելով՝ պէտք է նոր օրէնք հաստատէր, որ աւելի
 կատարեալ լին' ը էն օրէնքից, որ ստացան Իս-
 րայելացիք Եղիպտոսից դուս գալուց յետոյ, նա
 պէտք է յաղթէր աշխարհքին և իրա յաւիտենա-
 կան Թագաւորութիւնը հաստատէր:

Մեսիայի համար էս ամէն ասածները ինչքան
 հոգեւոր նշանակութիւն ունէր, Իսրայելացիք էն-
 քան նրան մարմնաւոր նշանակութիւն էին տա-
 լիս կարծելով թէ՛ Մեսիան աշխարհակալ Թա-
 գաւոր պէտք է լինի և Դաւիթ Թագաւորից ա-
 ւելի պէտք է զօրայնի Իսրայելի Թագաւորութիւնը:

Մարգարէների մէջ նմանապէս յայտնի նշա-
 նակուած էր Մեսիայի գալու ժամանակը: Հրէ-
 այք անդադար սպասում էին Մեսիայի մտնենա-
 լուն էն ժամանակը, երբ Հերովդէս Հոմալեց-
 ւոց ձեռքով տիրեց Իսրայելացւոց, պատճառ որ
 Յակոբ նահապետը ասել էր, որ մեսիէն պէտք է
 գայ, երբ Յուդայի ցեղից կը վերջանայ իշխանու-
 թիւնը և օտարները կը տիրեն, Մանաւանդ որ էս

ժամանակը • Դանիէլ Մարգարէի գուշակած թիւը
լրացել էր, այսինքն եօթանասուն անգամ եօթը—
490 տարին:

Էն ժամանակը, երբ Մեսիայի գալուն սպա-
սում էին, Հրէից մէջ երկու գլխաւոր բաժանումն
կար— Փարիսեցւոց և Սադուկեցւոց:

Փարիսեցիք հաւատում էին մեռելոց յարու-
թեանը, կատարում էին Մովսէսի օրէնքները, ըն-
դունում էին՝ բացի մարգարէից գրաւածներից և
բերանացի աւանդութիւնները: Բայց նրանց բո-
լոր աստուածապաշտութիւնը արտաքին կերպա-
րանք ունէր և նրանց շրթունքն էր միայն պաշ-
տում Աստծուն, իսկ նրանց սիրտը ապականւած
էր զանազան չարութիւններով: Նրանք իրանց
արդար և անմեղ էին կարծում, էն պատճա-
ռաւ նրանք չէին սպասում, որ Մեսիէն իրանց
մեղքը քաւելու համար պէտք է գայ, այլ մէկ
փառաւոր թագաւորութիւն հաստատելու էս
կեանքումը, որին արժան ժառանգներ իրանց էին
համարում: Միւս բաժանումն Սադուկեցիք էին,
որ աւելի լուսաւորւած լինելով և հետեւելով էն
ժամանակի հեթանոս Յոյներին՝ մեռելների յա-
րութեանը չէին հաւատում: Նրանք երջանկու-
թիւնը էս կեանքի բախտաւորութիւնների մէջ
էին կարծում, էն պատճառաւ միշտ մարմնաւոր

բաներին էին հետևում: Բայց Մոլսեսի օրհնօրհնները խիստ էին պահում, որ կեանքի մեջ մեկ նեղութեան և տարաբախտութեանը չը հանդիպեն:

Արովհետև նրանք միևս կեանքին չէին հաւատում, ուրեմն և Մեսիայից հոգևոր բարութիւնների անկալութիւն չունէին: Ինչպէս փարիսեցիք էլ ոմանք կարծում էին, որ Մեսիէն մեկ հզօր թագաւոր է, որ պէտք է չրէից ազատի շրջումայեցւոց իշխանութենից, երջանիկ կեանք տայ նրանց էս աշխարհքումը և զրկի հեթանոսներին ամէն բարութիւններից:

Հեթանոսները թէ և չէին ընդունում աւանդութիւնը Մեսիայի գալու համար, բայց նրանք էլ միևնոյն ժամանակը սպասում էին մի զօրաւոր օքմնու, որ իրա հետ աշխարհք բերի մարդկային անմեղութեան ոսկի դարը: Էն ժամանակը տիրել էր հեթանոսների մեջ անհաւատութիւնը և վարքի ու բարքի ապականութիւնը: Նրանք զգում էին, որ էս ապականութենից հարկաւոր է իստակւել, բայց տեսնելով որ իրանք իրանց ուժով չեն կարող ազատուել, էն պատճառաւ նրանք էլ սպասում էին մեկ էնպիսի օքմնու, որ զայ և մարդկային անմեղութեան ոսկի դարը եղ գարձնի:

Չբանիկ տալով Հրէից մէջ տիրած էն ծուռը կարծիքին՝ կային էլի բարեպաշտ մարդիկ, որոնք Մեսիայի վրայ գրեածներին հոգեոր նշանակութիւն էին տալիս: Նրանք տեսնելով թէ Աստուծոյ ժողովուրդը և թէ Հեթաոտները մարմնական զգայութեանց են հետեւում, տեսնելով, որ հոգեոր կատարելութիւնը և բարոյականութիւնը բոլորովին բարձուել էր, էն պատճառաւ նրանք ուղղապէս կարծում էին, որ Մեսիէն պէտք է մարդուս հոգեոր բարիք տայ և բարոյական կրթութութիւն:

Էսպիտի բարեպաշտ մարդկանց մէջ նշանաւոր էին Յուդայի ցեղից և Քաւթի անից Յովակիմը և Աննէն, որոնք բնակւում էին Նազարէթ քաղաքումը. բայց անորդի և երկուսն էլ ծերացած էին:

Որովհետեւ Հրէից մէջ անորդի լինելը արհամարհանք էր համարւում, էս պատճառաւ Յովակիմը և Աննէն միշտ աղօթք էին անում Աստուծուն, որ ազատի նրանց էս արհամարհանքից, Մէկ անգամ, երբ խոստացան նրանք իրանց աղօթքի մէջ՝ որ եթէ որդի ծնւի Աստուծուն ընծային, լսեց Աստուած նրանց աղօթքը. յղացաւ Աննէն, ծնաւ մէկ աղջիկ, որի անունը դրեցին Մարիամ:

62. ՄԱՐԻԱՄ ԿՈՒՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ :

Յովակիմայ և Աննայի ուրախութիւնը անշափ էր: Նրանք գոհացան Աստծանկից և շնորհակալութեան պատարագ բերին Աստծուն: Երբ Մարիամը երեք տարեկան դարաւ՝ Յովակիմ և Աննէն յիշեցին իրանց ուխտը, և տարան նրան Տաճարը և Աստծուն ընծայեցին:

Փոքր ժամանակից մեռան նրանք. Մարիամը եօթը տարեկան էր, որ բոլորովին հեռացաւ աշխարհքից և բնակւում էր Տաճարի մօտ կուսանոցումը:

Մարիամը ուխտ էր դրել կոյս մնալ մինչև իր մահը. երբ նա տասնուչորս տարեկան դարաւ, նրա հոգաբարձուք — քահանայք կամեցան որ իրանք ազատ մնան նրա հոգատարութենից: Թէպէտ նա յայտնեց նրանց իրա խոստմունքը, բայց այնուամենայնիւ նշնեցին նրան իր ազգական ծերունի Յովսէփի հետ և յանձնեցին նրա պաշտպանութեանը: Յովսէփը ինքը խեղճ և սուրբ մարդ էր, ապրում էր հիւսնութենով և բնակւում էր Մարիամի հետ միասին Գալիլեայի Նազարէթ քաղաքումը:

Մարիամ կոյսը սուրբ էր և անարատ և հընազանդ միշտ Աստծու կամքին, նա ամենընտիր և արժանաւոր գտնւեցաւ կանանց մէջ Փրկչին

թարան լինելու և Աստուածամայր ընտրելու :
 Արդէն պէտք է դար Տէրը , Աստու Միածին որ-
 դին , որ յաւիտենից առաջ ծնուած է Հօր Աստ-
 ծանից , ինչպէս լոյսը ծնւում է լուսից : Պէտք է դար
 Աստու Արդին , ճշմարիտ Աստուածը , ճշմարիտ
 Աստծանից ծնած , որ ինքը չ'է ստեղծած , այլ
 նա է ստեղծել ամէն բանը : Եւտով պէտք է դար
 աշխարհքի Փրկիչը , որ յայտնէր ամենին Աստու
 կանքը , իր անձը պատարագ բերելով մեղաւոր-
 ների համար՝ երկրիս վրայ հաստատէր երկնա-
 յին թագաւորութիւնը : Նա պէտք է Մարգարէ ,
 Քահանայապետ , և թագաւոր կարգւէր և մարդ-
 կային ազգի համար՝ Քրիստոս — Օծեալ , Յիսուս —
 Փրկիչ լինէր , որով և ազատէր ամենին մեղքից
 և յաւիտենական մահից :

Վ Ե Ր Զ :



Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ս Խ Ա Լ Ա Ն Ք :

Երևս.	տող.	սխալ.	ուղղիղ.
		աքաբի. մսխայի. ա.	աքաաբի. մեսխայի. նա.
4.	3.	տանջու մեն	տանջու մեն .
19.	21.	կանչե.	կանչեց .
20.	22.	արուեստներ.	արուեստներ :
23.	2.	ուռցքներով	ուռուցքներով :
24.	2.	որ որ	որ .
28.	2.	կատարիք	կատարիք .
38.	13.	Երիբով	Երիբով ,
45.	4.	պատերազմ	պատերազմ .
47.	1.	պատճառաւ	պատճառաւ
—	10.	Յեսեայ	Կիսիի .
48.	2.	նրանց,	նրա .
51.	5.	հաղարներին	հաղարին
56.	19.	քննել էր	քննել էր
66.	15.	Երուսաղէմը	Երուսաղէմը
68.	24.	քու մերի	քու բլերի
70.	3.	մարդարէի	մարդարէի
79.	13.	նաբուզոզոնն .	նաբուզոզոնուոր
84.	24.	ախրումէ	ախրումէր
93.	12.	Երեմիայ	Երեմիա
—	21.	առաջին տարինջ	առաջին տարին
100.	11.	մի սքանի	մի քանի .
115.	4.	սրբէր	սրբէր

1559

1559 1559

